


Վահրամ Մարտիրոսյան  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



[www.ընագիր5.am](http://www.ընագիր5.am)  
Ժամանակակից հայ գրականության հավաքներն ընթացողի համար

ԵՐԵՎԱՆ 2003

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 3  
ՓԾՐԱՆՔ 45

ԲՆԱԳԻՐ 5-ի հրադարակումը հովանավորել է ՀՀ-ում ԱՄՍ դեսպանատան հասարակայնության հետ կաղերի բաժինը:

# ԱՌԱՋԻՆ ՄՎՍ

‘Կուրվա, կուրվա’, - հային եցի ես՝ մեծ դժվարությամբ դուրս քաշելով Հայաստանից հետո քերած, խղճալու չափ փոքր ջեռուցիչը՝ ‘կիսախտինիկը’, լոգարանի հայելուն կից պահարանի՝ ածելիների համար նախատեսված վարդակից՝ միակ տեղից, ուր կարող էի օտար էլեկտրուական սարք միացնել, որի պատճառով ‘Նեսկաֆեի’ ամանն ու թեյի գրալը հայտնվել էին ատամ մաքրելու պարագաների ու միանգամյա օգտագործման ‘Ժիլետի’ կողքին: Եվրոպական մի շաբթ երկրներում խիստ գործածական ‘կուրվա’ բառը հայերեն՝ ‘ռոզին’, ‘պոռնիկին’ է համարժեք, որեմն, ինչքան պետք է համը համեր որևէ մեկը 2-3 օրում, որ սուրճ սարքելուց բարձր հային՝ պատկերացնելով նաև առաջիկա ներկայացումը, երբ ձեռքերդ վառելով մեծ բաժակը կտանես հավաքարահ, բայց իրեն բաժին չես հանի: Զեռուցիչի հետ կապված վտանգավոր աճպարարությունից (եռման ջրի բաժակը կարող էի շուտ տալ վրաս, եթե ձեռքս բավով ետ գար), որի շնորհիվ օրը մի անգամ մեծ բաժին սուրճ էի խսում ոչ ռեստորանային գներով, միտք բռավ ճամփեցրի բուֆետը, որտեղ նախորդ երեկոյան փակել էի իմ ու 2 իտալուիհիների խմիչքի հաշիվը, ինչն ինձ երկրորդ անգամ վերջին շաբարում ստիպել էր գոջալ առատաձեռնորդյանս համար, որն իմ վիճակում եղող մարդուն խստորեն արգելված էր \*-իայի պես երկրում, ուր ծորակի ջուրը խմելու չէր, խանութից կամ սրճարանում ամեն օրվա գնածն էլ գումարվում - ահազին փող էր դաշնում:

Միայն թե այս ափսոսանքս շատ ավելի դառն էր, որովհետև նախորդ անգամ խոսքն ընդամենը մի հարրած ամերիկացու էր վերաբերում, որն ինձ գրով մի քանի գալաք գարեցուր էր պատվել, որի վոխսատուցումն իր ծնողներին պատկանող ‘Ո-որերտ-այլն’ կոչվող կղզու փառաբանությունը լսելու պարտադրանքն էր, որը, սակայն, ոչ միայն չկասեցվեց հարևան ռեստորանում, ուր արդեն ես էի իրեն հյուրասիրում, այլև հայրենի կղզու հանդեպ կիրքն արտահայտվեց՝ նրա անունն անքիվ անգամներ տարրեր թրեթրի վրա նկարելով, ապա գրպանից հանդելով ու սեղանի վրա ջարդելով միզուցել հենց այդ նպատակի համար նախատեսված միանգամյա օգտագործման գրիչների խուրձը, որոնց հաջորդեց դիմացս դրվագ իմ բանկանոցը, որն անասունը փշացրեց: Թեև անմիջապես ներողություն խնդրեց, բայց թե դա էլ քրիցս բերեց՝ իրը չիիշելով, թե որ երկրից եմ ու հարցնելով՝ արդյո՞ք պարսիկ, ավելի ճիշտ՝ իրանցի չե՞ն, ես արդեն պատասխանում էի. եթե դա է ուզում լսել՝ եմ, երբ տուե՝ իրը պատահարար, որից հետո ես արհամարհարար փողը սեղանին շարտեցի-հեռացա, որքան ել մի շվեր տղա նախորդ ռեստորանում հասկացրել էր, որ ինձ պարտավորված զգամ դրա հյուրասիրությունից՝ իր մշտական վիճակն է, ինչ որ տեսնում եմ:

Այս մի ափսոսանքս ուրիշ էր, քանի որ ծախսից ավելի (այս երկրում ընդունված չէ իրար հյուրասիրել. նշանակություն չունի նաև, որ դիմացին կին է, դու՝ տղամարդ), զղում էի անձնազոհության համար. 2 օր շարունակ մատներս (աշխատանքային գործիքներս) խաչելով, ամառային բարակ գլխարկովս բռնած մեծ ապակյա բաժակ տաք ‘Նեսկաֆե’ էի տարեկ հավաքույթի սրահ և շալվարիս գրպանից հանդելով ‘Վերնիսամի’ փոքր կավե գավաք՝ սուրճը կիսել խտապուհու հետ, այսինքն... ցուցադրել մեր կապն ու մեկընդհշտ փակել ուրիշ աղջիկների հետ մտերմություն հաստատելու ճանապարհը, որոնցից մի քանիսն արտաքինով որ հաստատ գերազանցում էին իրեն:

Ինչ վերաբերում է իր պահվածքին, ապա մեր ծանորության առաջին խկրոպեմերից՝ մերձարարաքային գնացքից, որը մեզ մայրաքաղաքից հասցրեց Լրագրողների ստեղծագործական տուն (այն կրում էր ‘Սիլվոր-քլար’ ցուցանակը), ուր տեղի էր ունենալու \*-երենից գեղարվեստական բարգմանիների միջազգային կոնֆերանսը, որ իրենք կոչում էին Ծամբար, գովարանում էր իմ հումորը, որը հազվագյուտ մի քան էր համարում մեզ

հյուրընկալած երկրում, ամրողց ցերեկն է, որ ազատ էինք (առավտոյան ժամը 11-ին արդեն յուրաքանչյուր 4-5 հոգիս մի տնակ ընտրել-պրծել էր, մինչեռ օրվա ծրագրի միակ կետը ազդարարում էր, թե՝ 16.00-ին մեր ‘Ժամանումն’ է), անընդհատ շուրջընդուրս էր: Այդպես շարունակվեց մինչև գիշեր՝ մինչև հարբեցողության վերջնագիծը, որին հասավ միայն երեք մարդ՝ ես, ինքն ու վիենացի Զարան՝ ծագումով \*-ացի, որը ոչ միայն օձի լեզու էր թափում՝ անխտիր բոլոր աղջիկներին կապելու փորձեր անելով, այլև ուշ ժամին քաշով մեկ ուսկի արժեցող ալվիրող հոսեցնում նրանց բաժանումը: Զարան 50-ն անց էր, փորով, քրով ու երկար բեղերով, իտալացի աղջիկը (‘աղջիկ-աղջիկ’ եմ ասում՝ արդեն 30 տարեկան էր) ճշտեց, որ նա 56-ի մեջ է, մինչեռ ես 43 եւ չկայի / առանց փորի, ‘արվեստագետի’ տիպ), առանց ամորիսածության նշույլի բարձրաձայն հաշվեց, որ 13 տարի շահել եմ մյուսից, և ինչ-որ գիրը փնտրելու պատրվակով քարշ տվեց ինձ մեր բացօրյա սեղանին նայող ըմբերցարանի տնակը, որտեղ դեռ նախքան լույսը համացցնելը (վիենացին կարող էր պատուհանից տեսնել՝ նրան իրամեց չէինք տվել) արեցինք համարյա ամեն ինչ՝ զգուշանալով միայն հոյսություն պատճառող վերջարանից: Իր թվարանությունից վիրավորվելու փոխարեն, մինչև առավոտ 8-ը ձգված մեր սիրատածության ըմբացրում, երբ տեղամբն էր փոխեցինք մի քանի անգամ, ես իմ հերթին միջոց գտա հակառակորդիս սևացնելու, թե սրանք (\*-ացիները) կա՞ն 56 տարեկան են, կա՞ն 56 թվականի մոլագարներ, որը տգեղ քայլ էր իմ կողմից՝ 1956 թվին տեղի ունեցած իրենց ազգային խորվության մի երկրպագում է ես ի եղել տարիներ ի վեր:

Բորբոքվածությունից եկնելով՝ ամեն հայ տղամարդ, դեռ նախքան իմանալն ինչն-ինչոց է, մտքի մեջ հիմար կամ, երեւ ինքնասիրությունս չխնայեմ, ուղղակի ‘հարիֆ’ կիամարի ինձ՝ համոզված, որ ինքը երբեք չէր ընկնի նման վիճակի մեջ, այդպես դաշը չը խարվի: Բայց կարիք կա՞ ՞նարդուն դասել՝ առանց գործի եւթյան մեջ խորանալու. մեր սիրավեպը հրապարակայնացնելու իտալուհու պատրաստակամությունն այնքան ակնառու էր, որ երկմտանքի ոչ մի տեղիք չէր տալիս (չնչին վարանում ցուցաբերեց թերևս միայն իմ կողմից մտերմության ամենաառաջին նշանները ոչ այնքան արտահայտելուց, որքան չքարցնելուց անմիջապես հետո, այն էլ սա ավելի ուշ, հետահայաց բննության ժամանակ կատարված դիտարկում է, երբ արդեն գիտեի իր մինչճամբարյա ամձնական կյանքի որոշ մամրամասներ):

Օրինակ, մեր հանդիպման հաջորդ գիշերը, 3-ի կողմերը, երբ արդեն երկուս էլ օրորվում էինք հոգմածությունից, ինձ կանչեց իրենց տնակ, ուր 4 կին էր քնում 2 ննջարանում, քացեց հյուրասենյակի բազմոցը (ստացվեց մինիֆուտրոլի դաշտի շափ տեղ, ճիշտ է, չորությամբ էլ նրան զիջող), որի վրա ես մեկնվեցի լոգանք ընդունելուց հետո: Ավելին, նա իմ զալուստը նախօրոք համաձայնեցրել էր միակ արրուն տնակակցի՝ վիենուիի Իվոնին հետ, ինչ իմանալով՝ մազ էր մնացել, որ ասեի՝ իրեն էլ հրավիրի, քամի որ կիմոդերասամուհու շափ սիրուն էր, թե՞ն՝ լուր դերերի, միասեր, ասենք՝ Անոնկ Էմեի տիպի կիմոդերասամուհու: Միայն թե շոտով փառք տվեցի Աստծուն, որ զսպել էի ինձ, քանի որ Ֆրանչեսկան (էլ ինձ չեմ տանջի՝ իտալուհու անունը շտալու ցանկությունից պատմությունս շարադրելն ավելի ու ավելի բարդացնելով) լոգանքից հետո հայտնվեց մի շապիկով, որի կրծքին 5-տողանոց անզլերեն նակագրություն կար: Պնդեց, որ կարդամ: Ուր-որ է լույսը բացվելու էր. այս կողմերում ամառն ավելի վաղ է լրացնում, քան մեզ մոտ, ընթերցանության տրամադրությունս զորյի էր հավասար, երեւ շասեմ, որ մի քան էլ սակավ էր, չիաշված որ անզլերեն էլ ընդամենը ամիսուկես էի սովորել մի քանի տարի առաջ, բայց հայտարարեց, թե իր հետազա ասելիքը բխում է, այս մակագրության բովանդակությունից: Ստիպված կարդացի ամբողջը, որ պարզ, կարճ ու կտրուկ տեքստ դուրս եկավ, ինչը երկի անզլերեն մենաշնորհն է, և կոչ էր անում հրաժարվել սերսից, ծխախոտից, նարկոտիկներից, խմիչքից... ‘Եթե որևէ այլ ցանկություն չուներ’ (ավելի մանր տառերով վերջանում էր պատզամը):

Իտալուիին տեղեկացրեց, որ վերջին վերապահմանն ուշադրություն շդարձնեմ. իրենց տնակում մնալու պայմանն է, որ մեզ մարմնական վայելքներից հեռու պահենք, ինչին նա, որքան էլ որ կողքս պառկելով իր մաշկի վրա զգաց ցանկություն, հետևեց ընդիուպ մինչև այն պահը, երբ աղջիկներից 2-ն արքնացան ու բարեկրթորեն մեզ քարի առավոտ մաղրելով զնացին լոգարան, որից հետո ես էլ արանք գտա շուտ լվացվելու ու սանրվելու, որ դուրս գամ (միայն ակնցու մոռացա լվացարանի ապակուն):

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

‘Կուրիլա’ ասիր-պրծա՞ր’, - արձագանքեցի ինքս ինձ՝ հիշելով, որ խտալուին ոչ միայն անընդհատ հոհոռում էր կատակներիս վրա, փարվում էր ինձ տեղի-անտեղի, միշտ փնտրում էր հայացքս ու բռնելիս ժպտում, այլև ինչ-որ ծրագրեր զարգացնում միասին Տրասիլվանիայի \*-ական զյուղերում իր ծանրթներին այցելելու, ինչն աշնանը սովորաբար արել է մեծ ընկերախմբով, կամ համատեղ ֆիլմ նկարելու, որի մի հաջող փորձ՝ տարրեր երկրների արվեստագետների ներգրավմամբ ու մշակութային հիմնադրամների աջակցությամբ, արդեն ուներ, իմ օգնությամբ հայկական աղերսմեր, նույնիսկ արյուն էր ենթադրում հայտնարերելիք բազմաթերու պատում աղաջուր ժառանգության մեջ, 2 վեպերիս բովանդակությունը մանրանան պատմել տալուց հետո, խնդրում էր դրանք նվիրել, որ հայ ընկերուին կարդա ու քարգմանի իր համար, իսկ զրականության մասին խորհրդածումներս չզանալ իր հետ քննարկելուց, որովհետև այդպիսով ուղենիշներ են մատուցում իր սեփական տեսակետների ձևավորման համար:

(Այս պակսությունը զրում եմ Ամանորին աղջկաս նվիրած դեղին ծոցարեկորում, որն այս պահին քերքելիս աչքին ընկալ մի նշու, որն ինձ կրրեց իդակուու սարքած հստունաշվիրից ու միջքս զեկոց վերջին լուսական գործած մեղքերս, որոնց պարճառով նոյնիսկ չի ուզում Հայոսական վերադառնալ: Բայց վերիուշներին մեջ կար նաև իմ չհասկացվածությամ-չզնահապածության սրբմենությունը, որը մեծ ջերմենուանությամբ վարապետում էր այս օրաբուիհին՝ ափսոսանք հայունելով, որ զրկածքներս հասանելի չեն եվրոպական ընթերցողին մեր եզակի այրութենի քերմասմբ, որը լրեսնելով՝ բոլորը ճամբարում հիանում էին և անմիջապես էլ հարցնում, թե այնուաննայնիվ աջց չափ զրում հայոց խորհրդավոր լեզվով):

Երախտագիտությունը որոշակի դեր էր խաղում, որ ուշադրության իր ցույցերին ես համարմեր կրոստությամբ պատասխանեի, որովհետև անձնական վերջին ցնցումներից դեռ այնքան ուշքի չի եկել, որպեսզի հոգեբանորեն պատրաստ լինեի նոր ճանաչած որևէ կնոջ խկոյն որպես պաշտոնական ընկերուին ընդունել, մանավանդ որ արտաքինն այնալիսին չէր, որ սեր հարուցեր առաջին հայացքից. հասակը միշինից ցածր էր, միջինից գեր էր, ձայնը՝ կոկորդային ու խոպտ, իսկ շարժուձևը, որի կանացի չինելը միզուցե կարելի էր արդարացնել խտալական տեմպերամենտով, ինձ սևոռուն կերպով ինչ-որ մեկին էր հիշեցնում: (Բարեբախտաբար տեղը քերեցի, թե՝ ում, հակառակ դեպքում, զիտեր, քուն ու դադար չունես, մինչ չի հիշես տվյալ անձին, եթե իհարկե նմանությունը կենդանու կամ առարկայի հետ չէ: Ինձ իրավունք չվերապահելով հանդերձ քամահել այն մարդկանց սպասումները, ում հետաքրքրել է նմանության եզրը, մանավանդ որ հայաստանցիներից շատերին ծանր մարդու մասին է խոսքը՝ այս անկարևոր առիթով նրա անունը չեմ բացահայտի, պարզապես կասեմ, որ լրիվ սպիտակահեր է՝ չնայած միշին տարիքի է, չնայած սպիտակահերթությանը՝ թերևսամիտ է, որոշ ժամանակ բարձր պաշտոն է վարել, որի լըմբացքում ծեծլուսուք է սարքել մի երկու անգամ, իսկ նոյնիսկ ամենատվորական իրավիճակում այնքան աշխույժ է ու շարժուն, որ մտածում էի, թե հոգեբանության դասագրքերում սանգվիճիկի տիպը նկարագրելիս հենց սա է ծառայել որպես նախանմուշ):

Թիշտ է, Ֆրանչեսկայի կուրծքը լավճ էր՝ լիովին կանացի, փորքինչ արծվարիթ դեմքը ևս հմայքից գուրկ չէր, իսկ գանգուր, խարտյաշ մազերն ու կլոր աչքերի ուղղի հայացքը համապատասխանում էին անմիջական բնավորությամբ: Չնայած, երբ շարունակելով երկուսին մեջ նոր առնչություններ փնտրել՝ խտալուին ընդիուպ մնտեցել էր մեր ազգանունների համահունչությամբ՝ Կարապետյան-Կարարիների, Էվանսը՝ Շամբարի անգիացին, չհապաղեց սառը ջուր լցնելինքնաեռ հրապուրանքիս վրա, թե արտաքինով էլ եք նման, մանավանդ՝ եթե Ֆրանչեսկան մորուք պահի, և իրար բավական նման եք քրջում, թեև Ֆրանչեսկան որ մի քիչ մեղմ ծիծաղեր,

չեր խանգարի, կին է, չէ՞, վերջապես... ինչ խոսք, մեղմացուցիչ հանգամանք էլ կա, ախր... իտալուիի է: Սինչ իմ աչքերը բացվելուն մնացել էին հաշված ժամեր. ‘Ֆրանչեսկա.- Բոլոր իտալուիիները չեն, որ ինձ ննան են: Ես.- Այ ըստն կը նի խկական հայրենասիրությունը’ - արտահայտություններով հակահարված տվեցինք տղայի ցինկոմին (ավելի ուշ պարզվեց, որ բարձրահասակ, կարմրաքուշ, մի տեսակ կլոր ուսերով Էվանսը 29 տարեկան է):

Ով կիավատա, բող հավատա, ով չի հավատա՝ իր գործն է. այս վերջին տողերն էի գրում, երբ նկատեցի Ֆրանչեսկային, որն ինձանց մի 40-50 մ հեռու, ծառերի ստվերի տակ իր մեծ էջերով նորատետրում նույնպես ինչ-որ քան էր գրում կենտրոնացած: Պարզաբանեմ, որ նախ կարդալու, հետո գրառումներ կատարելու համար արդեն 2 օր էր, ինչ մինչաշյա 1 (12.00-1.00) և ետքաշյա 2 ժամը մեկուսանում էի պանսիոնի դիմացի լճակի ավիին, որը ունանք (ինչ մեղքս թաքցնեմ ես) ճահիճ էին կոչում պղտոր-կանաչ գույնի պատճառով, ձկնորսների համար նախատեսված տախտակամածներից մեկի վրա, որը հենասյուների շնորհիկ ջրից կես մետրի չափ բարձր էր, և հանում շապիկս, որպեսզի միաժամանակ արևառվեմ (ճամբարականների մեծամասնությունը հանգիստը գրական աշխատանքի հետ չեր խառնում և գերադասում էր հասարակությունը մենությունից, խորը լողավազանը, իր բոլոր կից հարմարություններով հանդերձ՝ անտառամեջ լճակից):

Ինձ հումից հանած մղձավաճքը Շամբարի 3-րդ գիշերն էր պատահել, և այժմ, գրելով ավելի արագ, քան երբեմ՝ կյանքումս, որպեսզի հասնեմ բուն իրադարձություններին ու այդ կերպ սիրոս թերևացնեմ, տիհաճություն զգացի, որ Ֆրանչեսկան ներխուժել է իմ թաքսոնը: Վատահ էի, որ շարադրում է տեղի ունեցածի իր տարրերակը, որն ինձ բանավոր ներկայացնելու փորձը կատեցի նախաճաշի մասուցներում (ինչին նա կարծես թե պատրաստ էր): Գուշակում էի, որ դեռ առավոտյան էր նույն այդ երկի վրա աշխատում, և ոչ քե՝ ‘90-ական թթ.-երի \*-ական պրեզիան’ գեկուցումը սղագրում, որը կարդում էր 2 մետրանոց, մորուքավոր, իհն ժամանակների ծովահենների բոլոր տվյալներով հաղթանակ մի երիտասարդ, որին նախորդ երեկոյան հեռովից մեր հավաքի կազմակերպիչների հետ տեսնելով՝ ենթադրել էի, որ տեղական դրամաշորքների ներկայացուցիչն է, և լուրջ նտահով-վեցի եվրոպական շոկայում աշխատութիւն կիրառության ողջամտության հանդեպ, երբ պարզվեց, որ գրականագետ է, որը բանախոսելիս թեմային վայել քննուշ ձայն, իսկ հակափատարկներին պատասխանելիս՝ խոնարհություն ի հայտ թերեց:

Եթեն Ֆրանչեսկան գրածն առավոտյան քննարկումից հետո ինձ հանձներ, աղքի զամբյուղն էի զցելու բոլորի աշքի առաջ, նախօրոք հարցնելով՝ կարո՞ղ եմ նամակն իմ սեփականությունը համարել... Հիմա, երբ ափից ձայն տվեց (ինչքան էլ որ իրեն տեսել էի, վեր քառ տեղից՝ համկարծակի գալու), և, առաջ զգալով (տախտակամածի ու ցամաքի կամրջակը փուած էր, մի աստիճանն էլ՝ պակաս. երևի վախեցավ, որ իր քաշին չի դիմանա), իմ կողմը մեկնեց երկու բուղը, ես մոտեցա դրամք վերցնելու, բայց չհարցրի, թե կարո՞ղ եմ նամակն արդեն իմը համարել, որ զցեի լճակը. նրա ջուրը պղտոր էր, բայց մակերեսին աղք չկար՝ անհարմար էր կեղսոտել: Չնայեցի իտալուիու երեսին, ինքն էլ ուորը կախ զցեց՝ գնաց, և ես որոշեցի, որ պարզապես նամակը չեմ կարդա, ու դա կլինի իր ամենամեծ պատիժը... Կամ էլ՝ չեմ կարդա, մինչև սանմակն չնկարագրեմ նախորդ օրվա դեպքերը, որպեսզի վրաս որևէ կերպ չագրի: (Կներեք՝ շեղվեմ առաջին անգամ կյանքում ջրային օջ լինս, այսինքն՝ ավի քարերի մեջ էր, զուցել ցամաքային էր, բայց մի նյարդային զորոր բուլուց քիչ հեռու, ու երբ հայսցրս հետք շրջեցի, օջը քվել էր՝ հասցրի նկարել միայն, որ մեծ չէր ու սև-սպիրակ էր):

Որպեսզի շուտ հասնեմ բուն գիշերային սարսափեներին, նախորդ օրվա անցուղաձը պատմում է երեկոյից, երբ ես ու Ֆրանչեսկան մի կարճ ժամանակով իրաք կորցրիմք: \*-այսի գրողի հետ ժամը 20-ի համրիպման ավարտից հետո մի քանի հոգով գնացինք մի քան խմելու մեր հանգստյան տան դարպասից քան քայլ հեռու զտնվող ճամփեղի խղճուկ բուֆետում, որը ժամը 23-ին ‘ընդիշտ’ փակվում էր, իսկ վերադարձին ես մտա ընթերցարան պարզելու, թե արդյո՞ք մեծ է. Ինտերնետի հերթը: Ճամբարի միայն 3-րդ օրը, այսինքն՝ երեկ էին 5 հատ կրնակ քերել-տեղադրել ընթերցարահում, որոնցից մեկն էր միացած Ինտերնետին, ինչը շատ քիչ էր 25 մասնակցի ու խիստ աշխատակարգի պայմաններում (ես գրողի ասմունքի պահին հանդիպեցի ընթերցարահ, բայց այն կրղաքով փակ էր, լույսն էլ մարած՝ հավանաբար որպեսզի ոչ ոք ‘պարապմոնքից’ չփախչեր): Ուուս Սաշան՝

50-ն անց, ակնոցավոր, երևի շոտլանդական մորուքի շնորհիվ թեռախույզ հիշեցնող մի մարդ, խոստացավ ու այնքան արագ վեր կացավ ինտերնետավոր համակարգչի առջևից, որ չհասցելով բաժակակիցներիս, այդ թվում և՝ Ֆրանչեսկային, ոչինչ զգուշացնել, գրադեցրի նրա տեղը: Ուրախութախ հավաքեցի [www.freenet.am](http://www.freenet.am)-ը և բացեցի փոստարկը: Նախ ստոյած նամակը կարդացի, որին, չինանալով, թե հետաքրքրական ինչ կարող եմ պատմել, պատասխանեցի, որ հերք կա թիկունքում՝ հնարավորություն չունեմ մանրամասն գրելու, բայց ճամբարից 1-2 քան նկարագրեցի, և ի վերջո իմն էլ արդեն կարգին նամակ կստացվեր, երբ, կարծես ինձ սուս դուրս չըերելու համար, Ֆրանչեսկայենց տնակի բուլղարուիհին նստեց շնչիս, թե՝ նամակս պատրաստ է, սկավառակի վրա է, մի վայրկյան կրաշ՝ ուղարկեած: Զիջեցի տեղու, բայց նա 15 րոպե չհաջողեց իր բուլղարական հասցեատուվիին միանալ: Ներողություն խնդրեց-վեր կացավ, միայն թե այդ մարդաշխավան Եվանսն անմիջապես ինձ դիմեց, որ բույլ տամ մի րոպեավ կապը միացնել իր ‘նորքրութին’, պատասխանեցի, որ արդեն գիտեմ, թե \*- իայում ինչքան է տևում 1 րոպեն՝ կես ժամ... Թեև որ խնդրում է, չեմ մերժի, ջհանդամը: Ինըն էլ հերսուեց, թե ուզածը մի քան չէր, այնուհանդեռ վիրածեց միանալ՝ գիծը զբաղված էր, 1-2 րոպեից ասաց՝ վերջ, էլ իրեն պետք չի, ես մի թերան առաջարկեցի նորից վիրածել, բայց ինքս զուգահեռարար կապս վերականգնեցի՝ հիշելով, որ նամակներիս մեջ նկատել էի Կենտրոնական Եվրոպայի Համալսարանի հետադարձ հասցեն, որը պետք է զբաղվեր \*-իայում կացության բույլտվությունը երկարացնելու գործով, քանի որ ժամկետն օրեր առաջ լրացել էր, ես օրինազանցի կարգավիճակում էի, և քանը կարող էր ավարտվել կամ նրանով, որ ինձ վտարեին երկրից, կամ անվազն, անցանկալի անձանց թվին դասեին՝ սահմանի անցնելուց ժամկետանց կնիքը նկատելով: Նամակի 3 file-ից ոչ մեկն ինձ հետաքրքրող թեմային չէր վերաբերում, Սորոսի կիմնադրած այս համալսարանի նոր դրամաշնորհների հայտարարություններ էին: Դրանց քիչումիշ ծանոքաց, 2 որիշ նամակի պատասխանեցի, որոնցից մեկի կապակցությամբ ուղեղիս միջից պետք է պեղեի ֆրանսերենը. նախորդ տարի Ռուն-Ավելում ծանոքացած աղջկեր՝ Նիմա Պեյզանն էր հանձնել բակալավրի քննությունները՝ սիրտս քար չէր, որ շնորհավորեի:

Գլխավերսա արդեն բազմարիկ ճամբարականներ էին կուտակվել, նրանց նորոտած տեսքերից մյուս նամակներս չքացեցի և զնացի տեսնելու, թե որտեղ են բուժեալ մեր ընկերախմբի անդամները շարունակում զվարճությունը: Արդեն ավանդական դարձող տեղերից մեկում՝ Ֆրանչեսկայենց տնակի առջևի սպիտակ, կլոր, ձևավոր ուորերով, վիոր, բայց ծանր մետաղի սեղանի շուրջը նա չկար: Լողավազանի մոտ հավաքվածների մեջ էլ չերևաց: (*Այս պողերը բանանանով եմ գրում, քանի որ մարմնիս նոյն մասերն արևոտ չվառելու համար, զնում-զայիս են պահպակամածի վրա, որը երերում է ուղքերիս կամ ով որ կուզենս ավելի լավ պայմենացնել վիճակը, բող հիշ՝ Անհաջողակները՝ ֆիլմի վերջին կադրերը՝ Պիեռ Ռիշարի հերոսի ու միջարդագիրոջ չափորդ աղջկա մասնակցությամբ, որոնց կամ կամակամածը «ծալվեց» ջրի վրա ու լողաց դեպի լճի կենարուն: «Իմ» կամակամածի կամ կամածի հայրութավոր ջրասարդերը, - մինչև այժմ մեն-մի հարիկ էի պեսել անցյալ կարի Հանրապետութ, մի զոյց մեծ կոշիկի շափի ջրացող ջրափոսի մակերեսին սղայիս, - բվում է անմիտ դեսուլին են ներկում, բայց ավելի ուշադիր նայելով՝ կնկարեն, որ շարժվում են քամուն հակառակ, որպեսզի արևի կամ ջշկին):*

Զգիտեմ միզելու, թե շորերս փոխելու համար մտա մեր տնակ, ձայներ էին հասնում միջանցք բացօրյա մեծ պատշգամբից, որի լոյսը վառը չէր, կարծեն աղմուկ անելով նախ զուգարան մտա, հետո դուրս եկա պատշգամբ, որ մեր հյուրին (ձայներից մեկը կանացի էր) բարենք, տեսնեմ Ֆրանչեսկան ու վիենացի 56-ամյա Զարան համարյա ծունկ-ծունկ մքան մեջ փափում են: Ակնհայտորեն շփորփեցին, Ֆրանչեսկան թե՝ խոսակցության հետաքրքիր թեմա են գտել, ես չհավատացի: Զարան կին զայրակիցներուց բացի որիշ նյութի վրա չէր չաշարվի (հետագայում տեսա, որ մեկ էլ դեկավարությանն է հաճոյանում, որն արտահայտվում էր դամ պահելով կամ խոնարի ու հարգավիր ուշադրությամբ, քանի որ ճամբարի կազմակերպիչներն իրենք քծնանքը, նոյնիսկ իրենց շուրջ կատակները չեն խրախուսում, թվում է՝ ճյուներից որևէ բանով չառանձնալու համար): Ինձ հրավիրեցին մրգօղի խմելու, քաղաքավարությունից դրդված համաձայնեցի, բայց սառնարանը բացելով մոլորվեցի՝ հանքային ջրի մի քանի մեծ շիշ կար, որոնցից մեկում պետք է տնական օդին լիներ, մինչդեռ բոլորն

Էլ փակ էին թվում: Նվաստացուցիչ թվաց մեկ առ մեկ ստուգել կափարիչները, այդ պատճառով նախօրոք վերցրած օղու լմպանակի մեջ մի բացած շից կարմիր գինի լցրի, իետ զնացի պատշզամբ, բայց նոր էի նստել՝ ինձ օտարութի զգալով, երբ մարզասենյակից, որ ուղղութեար պատշզամբի տակ էր, այնգ-պոնզի գնդակի կտկտոց առա, որը բարեկրթուրյան պաշարների վրա բացասարար ազդեց. ասացի, որ գնում եմ խաղալու: Ֆրանչեսկան ասաց, խմած է, չի կարողանա խաղալ, ես իշա, սկսեցի խաղալ Հելենի հետ՝ կանադուհու, որը լավ չէր խաղում, նաև բոլորից վատ էր խոսում \*-երեն, և ես միայն այն բանի համար էի շիվում հետով, որ մենակ չզգա իրեն՝ ինձ քոյլ շտալով ձանձրանալ այն բանից, որ հաճախ իրար չէինք հասկանում: Քիչումիչ կատակ արեցինք, լմպանակիս գինին վերջացավ, ինքը շից ‘Հոլոքեն’ էր խմում, առաջարկեց, հրաժարվեցի խառնելուց, բայց կամքի դրստրմամբ չկարողաց ներքուստ հպարտանալ, որովհետև ուշրս ուրիշ կողմ էր:

Համոզված էի, որ վիենացին իր մրգովին աննպատակ վատնողը չի, բայց եթե 2-ի մեջ ոչ մի բան չէր էլ եղել, միևնույն է, ինձ համար այնքան զգվելի էր Զարայի ու Ֆրանչեսկայի շփումը, որ ի վիճակի չէի ընկճվածությունս հաղթահարել: Երկի թե՝ վստահ, որ ես այդպես էլ մտածելու էի, շատ չանցած Ֆրանչեսկան եկավ, և կարծես ինձ օրինակ ծառայելու համար, որ անտեղի չսանդեմ, սկսեց քծելու հաճյախտսել իւելդ կանադուհուն՝ կանացի բարեմասնությունների առումով Տիրոջից անտեսված, բայց՝ ջերմ ընկեր, որն իրենից մի տարի էր փոքր՝ 29 տարեկան, իմ ամեն խոսրից էլ հոհուում էր, իբր անբռնազրոս՝ փարարվում: Հետո, իբր թե Հելենին է դիմում, ասաց, որ ինքը կուգինար Շամբարի բոլոր մասնակիցներին ճանաչել, որի լավագույն ձևը 2-ով շփվելն է: Բարձրացամբ մեր պատշզամբը, Զարան այնտեղ չէր, Ֆրանչեսկան սիրտս առնելու համար, բայց երևում էր, որ ուրիշի ապահնքն օգտագործելուն ներքուստ դիմադրելով՝ զնաց մեր ընդհանուր սառնարանից բերեց Զարայի մրգովին, խմեցինք, եկող-գնացողին էլ հյուրասիրեցինք, Հելենը բերեց մեզ ընծայազրեց իր լազերային ձայնակապառակը, որտեղ բանաստեղծություններն էր կատարում ոոք երաժշտության տակ, խնդրեցի մեզ համար կարդալ, արեց: (*Իսկ այս պողերը գրելիս նորից գենսս օչին, նկարեցի էլ թե ինչպես բարձրելից, մոլիկից երևաց, որ ու-սպիրակչէր՝ մոլիգազոյն էր, եթե նոյն օչն էր, իհարկէ: Իրիկնադեմ, արև, բայց՝ զոյ միանգամից 10-12 բաղիջամանք վրա հակառակ սակի մոյր, կամուսակոր դասակորության որընքացին դեպի կինըրոն, հեկո դանդաղեցին ու ցրվեցին:*)

Կեսզիշերն անց էր արդեն, 7-8 հոգի էինք սեղանի շուրջը, ինչ-որ մեկը ուստորանից այստեղ էր քարշ տվել ԶԲԱՂՎԱԾ Է ցուցանակը, ես ահագին տանջանքով (ստվարաթղթից էր), բարուն, որ նախօրոք հարցուվորձ շանեն ու տպավորությունը չփշանա, այն փակցիր վերնաշապիկս ձախ կողմի գրապանին, սրտիս մոտ: Շատ կատակներ արեցին ‘գրադած պրտի’ թեմայով, բովլարմերից նեկը ջանում էր ամենքրոտ պատմել, որ ուշադրություն գրավի, խտալուին, որ ինչ էլ ասում էր, մի տեսակ վիրավորվածության երանգով էր ասում, վեր կացավ, թե զիամ միզելու, ես էլ՝ տանտեր-տանտեր (4-ից մեկը, որ գրադեցնում էր այս մեծ, ի տարրերություն մյուսների՝ երկիհարկանի տնակը) հարցրի, թե արդյոք տեղը գիտի՞: Մի քիչ ճոճվում էր՝ խնդրեց ուղեկցել, հետու տարավ լոգարան, պաշաչվեցինք... Վաստ էր զորս իրեն: Սփրբնել էր: Լոգարանից դուրս եկանք միջանցք: Ուզում էի ասել, որ սառը ջրով լվացվի, բայց վախեցա՝ առաջարկս ամներանկատ լինի, մերժումը դժվարանա պատճառաբանել, բայց շուղենա օտար տեղում դեմքի շպարը լվալ: Իհարկե, վախս բավականին տարօրինակ էր, որովհետև քաված չէր:

Հարցեցի, թե սի՞՞րտն է վատ, չարձագանքեց, մի անգամ վայր էր սահում, հազիվ պահեցի: Զոյ ցոյց տալով՝ ասացի, որ կրծքին սառը ջրով քսի, այդ ժամանակ ուշադրությունս գրավեց, որ սև վերնաշապիկի կոճակներն արձակ են և տակից կրծկալ չի հագել: Դա վատ ազդեց վրաս. անմիջապես կասկածեցի, որ Զարայի հետ էլ մութ պատշզամբում արել է ամեն ինչ, որ այդ տեղում հմարավոր էր, թեն քիչ անց ինձ հաշիվ տվեցի, որ եթե սեղանի շուրջ նատած ժամանակ կոճակներն արձակ լինեին, աչքիս անպայման կրմեներ: Բայց այդ վայրկյանին շատ տիհան զգացողություններ ունեցա, չհաշված, որ հարրած մարդն ինքը վանող է (ինքս ինձ միսիթարում եմ նրանով, որ շնայած շատ եմ խմում, բայց, ըստ ընդհանուր կարծիքի, չեմ հարրում):

Միայն թե բոլոր այդ դատողություններից ավելի կարևորն իրեն օգնելու էր, նորից մտանք լոգարան, երևաց, որ սիրտը խառնում է, կրացավ լվացարանի վրա, ենթադրում էի, որ իրեն կիավարի ու շուր կզա զուգարանի կոնքը

գրկելու, ինչպես որ արևմտյան ֆիլմերի հերոսներն են անում՝ անկախ սեփից ու տարիքից, բայց բոլորովին այդ կողմը չնայեց, երբեմն-երբեմն որձկում էր, ես էլ կամաց շոյում էի մեջքը, չհամարձակվելով տրորել, բանի որ վստահ չի՝ այդ միջոցն իտալացիների օրգանիզմի վրա փսխեցնելու նոյն ներգործությունն ունի<sup>o</sup>, ինչ՝ հայերին, թե՞ ոչ:

Լոգարանից դուրս եկանք, մտանք հյուրասենյակ, համոզեցի, որ նստի բազկարռուին, ներողություն էր խնդրում, պատասխանում էի՝ ոչինչ, բան չկա: Նստեցրի, մի համրույր խնդրեց ինձնից, որը ստացավ:

Համացրի լույսը, դրւու եկա պատշաճամբ, մեր օրվա հյուր գրողը, որ չէր վերադարձել մայրաքաղաք ու մեր տնակում էր զիշերեկու, խմիչքից լալոշացած՝ խոշոր ակնոցի ետևից աշքերը չուել էր Ֆրանչեսկայենց տնակի սեւովիկ բուղարուին վրա (որևէ կողմ նայելու համար էլ ողջ իրանն էր շրջում՝ հարկ եղածից շատ ավելի), որի ձեռքն ուզում էր ամպայման բռնել: Աղջիկը չիր թողնում ու նայում էր կյուրացած աշքերով: Դեռ կարգին չի հարմարվել սեղանի մոտ, Ֆրանչեսկան եկավ հևալով, դեմքը կարմիր էր, նստեց ու ասաց, որ կյանքում երրորդ անգամ է իր հետ պատահում, որ հարրի, գրողն անմիջապես շուտ եկավ նրա կողմն ու նախատեց, թե չի կարելի: Ֆրանչեսկան նրա դեռ չիրապարակված վեալից մի հատված էր բարգմանել խտալերեն, իրար ճանաչում էին, զարմանալի չէր, որ գրողն այդպես անմիջականորեն խուսեց, զարմանալին այդ պահի բոլորովին սրափ ձայնն էր ու խստորժունը, որով մի ակնբարք առաջ ճիշտ էր հետո իրեն դիմել: Այսուհամերեքձ, նրա դիտողությունն ինձ դուր եկավ, մենք երկուս նոյնպես իրար հետ ծանոթ էինք՝ նա ինքը իիշեցրեց. Ես ամեն մի այցելության այնքան նոր գրողների հետ էի ծանորանում \*-իայում, որ ոմանց մոռանում էի: Որոշեցի ցույց տալ, որ անցած ժամանակամիջոցում (6-ից 14 տարի՝ նայած թե որ մի գալուց էինք հանդիպել) ես էլ իմ հայրենիքում եմ առաջընթաց ունեցել, գնացի կողքի սենյակ, որ գրքերս թերեմ - ցույց տամ, բայց երբ վերադարձա, նա միայն մի բուցիկ հայացք ցցեց իմ կողմը՝ նորից լալոշացել էր ուսափ բուլարուին: Արդյունքում վերջինս արագ լրեց սեղանը, գրողը նորից ճշտեց իր քննելու տերը, որ 2-րդ հարկի՝ իմ ու Սաշայի ննջարանում էր, և գնաց:

Որոշ միջոց հետո խտալուին նորից վատ զգաց, առաջարկեցի ուղեկցել իրենց տնակ, խնդրեց թույլ տալ մնալ մեզ մոտ: Եթե ուրիշ բան չիներ՝ նախորդ զիշերվա իր խիզախությամբ ինձ պարտավորեցրել էր՝ բարձրացրի վերև, շրերով պառկեցրի անկողնուս: Միսիքարելու համար մի քիչ շոյեցի: Գրողը գրբախ պես տձև փորի վրա պառկած քնած էր: Իջա պատշաճամբ, Հելենը նորից իր գրութերից կարդաց, ես էլ իր հուշելով CD-ի տուփի մեջ գտնվող տեքստերով հետևում էի, որն օգնում էր իմ քիչ անգիկնուն ու անփորձ ականջներով հասկանալիր կանադական արտասանությունը: Բանաստեղծությունները ծովի, տարերքի, բայց գլխավորապես ազատության մասին էին, ինչպատճեն որ ես չեմ ըստ ամենայնի:

Չարան էլ էր միացել մեզ, ինձ հարցրեց, թե ինչ է պատահել Ֆրանչեսկային, չկարողանալով մեղադրական շեշտից զերծ մնալ, ասացի, որ շատ վատ է, մրգողուց հարքել է: Օքմեղացավ, թե դա ծրագրված չի եղել, ես էլ շարունակեցի, թե՝ բա ի՞նչն էր ծրագրված, միայն երբ Հելենի համար գովարանում էր Վիենայում կայանալիք գրական ինչ-որ հավաք, կծեցի, թե դրանց բոլորին միայն կամա՞յք կարող են մասնակցել, բացի, իհարկե, իրենից՝ Չարայից: Հեղմեց, թե խոսքն ա ն գ լ ի ա զ ի բ զ ի ո գ ո ր ն ե ր ի մ ի ջ ա զ ա յ ի ն ի հ ա ն դ ի պ ա մ ա ն է վերաբերում, ինչպիսին որ ես չեմ ըստ ամենայնի:

Երկրորդ հարկից գուգարան իջնելուց հետո մի պահ մեզ մոտեցավ գրողը՝ մի ներքնավարտիքով, սրափ էր, մի քանի բար հետներս փոխանակելուց հետո, թե՝ զնամ: Մի քանիսը, իրենք էլ բարմանալու հույսով, թե՝ ինչի՞ ես զնում, մնա՞՛, թե՝ վերևում Ֆրանչեսկան մնանակ է: Ասի՝ զգույշ. որովհետու ի՞ն մահճակալին է պառկած: Առանց ինձ պատասխանելու բարձրացավ, ես սառնասրություն ցուցաբերեցի՝ անմիջապես շինուելով նրան, բանի որ, կարծում էի, իր ընկերոջ, այսինքն՝ իմ, ֆիզիկական ներկայությամբ չէ, որ եվրոպացի կինը պետք է պահեր իրեն հարկ եղածին պես, բայց և զգում էի, որ բոլորն աշքի պոշով նայում էին, թե ինչքան կրիմանամ:

(Վերջին պարբերությունը գրելու համար օգլուքործեցի հերքական հանդիպման սկզբի ճաշգումը. ճանապարհին իցանանան մեջ ընկնելու պարհառով ուշանում էր ակադեմիկոսը, որը պետք է վարեր կլոր սեղանը՝ վերջին պարիների սանմանից ակավորի \*-ական վեսպի 7 բարգմանիշների մասնակցությամբ: Մողեցավ ինձ լուսանկարեց

Ֆրանչեսկան, հարցրեց, թէ ի՞նչ եմ անում. վե՞պ եմ զրում, ‘ասելք-թէ’-ի դիպի մի բան ծամօնեցի, նարեց կողքին, Հեղենը եկալ մյուս կողմն նարեց, ևս Ֆրանչեսկան իր բարեւորությունից իւղղվելով ակսեց կանարուին սիսալներն ուղղել ինչը միշտ կարելի էր անել, որովհենով Հեղենն այսպիս էր խոսում\*-երեն՝ ‘Դու Երևանո՞ն է սապրում’, հերո անցալ գրեղում քերականական ամրող կանոններ սովորեցնելուն):

Տեսա, որ երկար չեմ կարողանա անվրդով եվրոպացի խաղալ, ասացի՝ բոլորիդ բարի գիշեր, զնում եմ քնելու:

Հատուկ չէի աղմկում բարձրանալիս, բայց ասել, որ աշխատում էի անշշուկ քայլել, բոլորովին ճիշտ չեր լինի, մանականո որ աստիճաններից մի քանիսն անաստված ճռնչում էին: Ննջարանի դուռն էլ սովորականի պես բացեցի, ինչին արդեն ներսում ուժեղ շարժում հետևեց: Լուսնի լույսի տակ նշմարեցի, որ գրողը իմ մահճակալին է, այդ պահին եզրին էր նստած, ներքնավարտիքով, Ֆրանչեսկան շորերով պառկած էր: Հոստ էր զալիս սենյակից, ուժեղ հոստ: Սերմնահեղուկի: Զօվելի էր, զարշելի, նման չէր, չ` ոչ մի համեմատորյուն իմ սերմնահեղուկի հոսդի հետ: Գրողը հավաշտապ վեր կացավ, տեղափոխվեց իր մահճակալին: ‘Չե, շտապելու կարիք չկա, - ասացի ես ու մտածեցի՝ սրանք ով զիտի իրար հետ ինչ կապ են ունեցել մինչև հիմա, - 3-ով ել վատ չի լինի’: Գրողի ծառունը դրւս չեկավ, ես շորերով պառկեցի մահճակալիս, այնպես որ Ֆրանչեսկային չկպչեմ (մահճակալի լայնությունը քույլ տալիս էր), անշարժ, միայն զլուխս մի քիչ դեպի հակառակ կողմ թեքեցի, որ հանգիստ ինքս ինձ հանձնեմ զգվանքին, որով համակված էի ոտքից զլուխ: Բնարուիին հևում էր, ինձ թվաց շալվարի կոճակներն արձակված են, բայց առանց իր կողմը շրջվելու չի կարող ստույգ ասել: Ակսեց կամաց շոյել ինձ, բայց վայրկյաններ անց, թես իրեն էլիմ դեմքի արտահայտորյունը չեր երևա, վեր կացավ ու զնաց:

# ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

«Կարծում եմ, որ շատ վաստ վարվեցիր ինձ հետ. այսպես պատժել ինձ, նախքան որևէ հնարավորություն ընձեռելը որևէ բառ արտաքերելու որպես արդարացում՝ չափազանց անարգ, մանկամիտ ու բռնադատիչ գործելառն է:

Կարող եմ քեզ հասկանալ, հնարավոր է, որ համանման վիճակում ես ել նոյն կերպ արձագանքեի, բայց մշտապես պետք է կարողանալ որոշ ժամանակ անց ամեն ինչ զետեղել իր համապատասխան արժեքի շրջանակում: Այդ է պահանջում հավասարակշիռ կյանքը և բարձր մարդկային հոգեկան մակարդակի վարքը:

Խիստ մաքուր է խիղճս, և երեկ ՏԵՂԻ ԶԻ ՈՒՆԵՑԵԼ ՈՉԻՆՉ, այնպես հասկանալով եղածը, որ անակնկալորեն հարթեցի (մի ըմպանակ ‘Ունիկումից’ և երկու մրգօղոնց), ինչը որ չափազանց հազվադեպ իրադարձություն է ինքնին, և դու շատ սիրալիր կերպով ինձ քննելու պառկեցրիր քո անկողնում: Բավական վատ էի զգում ինձ, և այդ տիսմար գրողը եկավ ինձ մոտ, որ հարցմի, թե ինչպէ՞ս եմ և արդյոք ջուր չեմ ուզո՞ւմ:

Ես այնուեղ անզոր կերպով պառկած էի մահճակալին, և նա իր սեփական որոշման համաձայն բռնեց ձեռքս և ասաց, որ չմտահոգվեմ, շուտով ուշքի կգամ: Սա է եղել ամբողջը: Ես ի՞նչ կարող էի անել:

Հավանաբար պետք էր ասել կոպտորեն՝ հետ գնա անկողինդ և մի՛ մոտեցիր ինձ: Խիստ անհաճն էր ինձ համար էլ. բայց ի վիճակի չեղա այդ բանն անել:

Հնարավորություն չտվեցիր, որ բառ իսկ ասեի: Հուսով եմ, որ կիսորիես այս բոլորի մասին և կըմբռնես էականը, չես դատապարտի ինձ, նախքան առհասարակ իմ կողմից որևէ վատ բան կատարելը:

Շատ եմ ափսոսում, որովհետև աներևակայելի խորը գգացմունք էի տածում քո հանդեայ, այնպիսին, որ չփուեմ նոյնիսկ, թե քանի տարի չէի ունեցել: Այսքան կարճ ժամանակամիջոցում (միայն մի քանի օր է, որ ճանաչում ենք իրար) այսպիսի լուրջ զգացմունքը մի բացառիկորեն եղակի ապրում էր ինձ համար...

Խոտպիու ձեռագիրը պարզ էր, թերևս նոյնիսկ պարզեցրած, որպեսզի ես ամեն ինչ հասկանայի: Հիմնական իմաստն ինձ մատչելի էր առաջին իսկ ընթերցումից, բայց երբ որոշեցի նամակը ճշգրտորեն բարգմանել, մի քանի տեղում տառերի միացությունները խնդիր դարձան: Չղայնացա, որ չնշին պատճառով պարապուրդի եմ մատնվում, երբ որ մինչև վերկի մեջքերման վերջն ինձանց գոհ էի, որ հարազատ եմ մնում Ֆրանչեսկայի ոճին՝ խտպական վերամբարձություն, որը գորգակցված էր նոյն բառերի կրկնությունից խուսափելու համար հոմանիշներ փոփոխելու բանափրական դաժան կամոնի բծախնդիր պահպանմանը, նաև՝ որոշ անհարթություն, որն անկասկած պայմանավորված էր ոչ մայրենի լեզվով արտահայտվելու հանգանաթուվ: Սի քիչ լսեցի մայրաբաղարից ժամանած հերթական գրողի ընթերցանությունը, որն ամենամնիքը կերպով նկարագրեց մոր դիակը՝ ի հեճուկս իր լիրիկական անզգամ քրոջ, ապա սկսեց ամբողջ սրտով խոճալ իր անձին ինչ-որ կայարանամերձ սրճարանում, որտեղ խմելու գիրկն էր նետվել գնացքը բաց թողնելուց հետո և տառապանքի վիթխարիությամբ այսպես հուզել մատուցողներին, որ նրանք, չնայած իրենց պարզամտությանը, նախ բոլոր ջանքերը գործադրեցին հերոսին սրափեցնելու համար, ապա բողեցին, որ քնի սեղանի մոտ:

Հանդիպումը ջրավազանի մոտ էր, բացօթյա, և չնայած անձը չկար, գրողն իր միօրինակ, մեկամադրու ասմունքի ընթացքում այդպես էլ չհանեց ֆլամելե լայնեզր գլխարկը (կտորները լավ չեմ ճանաչում, բայց պիտի որ ‘քնիքանեղե’ չիներ), որը համապատասխանում էր արևադարձային բացերանգ կրատյումին և, ըստ շնահավան Էվանսի, լրացնում ‘արորիսպի’ կերպարը, ինչպիսին որ իբր ես էլ ունեմ, ինչն ինձ ստիպեց թվելիմ ու ընթացիկ \*-ացի գրողի հագուկապի տարբերությունները, որպեսզի արդարանամ, ինչն էլ թերևս խորամանկ անզիացու հեռագնա նապատակն էր:

Հարկավոր էր որևէ մեկին ճարել, որը ինձ համար կարդար չհասկացած բառերը, այնպիսի մարդու, որ \*-երեն ձեռագրից գրու հաներ, միաժամանակ տեղյակ չիներ իմ ու Ֆրանչեսկայի հարաբերություններին: Բացի այդ, պետք է նամակը ցույց տալը բարուն մնար խոպուհուց, որը երեւ կողքիս չեր նստում, որեմն տեսադաշտում էր պահում ինձ: Երեկո էր, նստած էինք բոյլ լուսավորության ներքո: Այդ պահին էր, որ լսեց մի կոպիտ ճայն, թե՝ մենք փնտրում ենք Վարդան Կարապետյանին: Մենք Վարդան Կարապետյանին ենք փնտրում, որովհետև վաղն առավիտ շուտ պետք է մայրաքաղաքում ուստիկանություն ներկայանա՝ վիզայի հետ կապված լուրջ բարդություն կա... Մինչ ես նկատեցի, որ \*-իայի հայկական ինքնավարության դեկավարն է խոտող, մինչ մոտեցաւ հարցրեցի, թե ինչո՞ւ է գոռում, նա նորից ամբողջ հայտարարությունը կրկնեց, գետ մի անգամ էլ սկսեց ինձ համար նույնը բրավիլ այն ընթացքում, երբ ես իրեն ու հետք եկած տեղակային մի կողմ էի տանում: Մյուսները լուր ու զարմացած նայում էին հայերի ամենորդող կերպարանըներին:

Իմ ծովությունն էր պատճառը, անհոգությունը. մի շաբաթ էր, ինչ լրացել էր ժամկետը, որով Կենտրոնական Եվրոպայի Համալսարանն ինձ աշխատանքային կոմֆերանսի էր հրավիրել: Անձնագրիս մեջ նոր վիզա խփելու համար պետք էր երկրից դրսք գալ և նորից դեսպանատուն դիմել, ինչպես ստիպում էին վարվել, պարզվեց, նույնիսկ ‘բարձրակարգ’ պետությունների քաղաքացիներին, ինչպիսիք Կանադան կամ Խոտիան են: Ես քանաստեղ ընկերոջ միջոցով, որը \*-իայի 2 միլիոնանոց մայրաքաղաքի քաղաքապետի ճառերն էր գրում, վերջինիս երաշխավորական նամակն էի ձեռք բերել, որն, ասում էին, բավարար էր կացության բույլտվությունը տեղում երկարացնելու համար, բայց ինքու ոչ մի անգամ չէի փորձել զանգել-հետաքրքրվել իրերի վիճակով, քանի որ հայերը ստանձնել էին թեթև վազվուքը՝ եթե անհրաժեշտություն առաջանար, կամ էլ պետք է զանգահարելին ինձ՝ այստեղ:

Կարճ հարցուփորձից պարզվեց, որ ինքնավարության առաջնորդներից մեկի մոտ մնացել էր թուղթը, որտեղ իմ հետախոսահամարներն էին, մյուսի զվարում՝ հիշողությունը, որ դրանք գոյություն ունեն, և ի վերջո վեր էին կացել 1 ժամվա ճանապարհ կտրել, որպեսզի ասեին, թե այսօրվա առավոտը վերջին ժամկետն էր, երբ ես պետք է անձանք ներկայանայի վկայագիրս ստանալու:

50-ն անց մարդկանց քաղաքավարության դասեր տաքն անհմաստ էր. ես, հափոր պատշաճի գարեջուր առաջարկեցի, որի պաշար էի կուտակել սարնարանում, որ հանկարծ Զարայի հույսին չմնայի, բայց հայերը հրաժարվեցին՝ թե ուշ է, ու գնացին: Վերադարձած ջրավազանի մոտ:

Հանդիպման ավարտից հետո համարյա բոլորն ինձ նոտեցան հետաքրքրվելու, թե ինչ է պատահել՝ լսվ չեն հասկացել, 1-2-ին ճիշտը պատասխանեցի, հետո ձանձրացա, սկսեցի հորինել, թե այստեղի հայկական մաֆիայի ներկայացուցիչներն էին, որոնց արգելել էի առանց իմ կանչի հայտնվել, բայց եկել էին շտապ տեղեկացնելու, որ վերջին մի քանի պատվիրված սպանությունների համար կասկածվում եմ ուստիկանության կողմից, ոմանց էլ հակառակն ասացի՝ թե եկողները ոստիկանությունից էին, որոնց նորից ու նորից բացարեցի, որ քանի կրողապուտի հեղինակը ես չեմ, խօսել եմ կապերս հանցազործ աշխարհի հետ, ինչպես որ հայտարարել էի, և դա կիաստատն այստեղ ներկա քսանից ավելի խաղաղ գերարվեստական քարգմանիչները... որոնց ցուցմունքների ետևից, ի դեպ, նրանք խոստացան վերադառնալ:

Գնացի ուսումնասիերու ընթերցաքահում կպցրած գնացքների շլացուցակը, որն այնքան խիս էր, որ իմ ցանկացած ժամին մայրաքաղաքում լինելը կարծես թե խնդիր չեր, մանավանդ որ կայարանն էլ մի 300 մ էր մեզանից հեռու: Մինչ ես հետդարձի մասն էի փորձում աշքի անցկացնել, մտնող-դրսք եկողն ինձ շնորհավորում էր, որ բացակայելու էի առավտույն, երբ տեղի էր ունենալու ճամբարի միակ գործնական աշխատանքի՝ \*-ացի կին գրողի «Մողեսի պոչը» վեպից հատվածի մեր քարգմանությունների քննարկումը: Զգիտեի, թե ինչո՞ւ էին իհման նորից նախանձում ինձ եվրոպացները, եթե մինչ այդ հերթով հուշել էին, որ քարգմանության փոխարեն իմ սեփական գործից որևէ կտոր դնեն, միևնույն է, ուրիշ մեկը չկա, որ մեր լեզուն հասկանա: Մերժում էի՝ ասելով, թե ո՞ր կտանի այդ կարգի խաբեռությունը. նույն տրամաբանությամբ Հայաստանում կարող եմ \*-ական գրականության անվան տակ տպելինչ ասես՝ այնտեղ էլ \*-երեն ինացող չկա, բայց իրենք ակնհայտորեն թերահավատ էին մնում, որ գրու պահելու նման աներևակայելի հնարավորությունն ունենալով, ձեռքից բաց թողնեմ:

Ինձ նախանձելու մի իմաստ այնուհանդերձ կար. թարգմանությունը վարժություն համարելով սկսնակների համար՝ ես վերջին օրվան էի թողել հիմնական գործը, և այժմ բոլորովին հրաժարվեցի: Ակսեցի թափառել ‘Սիլվը քարում’, որի անվանումը միզուցե ակնարկ էր, որ լրագրողների, գրողների խոսքն արծաթ է, միայն լրելու վայրերը կարող են կոչվել ոսկի, ասենք՝ ‘Գոլդըն քար’: Մի ‘գերազանցիկ’ բովարացի, որ վաղուց ավարտել էր գործը, ջրավազանի մոտ մենակ նատած դժգոհում էր այն անպատճախանատուներից, որ ամեն ինչ քողել են վերջին բովեն, թեև ուրիշներ էլ կային, որ վաղորոր էին սկսել քայլ դեռ ընթերցապրահում տրնում էին: Գիշերը մինչև շատ ուշ տաճօվեցին, այդ թվում՝ Ֆրանչեսկան ու փորձառու Սաշան, որ շուտ-շուտ դուրս էին գալիս ծխելու, ես էլ, պարապ, գարեջրի իմ պաշարներից հյուրասիրում էի նրանց և ուրիշ ‘աշխատավորների’: Մինչեւ այդ օրը (այդ օրվանից) \*-ացիներն սկսեցին իրենց օտարութի պահել, որի բացատրությունը մինչև այս պահն էլ չգիտեմ. մեկուսացել էին մեր տնակում, մարդ մտնել-դուրս գալիս լրում էին, իսկ վիենացի Չարան՝ ոչ թե քաղաքացիությանը, այլ ծագումին ապավինած, ընկերացել էր նրանց, և աղջկների առաջ չքացեց խահչը պահեստը, որից տղաների մի մասն էլ էր օգտվում ու համաշափ խնում-ուրախանում: Բայց՝ իր համար ավելի վատ. անմիջապես զգացնել տվեց կաշառքի անարդյունավետությունը, երբ այն շարունակական չէ: Օտարերկրացի թարգմանիչներն սկսեցին մակրիներ կացնել Չարային, որոնց ընտրանուց կազմեցինք ‘բեղավոր գունդուկծիկ սալ’ արտահայտությունը, իսկ կազմակերպիչ-զրականազետներին, որ մի աղջկի, մի տղա էին, իշխատակեցինք բանախոսներին ուղղված իրենց հարցերի առնչությամբ, որոնք համարվեցին այնքան տափականիտ, որ ակամա կարուտում են ‘զնացքադադարներիմ’, ինչպես կոչում էինք հարկադրյալ լրությունը, որ պետք է պահպաներ հավաքույթին եղույթ ունեցողը, երբ ‘Սիլվը քար’ հենց կողքով (քվում է՝ միջով) գնացըներ էին անցնում՝ ամեն 10-15 բովեն մեկ:

Գիշերային այս մաղանության մեջ մի պահ իմ երթեւեկն ընդհատեց Ուերեկան, Զեխիայում բնակվող ամերիկուին, միակը, որ չէր հարցրել իրիկնային այցելուներիս մասին, և, հուզմունքից ավելի վատ խոսելով \*-երեն, քան՝ սովորաբար, խնդրեց բացատրել, թե ովքեր էին այդ անտաշ նարդիկ, ի՞նչ է ուզում ինձնից ոստիկանությունը: Նրա բնականից կարմիր այտերը մոլգ-մորեգույն էին դարձել, նեղ ուսերը, որ եղրափակում էին երկար հասակը, սեղմել էին: Ես մտածեցի, որ արտառոց բացատրություններով նրան ավելի վախեցնել պետք չէ, և ասացի, որ հայրենակիցներիս անհանգստացրել էր իմ վիզայի խնդիրը, քայլ հիմա արդեն ամեն ինչ կարգին է: Այսուղ Ուերեկան, թերևս վերջինը ‘ճամբարականներից’, որ նաև չէր հարցրել, թե ինչն է ինձ դրդել հեռավոր Հայաստանում \*-երեն սովորել, դիմեց այդ անխոհեմությանը, և ես չիմացա՝ բոլորովին նոր մի վարկած պատմեցի, թե սուրիստական խմբով Կուրայում կոկորդիլուսների բուժարան այցելիս գետանավի մեջ ծանրացել եմ մի \*-ուհու հետ, ցածրահասակ, լիքը-լիքը, քայլ շատ գեղեցիկ կնոջ, անոնը Արանյեկ, որ հիմա գիտեմ ուսկիկ (Ուսկեա՞սա՞ւ) է նշանակում, շիացրինք հասցեներ փոխանակել, քայլ խոստացա իրեն գտնել: Որոշեցի նախ լեզուն սովորել, քայլ հետո իրեն չփնտեցի, որովհետև անոնը կարծածիս պես եղակի չէր, համենայն դեպք՝ 9 միլիոնանոց \*-իայում, քացի այդ վախեցա, որ բմբիկ կնոջը լրջորեն չէ, որ դուր եկած կլիներ իմ նիհար կերպարանքը:

Ուերեկան ապշած, կարեկցանքով լսեց պատմությունս, հետո են ովլիսի ընկա իրենից հարցնելու, թե Զեխիայում ապրող ամերիկուիու ինչի՞ն է պետք եղել \*-երեն սովորել: Պարզվեց, որ վերցնովի երեկան է եղել, մեծ տարիքում իմացել է, որ իսկական ծնողներն այս երկրից գաղրած հրեաներ են, գտել է ուսուցիչ, որից 5 տարում մասնակոր պարապմունքներով սովորել է լեզուն: Նա ինքը 2 տարեկան աղջկի ուներ, թեև 40-ին մոտ կլիներ, գուցեն՝ ավելի քիչ, որովհետև ցոյց տվեց նաև ամուսնու լուսանկարը, որը երիտասարդ տեսք ուներ ու կլինոների ամերիկացիներին էր նման. ինքնավստահ, համակրելի: Ես եղրակացրի, որ Ուերեկայի ամաչկոտությունն իր ամերիկյան քաղաքացիությունից չէ, ոչ էլ՝ առողանությունից, որի պատճառով առաջին պահ չէր գուշակի, որ անզերեն չի խոսում, այլ՝ \*-երեն, այլ՝ նրանից, որ որորուկ էր՝ թե՛ իսկական, թե՛ իրեն որդեգորած ծնողները ունեցող որրուկ:

Այդ տպավորություններից, թե իմ հոգսերի պատճառով երկար չի կարողանում քնի. զգիտեի, վիզաս կլինի՞, թե՞ ուշացել եմ, զգիտեի՝ երեւ ուշացել եմ, ինչպես էի ինքնարդիխս սոմալ փոխելու՝ այս սեղմինին նույնիսկ շաբաթներ առաջ ազատ տեղ չէր ճարվում, զգիտեի, փողոս կրավականացնե՞ր, որ տոմսս փոխելիս տուզանք մուծեի, ինչպես

Մի անգամ արել էի, երբ Շամբարին մասնակցելու հրավերն ստանալով՝ որոշեցի այն ընդունել՝ անկախ վիզայի և այլ դժվարություններից, չփառեի՝ օրինազանցությունս վատ չէ՞ր անդրադառնա Կենտրոնական Եվրոպայի Համալսարանի կողմից ինձ նշանակած 10-ամսյա քոշակի վրա, որն ապրուստի միակ աղբյուրս էր լինելու հայաստանում, որտեղ ուրիշ ոչ մի գործ չէի նախաձեռնել, որ այլընտրանքի հեռանկար ունենայի...

# ՄԱՍ ԶՈՐՌՈՐԴ

Լուսադեմին աջրս կպավ, բայց շուտով ստիպված էի վեր թռչել, որ քունս թորափեի կառամատույցում, որն իրենից ներկայացնում էր բացարձակ դատարկ 2 ասֆալտե հարթակ զույգ երկարգծերի 2 կողմում՝ այնպես բոլորապատված ծառերով, որ վերևում միայն երկնքի կապտավուն կտորն էր ջոկվում կանաչ համայնապատկերից, գետնին՝ զարեցրի ջարդած դարշնագույն շիշը: Մեն-մենակ կանգնած դեղին նորատետրումն նկարագրում էի ինձ համակած անորոշության զգացումը, որպեսզի զնացրում արդեն վերադաշնամ Ֆրամշեսկայի նամակին: Միայն թե զնացը նստել չհաջողվեց, դրովենու այն իման համար կանգառ չարեց... Շատ չանհանգստացա, մտածեցի, որ շուտով ուրիշը կգա, ուրիշը մի 15 րոպեից եկավ, բայց նորից չկանգնեց... Ընալութեաց էր, հասկացա, որ այս կիսակայարանում չէր կանգնելու, բայց կանգ չառավ նաև արտաքուստ գուտ մերձքաղաքային 3-րդ զնացքը... Ուշանում էի, վագեցի հետ՝ մինչև ‘Սիլվը քլարի’ վարչական տնակն, ու շնչապատ հարցրի, թե զնացքներն ինչո՞ւ կանգ չեն առնում: Այդ պահին զնացաց հեռախոսը, և զրասենյակի միակ առկա աշխատավիցը՝ շուրբերդ հավաքած մի աղջիկ, 5 րոպե ամերնդմեց խոսեց, հետո մի 2-րդ զնացողի գործնական հարցերին էլ պատասխանեց, ես ներսուղուրս էի անում, վերջում արդեն խցկված մնացի ներսում, որ օրիորդից տեղեկություն կորզեմ, կրկնեցի հարցու, զարմացավ, թե՝ ինչպե՞ս չի կանգնում, զնացքներից մեկն անպայման կանգնում է, իման ժամը քանի՞մ է, 8-ն անց 40, հենց 8.40-ի զնացքն էլ կանգնում է, այ, սա, որ հիմա դեպի մայրաքաղաք շարժվեց, հենց ձեր ուզածն է, որ կա:

Պետք է ամենառուշը 9.30-ին լինեի համալսարանում, բայց հաջորդ զնացքը կարող էի նստել միայն 9.40-ին. ընթերցասրահի չվացուցակը վերաբերում էր մոտակա քաղաքին, մեր ‘Սիլվը քլարը’ հազիվ ժամը մեկ էր արժանանում զնացքների ուշադրությանը:

Դուրս եկա ճանապարհի եզր՝ ավտո կանգնեցնելու: Մեծ մասը հայացքներն ելշու չին տալիս դեպի ինձ՝ երկի կրվկապան արտաքինից խրտնելով, այլոր ձախ կամ աջ կրղմը ցույց տալով, այսինքն թե՝ շուտով թերվելու եմք, միևնույն է, չէին կանգնում: Ես էլ սկսեցի առանց որևէ տրամարանության աջուծախս մատնացույց անել, քանի որ չխտեի, թե մայրաքաղաքի ճանապարհը որ կողմն է, ոչ էլ մարդ կար, որ հարցնեի. հույս ունեի, որ եքն գոնե մի ավտո կանգներ, վարորդից կպարզեի:

Բան դուրս չեկավ: Հետ զնացի զրասենյակ, որ զանգեմ՝ զգուշացնեմ, թե կուշանամ, զգտա քուղթը, որին գրել էի համալսարանի հեռախոսը: Հիշողությամբ համարը հավաքեցի, ինքնապատասխանիչը նկատողություն արեց, թե սխալ համար եմ հավաքում: Անտարքեր աղջկանից խորհուրդ հարցրի, առաջարկեց ավտորուսով ես զնալ մինչև մոտակա քաղաքը, ուր բոլոր զնացքները կանգնում են, այնտեղից մերժացով 10-ի մոտերքը կիասնեի մայրաքաղաք: Նորից, արագ կտրեցի մինչև ճանապարհն ընկած 30 մետրը, որ հասցնեմ նկատել, թե ինչպես է տեսադաշտից անհետանում խնդրու առարկա ավտորուսը... Տարսի անցավ, սիրու շարի կանգնեցնել՝ զներին ծանոր չէի: Մի փոքրիկ, երկրոճանի ավտո հաջողվեց կանգնեցնել, վարորդը՝ տարեց մարդ, կողքին՝ լրիվ շամիչ տատիկը՝ մի 98 տարեկան, բայց խեղճերը սարսափեցին՝ իմանալով, որ մայրաքաղաք եմ զնում, և արագ շարժվեցին՝ տալով մի հավանաբար մոտիկ բնակավայրի անուն, որն այնքան երկար էր, որ մի լսելով շնուապահեցի:

Գնացի զրասենյակ, այնտեղից նորից՝ կայարան, որ հակառակ ուղղության մերձքաղաքային զնացքով հասնեմ ավելի ծանրակշիռ, «մերժացացային» մակարդակի բնակատեղի: Մերձքաղաքայինը չեկավ: Այս անգամ մենակ չէ՝ 4-5 ուրիշ սպասող էլ կար. լրեցին կայարանը: Համեստ աղջիկն այնպես ազրմեց այդ շտեսնված անհաջողությունից, որ փորձեց զնացահարել երկարության տեղեկատու: Ոչ ոք չէր վերցնում լսափողը: Նույն

Ցերեկները քարգմանում էի, իրիկուններմ՝ այս պատմությունը գրում: Թարգմանությունը ստեղծագործական ազարտ չի առաջացնում մեջս և բարդ չէ՝ Հայաստանում էլեքտ ասես հանգիստ կանեի, բայց զոռով ինձ գրադացնում կի: Երկու օր այդպես անցկացնելոց հետո զգացի, որ շունչս կտրվում է, ճամբարի կենսայի զգացողություններիս հետքն էլ չի մնացել, խմելու հրավիրեցի Սաշային. նա զիտակցության մեջ լրիվ առանձին էր Ֆրանչեսկայից՝ երես խնդիր ունեի, միայն խտարարություն հետ էր: Անսոնն ու Ինեսան՝ այդ կապիտալիստներն, առանց մեզ ձայն համեկու դրսում, իմշ-որ պանդոկում ճաշելու էին զմացել, սա էլ մեր վրեժի պես բամ կիմեր. այսիմքն, իմացե՛ք, մենք էլ տաճը չենք փակվել-մնացել: Իհարկե, կարելի էր ժուժային էլ ձայն տալ, բայց այդ դեպքում խոսակցությունն էլի «պարտադիր ծրագրի» շրջանակներում կանցներ՝ գեղասահիք լեզվով ասած: Քայլեցինք լճափով, Սաշան քափառել էր այդ տեղերում, բացատրեց, թե որ կողմում մոտավորապես ինչ կա, տասնյակ խմելատեղերից մեկում հանգըանեցինք: Իր համար կարմիր զինի պատվիրեցի, մատուցողից հարցրի, թե ինչ զարեցրեր կան, դրանցից մեկը տակառի էր՝ Սաշան հուշեց, պատվիրեցի մեծ զավաք, բերեցին կասկածելի սիրում, բարձր բաժակով, համը տեսա՝ մի այլանդակություն. քաղցր, մեջը՝ կիտրոն, ըստ բաժակի ու տակրիի գրության (ճաշացուցակը սեղանի վրա էր՝ գտա-համոզվեցի, որ անալիում միակ տեսակն ի ընտրել: «Փող ես տվել, չէ՞ ափսոս է»՝ չմտածելով հանդերձ, խմեցի, քանի որ երկար չէր հաջողվում մատուցողի հայացը բռնել, մինչև որ բռնացրի, մի մեծ զավաք՝ Հոլոքեն՝ պատվիրեցի: Համարյա իմքս ինձ փիլիսոփայեցի, որ անձանոք սեղում մարդու միշտ պիտի պատվում է, սա միջին վիճակագրական վրիփում է:

Կուշտ ոռուսերեն խոսեցի՝ \*-երենից հոգնած: Տուն զմալուց Սաշան խմած էր, որ անսպասելի էր. մինչև այդ լավ էր դիմանում խմիչքին՝ 2 հատ 200 զինի էր ընդունածը: Առանց արկածի տուն հասանք, իր բացած զարեցուրն էլ խմեցինք, զնացինք մեր սենյակները: Հաջորդ օրերին սովորություն դարձրի ցերեկով լճափ զնալը, որպեսզի քայլեմ շունչս բացվի, և առհասարակ դարպասից դուրս զամ: Նայում էի, նայում կարապներին ու բարերին, մի անգամ ծոցատեսրս տարել էի, նշում արեցի, թե՝ քոչունները վեհ ու վայելու են, քանի հանգստացողները ուտելիք չեն զցել: Այդ ժամանակ բավական է մեկը մի խոշոր կտոր բռնի, մյուսներն ընկնում են հետևից, մի կարապ, օրինակ, երկար հետապնդում էր բաղիկին՝ բոյից չամաշելով, մինչև խեղճը կարողացավ ընթացքում կուլ տալ պատառը: Անցուղաքնորմերին էլի վերլուծում, որ մի տեսակ արատավոր էին թվում, ճրաճր էլիմն էին նայում, որ բոլորից տարբերվում էի մաշկիս թխությամբ, մորուքով, երկար շալվարով ու մուգ գոյնի շորերով, բայց անկեղծ ասած չէի էլ ուզում նմանվել: Անձրև եկավ, պատսպարվեցի մի ծառի տակ, որը 1926 թ. նոյեմբերի 8-ին տնկել էր Ռաֆիկ Խանը՝ այստեղ առողջությունը վերականգնելու կապակցությամբ, ինչպես վկայում էին նրա արձանը և կից մակագրությունը:

...Ծննդյան օրվա հետ կապված ինելլագրությունն օր-օրի թեժանում էր, պարզաբանումներ էի հրլում ժամի ու քննկու հարմարությունների վերաբերյալ, խտալուին զանգեց՝ հարցնում էր, հյուրերս ինչքան են, աներեսի նման ուզում էր մեծ խմբով գալ, իբր իրեն շատ էի հրավիրել, հիմա էլ շրջապատը քարշ տար-թերեր, երբ որ տնտեսուին ինձ մոտ նեղսրտել էր, թե Ֆրանչեսկան զրություն ու գումար է բռնել, որ իր սենյակը ծննդյան օրն էլ է զրադացնելու՝ առանց հարցնելու. արդյո՞ք այն այդ օրն ազատ կլինի: Ես հասկացրել էի, որ խտարարությունը կապակցությամբ, ինչպես ցանկալի չէ, քանի իր, և այժմ հնարակորինս մոայլ լսափողի մեջ մրժմիթացի, թե՝ Ֆրանչեսկա, ընկերուին է զայիս արտասահմանից՝ ինձ մոտ կմնա, մի 10 հյուր էլ \*-իայի մայրաքաղաքից եմ ունենալու, զիշերելու տեղի սղություն կլինի, ինչից նորից կոտր չընկավ, թե՝ լավ, հետո կզանգեմ, որ իմանամ, թե դրությունն ինչ է, երևի (ԵՐԵՎԱՆ) մենակ ես ու ընկերս զանք:

Հաջորդ օրը երեկոյան ուշ փոստս ստուգի-վերջացրի՝ հեռուստացույցը միացրի (մոտ մի ամիս է, չի նայել, նույնիսկ մի քանի նամակիս մեջ նշել էի այդ փաստը), սերս ալիք բռնեցի՝ անզլերեն, անոնք՝ ԳՈԼԴ, հետո գերմաներեն էլ՝ մի էրոտիկը, համարյա մի ժամ նայեցի, մինչև որ շատ միօրինակ դարձավ, կարողացա կտրվել ու վերադառնալ սենյակ: Միտքս ընկապ շվեյցարուհու հետ հեռախոսազրույցը, երբ ասաց, որ շվախենամ, չի կծի, ես է այստասխանեցի, որ կկծի, լավ, չի կծի՝ թող չկծի... Այն ժամանակ կարգին շանդրադարձա, թե ինչո՞ւ էրոտիկի հնչեցին խոսքերս, իհմա բացատրեցի նրանով, որ մի բաղաձայնի փոփոխությամբ նախադասությունը կատարելապես ուրիշ իմաստ էր ձեռք բերում:

Ըվեյցարահայուիին հաջորդ օրը պետք է գնացը նստեր, որից առաջ զանգելու էր, բայց իր նշած ժամն անցավ, չզանցեց, անհանգստացա. զալու՞՞էր, թե՞՞ ոչ, ինչպես էի բացատրելու իր բացակայությունը, երբ բոլորին տեղյակ էի պահել, որ ծննդյանս օրվա հյուրափրությունը միասին ենք կազմակերպելու: Առավել տիհաճ կիմներ, որ Ֆրանչեսկան, որի մտահոգվածությունն ակնհայտ էր, երբ ինացավ շվեյցարուհու գոյությունը, կարծեն թե ինքը պետք է անպայման մի հիմնական ընկեր, դեռ ամեն այցելած տեղում էլ մեկ ուրիշն ունենար, իսկ ես ընդհանրապես՝ ոչ, չհանդիպեր նրան իմ կողքին՝ իր փոխարեն: Լավ էր, որ երեկոյան ուշ այնուամենայնիվ զանգ եկավ: Թե՞ սցենարիս հետ կապված շտապ գործ է ծագել, բեմադրիչը, “ինքն ելլավ չհասկանալով ուզածը” պահանջում է ինչ-որ բաներ փոխել, որը պայմանագրով իր իրավունքն է, ուստի շտապ պետք է Գերմանիա գնամ, բայց եթե որոշ բաներ արագ տնօրինեմ, ծննդյան օրը տեղ կհասնեմ, մանավանդ եթե նախատեսել ես, որ 2-ս ենք լինելու տաճարերերը, ինչպես որ ասում եմ: Տեսք-տեսք՝ ասացի ինքս ինձ դաժան բեմադրիչների ու պայմանագրային պայմանների առումով, բայց ներքուստ հանդարտվեցի:

...Հետո, չզիտեմ ոնց պատահեց, ձախ կողքս շոշափեցի, զգացի, որ մի ահագին մեծ ուսուցք կա վերջին կողիս հենց տալ: Այ քեզ բան, այ քեզ բան, այ քեզ բան: Երկար ժամանակ շոշափում էի: Թե ինչ էի մտածում՝ չեմ ասի, իմաստ չունի, իմքներդ կպատկերացներ: Վերջը շիմացա, թե ինչ անեմ, մի քիչ զինի ունեի՝ 2 բաժակի շափ, Սաշային առաջարկեցի, խմեցինք, իմքը զարեջուր բերեց 3 բանկա, տաք էր, 2-ը սառցարանը դրեցինք, մեկը ես սառույց լցրեցի բաժակները) խմեցինք, հետո նորից Անտոն-Ինեսայի հյուրերից եկան, դատարկ կամ ինձ անձանոր բեմաներով խոսակցության ունկնդրեցի, երկու շիշ տարրեր տեսակի զարեջուր ունեի՝ ավելի լավ որակի, բան Սաշայինն էր, բերեցի՝ դրանք էլ խմեցինք, հետո զնացի զուգարան, հավեսս չեկավ հետ վերադառնալու (արդեն 3-ով էինք մնացել ես, Անտոնը, Սաշան՝ Անտոնն էր հիմնականում իր պրոֆեսորական սոնով անալի-անալի խոսում), բարձրացա 2-րդ հարկ՝ մտքումն որոշեցի, որ կասեմ փոստս էի ստուգում, ու հեռուստացույցը միացրի (ինձամից առաջ ինչ-որ մեկն էլ էր նայել, վառվող փոքր կետից երևում էր): Համեմայն դեսպ աշքս աստիճաններին էր, որովհետո թե սերս ալիքով իրար ինչե՞ թին անում Աստված ազատի, մի ժամվա շափ դրա պատճառով չէի կարողանում կտրվել, հետո իջա, պատշգամբում դեռ զրոյցը շարունակվում էր, բարի զիշեր մաղթեցի, որին մի քիչ ասող պատասխանեց Անտոնն՝ երևի անքաղաքավարի էր թվացել անհետանալու, ու մտա սենյակ, հանվեցի-պառկեցի՝ քանի թարմ էին հեռուստացույցի տպափորություններս: Հիշեցի ԳՈԼԴ-ով (ահա թե որտեղ էր լուրպայն ոսկին) տեսածս աղջկեներից մեկին՝ հիանալի մարմնով ու դիմագծերով, որը գրավիչ էր դարձնում անմիտ ու վոլգար ֆիլմը, բայց ջղայնացել էի, որ մեղմ ու հանգիստ հայացրով տեսախցիկին էր նայում, երբ էղ բութ կենդանիներից մեկը դեմքին ու բերանի մեջ էր բափում, ու մտքով քննեցի, թե չէ՞՞ կարող (յարաք) ուրիշ մի գրադմունք գտնել իր համար: Հետո մի կերպ վանեցի նրա ճակատագրին միջամտելու ցանկությունս՝ այն փաստարկով, թե ես ի՞ն արժանապատիվ կենցաղն եմդիվարանում ապահովել Հայաստանում, ինչ կարող եմ անել իր համար. ո՞չ ամուսնանալու է՝ ամուսնանա, ո՞չ իր նմաններից առաջինը կամ վերջինն է...

Կարդացի է, մտածեցի ուսուցքիս ու իր շարագրչակ նշանակության մասին, քննեցի:

# ՏՀԱՎԵՐՈՐԴ ՄՎՍ

Առավտու լոգանք էի ընդունում՝ մտքերիս մեջ ընկած, երկար-բարակ, երբ դուռը ծեծեցին, թե հեռախոսի մոտ արի, արագ դուրս քոա՝ սրբիչով փաթարվելով, բայց լսավորի մեջ արդեն «տու-տու» էր, երբ հազմվեցի, իմացա, որ զանգը Շվեյցարիայից (կամ արդեն Գերմանիայից) է եղել, ապաշ էստոնացին տեսել է՝ սեմյակում չեմ, ասել է՝ տանը չի (չեմ հասկամում, թե ինչի համար լոգանքս հարամեց էդ դեպքում), գերմանախոս «տիկինը» հայտնել էր, որ մի ժամից նորից կզանգի:

Մի թերև նախաճաշեցի, որոշեցի ուսուցքի մասին ոչ մեկին բան չասել, բայց 5 րոպեն մեկ շավիկիս վրայից կամ տակից շոշափում էի, ի վերջո, մտածեցի՝ գոնե պարզեն, թե ինչպես կարող եմ բժշկի գնալ, մուլ տվեցի խոհանոցում, որ Ժումային մենակ բռնացնեմ ու հարցնեմ. ամենատեղակն ինքն էր՝ հինգերորդ անգամ էր Թարգմանչի տանը հյուրընկալվում: Հակառակի պես երկար չեր ստացվում, հետո խոհանոցի սեղանատանը, որ կիսամիջնորմով անջատված էր լվացարանային հատվածից, դեմառենմ եկա այդ կնոջն ու հարցի, թե ի՞նչ պետք է ամել, երբ բժշկի դիմելու կարիք ունես: Հարցրեց, թե ի՞նչ է պատահել: Ինչքան էլ որ հարցը եմքաղը վող էր, պատասխան չի նախապատրաստելու շնչառությունից բողոքեցի: Ասաց, որ անմիջապես կլսի թոքերս, փորձ ունի, հաճախ է պետք եղել տղայի բոքերը լսել: Անցավ մեջքիս կողմը շապիկս բարձրացրեց, ականջը մի 2 տեղ կպյուեց, հայտարարեց, թե բան չկա՝ լրիվ մաքուր են, ինչ իմաստ ունի 80 դրար տաս բժշկին, որ նոյն բանն ասի. Աերվերից կլինի, որ լավ չես շնչում: Ծիշտն ասած, դա էլ ինձ համար որոշ շափով միսիրարական էր. զիտեի, որ եղ գարշելի հիվանդությունը շատ հաճախ է թոքերին կպչում, ու իմ ամենամոտ ընկերն էլ որանից մահացավ 1995 թվի օգոստոսի 20-ին:

Սեր խոսակցությունը խոհանոցի ներսի մասից որսաց Ինեսան, որն իրար խառնվեց, թե այդ ինչ պատմություն է բժշկի հետ կապված: Հենց իմացավ, որոշեց, որ գոյնս լսվ չէ, ես մտքում քմծիծաղեցի, թե բավական է ասես, որ իիվանդ ես, բոլորն ապացույցներ կգտնեն, բայց մի բանի օր հետո էլ, երբ նոյն թեմայով խոսք եղավ, պնդեց, որ այդ ժամանակ իրոք գոյնս կանաչ էր: Սեր գորոյցի վերջին Սաշան էլ հասավ, որի համար, դեմքից զգացվեց, չնչին, քամահրելի առիք էր շնչառության խնդիրը:

Այս բոլորով հանդերձ, իմ սովորական օրակարգից չշեղվեցի, նոյնիսկ չենքարկվեցի Ժումայի ճնշմանը, որի մեքենայով էինք գնալու ծննդյանս օրվա գնումներն անելու՝ թե շուտ գնանք-հետ գանք, որ ինքը աշխատանքին դառնա, ինքս առավտուներն էի լավ գրում, ու մի քիչ նատեցի կրնակի առաջ, նախքան թե կշարժվենք: Ժամանակը ձգում էի նաև, որ խոստացված զանգը հասնի, բայց չհասավ, ու Անտոնին միակին, որ մեզ հետ չեր զալիս, խնդրեցի, որ ընկերուիս իր միջոցով հաղորդի, ինչ որ պետք է:

Մասգործի խանութ մտանք: Երևակայությունս ավելի չեր գոռել, բան՝ հայկական խորովածը, որը հնարավորություն-ներիս համեմատ բանկու էր: Հանրախանութիւ համեմատ էժան գնով խոզի շալաղաջ առա՝ մարդա մի կտորի հաշվով, մի քիչ էլ ավել, զինին, որ «տնեցիների» նվերն էր ծննդյանս օրվա առթիվ, լիտրով առանք, էժան (20 լ), ես նոյն տեղոց գարեջուր գնեցի, որ սովորականից մի բան էլ բանկ էր, հետո մտանք շուկա, Ինեսան բիբար-պոմիդոր-բարբիջան ընտրեց՝ ես փողը տվեցի, հաց, մի քիչ էլ բրու վերցրինք, եկանք տուն:

«Ընկերություն», ինչպես ներկայացնում էի նրան, դեռ լուր չկար: Երբ նախագավորում մենակ էինք Սաշայի հետ, ասացի, որ ուսուցք եմ հայտնաբերել կողքիս, ու բժշկի մասին առավոտվա հարցուվորձս դրա հետ էր կապված: Շոշափեց, առաջին հարցն այն էր, թե երբ եմ վերաբառնում տուն՝ դեռ 12 օր կար, երկրորդ՝ ապահովագրություն ունեմ, թե՝ ոչ, պատասխանեցի՝ ոչ, չին էլ պահանջել նախօրոր, ասաց՝ այդ դեպքում, երբ որ հայերը մայրաբարձրից զան, խնդրի, որ օգնեն, բանի որ առանց ապահովագրության սարսափելի բանկ կլինի նույնիսկ

ամենահասարակ հետազոտությունը, որը և ես ընդամենը ակնկալում էի, պարզ ասած՝ գոնե մի ունտղեն: Խնդրեցի ոչ մեկին բան չաել, իսկ իրեն ասելս բացատրեցի նրանով, որ ուզում էի գոնե մեկն իմանար տիրության պատճառը, եթե ծննդյանս օրվա խնջույքին համկարծ ինձ չտիրապետեմ:

Միջօրենին վերջապես զանգեց «ընկերությու», ասաց՝ ամեն ինչ կարգավորել է, երեկոյան 10-ին ճանապարհ կընկնի ճեպընթացով, շաբար առավոտ 11.46-ին կիասենի տեղ: Ասացի՝ կղիմավորեն, նորից հետաքրքրվեց, թե ի՞նչ թերի Գերմանիայից, ծննդյան օրվա ի՞նչ նվեր կուղենայի, մի քանի քանի կարիք ունեի, բայց որպեսզի երկար տարիներ ի վեր մեր առաջին հանդիպումը շահադիտական երանգ չտանար, զարեցրի զավար խնդրեցի, որ իր գործը հեշտացնեմ, մանավանդ քանի քան էլ չեր՝ մեկը տեսել էի այստեղի հանրախանութում մի դոլարի կարգի էր: Ուրախ էր որոշակի ցանկությանս համար, հարցրեց, թե ինչով է պայմանավորված նվերի ընտրությունը, դե-, ասացի, - Գերմանիան 2 քանով է հոչակավոր՝ ֆաշիզմով ու զարեցրով, բայց հո ծննդյանս օրվա առքիվ ֆաշիզմ չեմ պատվիրի:

Ժուժայի համար պնդմամբ մի 2 կտոր մսով «փորձնական» խորված արեցի. և՝ ոչ անտեղի, այստեղ խորվածի համար պատրաստի ածուխներ էին վաճառում, որ հազիվ իրենք իրենց էին տարացնում, ժամուկեսից ավելի քաշեց, մինչ գործը զլուխ եկավ, «սղերքով»՝ ես, Սաշան, Էստոնացին, համտես արեցինք՝ վատ չեր ստացվել (Ժուժան ասաց, որ ինքը քարզմանում է, նման քամերի վրա շեղվելու «զլուխ չումի»):

Երեկոյան դեմ դարպասի զանգը տվեցին, զիտես ինչու ոչ ոք չլսեց՝ որիշ ժամանակ միանգամից 3-4 հոգի կվազեր, ինչպես և՝ հեռախոսի դեպքում էր, վեր կացա, դուրս եկա պատշգամք՝ դարպասը մի 30 մետր հեռու էր, երևաց, որ կին է սպասողը, ինքնահրկիզվողի կատաղի շարժումնից կրահեցի, որ Ֆրանչեսկան է, հետ դարձա սենյակ, որ դարպասի քանալին վերցնեմ, նորից զանգեց, մտմտում էի, որ զգնամ տանջվի, բայց հապաղումն կարծ էր, ներս քողեցի, իրար այտեր համբուրեցինք՝ ընկերա-քաղաքավարական պահանջներին համապատասխան, մունինար եկավ, որ ուշ եմ քացել, կարծես թե առանց քանալին վերցնելու հնարավոր էր:

11-ն անց նախազավիք դուրս եկա, հավաքված էին բոլոր՝ առաջարկեցի համտեսել խնջույքի համար նախատեսված գինին, չառարկեցին, 5-իտրանոցը դատարկեցինք կեսզիշեր չեղած, Ֆրանչեսկան սկսեց աղմկել, որ արդեն շնորհավորել է պետք ինձ, հասկացա, որ նվեր է բերել. փորացավը դա է, դիմադրեցի, որովհետև կարծեմ ուսմերը վատ նշան են համարում նախօրոք ծննդյան օրը շնորհավորելը, որն իմ ուսուցքի ֆոնի վրա էլ ավելի անդուր էր՝ ինչքան էլ որ սնոտիապաշտ չեմ: Բայց հաջողություն չունեցա. 12-ին 5 պակաս երգեցին «Հեփի բրդիեյ թու յու», ու Ֆրանչեսկան տվեց իր նվերը՝ հավիկներ, փայտե, 4 հատ, որ նկարած կորեկ էին կտցում կլոր տախտակից այն արագործյամբ, որով կլարդուանայիր պտտել տակը կախված գնդիկը: Մի քիչ վարպետացա վատենկներին կերակրելու գործում մյուսներին ի զվարճություն, հետո բարձրացա, որ փոստս ստուգելմ միզուցե հյուրերից ունանք դեռ ճշտելու բան ունեին՝ արդեն չունեին, ԳՈԼԴ-ը զցեցի. 2 մասգործ պահեստ-սարմանում 3 քննուու, ‘փշացած’ նմուշի աղջկանով էին զբաղված՝ տավարի ջանդակներն էլ ուսմերին զցած: Անջատեցի-իջա սենյակ՝ ինքս ինձ հույս տալով, որ վաղն արդեն մերձակայքումս ավելի նյութական, ինձ հասանելի ու համելի կին կլինի, քան մսագործներին սպասարկող անուղեղներն էին:

## ՏՀԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՄՎՄ

Հունիսի 27-ին լավ տրամադրությամբ զարքնեցի, լրդացա, բոլորն առանձին-առանձին հարցրեցին, թե ո՞նց եմ, Սաշան նույնիսկ ճշտեց, որ առողջական վիճակս նկատի ունի, ևս միանգամայն լավ էի զգում ինձ ու ինքս էլ տարակուած էի, թե ահա մարմինն իմ... որ լիովին անհոգ է, երբ այդ չափի ուսուցը է, բուն դրեւ իր մեջ: Մանր-մունր գործեր արեցի, մինչև կայարան գնալու ժամանակը եկավ (կասկածներս, թե արդյոք 2 կայարան չկա այս փոքրիկ քաղաքում, նախօրոք փարատեցի): Կար, բայց մեկում լուրջ գնացքները չին կանգնում), բաց կառամասույցին երկար արևի տակ մնացի, որովհետև գնացքը 20 րոպե ուշացավ, ի վերջո տեսա ընկերութուս, մոտեցա, երբ արդեն իշնում էր, փարարվեցինք, խնդրեց՝ թե օգնի այն տղային, որ ճամպրուկն է իշեցնում, օգնեցի, տեղական լեզվով շնորհակալություն հայտնեցի՝ նրա զարմանքը շարժելով, հետո վերջապես մենք մեզ մնացինք:

Վերջին անգամ 3-3,5 տարի առաջ էինք հանդիպել Հայաստանում, երբ ես կապը խորացնելու ոչ մի փորձ չէի արել, արտաքնապես կամ հոգեւալես ինձ չէր գրավել, մինչեռ այստեղ սկսել էր մարմնավորել մի երազանք, որը կարելի է ձևավերպել այսպես. ներքշատ հայենիքից հեռու, ընդհանուր սովետահայ անցյալի ու միջավայրի ներկայացուցիչը իր «նվաճած» բարեկարգ երկիրը բողնում-զայխս է իր նմանին տեսության... Իրաք թերև սիրահարված էինք եղել ավելի քան 15 տարի առաջ, բայց բանը մի քանի համրույրից չէր անցել, ու իհմա ես նայեցի նրան այն աշխով, որ շուտով ըստ ամենայնի իմ անկողնում է պատկերու: Լիքը-լիքն էր, խոշոր կրծքերով, կարճատեփի ակնոցը մեղմում էր կամային (համարյա՛ բռնատեր) կնոջ ուրվագծվող կերպարը:

Թարգմանչի տուն ճանապարհվեցինք ուրում՝ ընդամենը 5-6 րոպե պեստք է քայլեինք, ամենածանր պայտսակն էլ անիվներով էր, քարշ տալը դժվար չէր: Ասաց, որ շատ չեմ փոխվել, միայն նիհարել եմ, սովորականի պես պատասխանեցի, որ դա առաջին տպակիրությունն է ինձանից, քանի որ մարդիկ մտածում են, թե հազիվ թե որևէ մեկը միշտ այսքան նիհար եղած լինի, ավելի հավանական է, որ նոր է նիհարել: Այդ ընթացքում քիչ էր մնացել մոռանայի ասել, որ ինքն էլ համարյա չի փոխվել ու ահազին լավ տեսք ունի: Երկմտանքով, բայց հավատաց, մանականը երբ բոյլ գրկեցի ու մի թերև համրութեցի: Փոխանակման կետի մոտ դադար տվեցինք, որ տեղական դրամ ձեռք բերի, որից՝ «ոչ մի գաղափար չունեմ», սիզարես գմեց, եկանք տուն, տեղափորվեցինք, նվերներս տվեց՝ օծանելիք ու գարենքի գավաթս, որ հախճապակուց էր, վրան միջնադարյան դարբնոցի նկարով ու մետաղի ծանր, հնարավոր է՝ արծարյա գմբերածնկափարիչով, որը նախասառնարանային ժամանակներուն պաղ է պահել խմիչքը և կումերի միջև մեծ դադարների ընթացքում արգելել ճանճերի ուժնագությունները. մի խոսքով՝ համարյա արվեստի գործ:

Ներկայացրի մյուսներին, մի անգամ առանձին էինք՝ գրկեցինք խոհանոցում, զգացի, որ ուզում եմ, ինքն էլ կատակեց, թե ննջարանի կարիք ավելի ունենք, քան յստիհանոցի, պատասխանատվության զգացումս հաղթեց, կոչ արեցի հապաղել, քանի որ նաև ամեն վայրկյան հյուր կարող էր գալ կամ ինձ հետ կապված հարց ծագեր, ու սենյակիս դրուք բախտեին-բացեին: Զգուշացրի, որ այնպես շամի՝ շորտից գրգռվածություն երևա, քանի որ ‘տրուսիկ’ չէի հագել (որ մեկը կերտստովում էր, քափում էի՝ իին էլ էին, վերջացրել էին, նորը չէի առել, բայց նաև համելի էր, որ օդ էր խաղում մարմնիս վրա՝ ամեն տեղ), դա երևի գլուխգոլվանություն համարեց, ես էլ փոշմանեցի՝ ինչքան էլ որ ասած ճիշտ էր. վախեցա, որ զիշերը մի քանի խանգարեր՝ իրեն չցանկանայի հիմիկվա շափ (որ արդեն պատահել էր ու երբ ասես վկրկնվեր), և հիմար դրության մեջ հայտնվելի: Ինքն էլ զմացքում նստած էր եղել 14 ժամ, երկար չմնաց առույգ, ուժեղ զիսացավ բռնեց, որոշեցինք, որ մի քիչ հանգստանա, իսկ ես ծառերի տակից ճյուղի փշուրներ հավաքեցի, աշխույժ կրակ սարքեցի, էստոնացուն էլ իր սենյակից դուրս քաշեցի, որ ինձ փայտ մատակարարի, ինչը պիտի խանդակառությամբ կատարեց, ու խորվեցի ամրող բանջարեղենը, որին \*-երեն սխալմամբ մրգեղեն էի ասում:

Ի վերջո, խրվեցինք ուտելիքի պատրաստման գործերի մեջ. Ֆրանչեսկան, Ինեսան խորոված բանջարեղենն էին մաքրում, ես միշտ նոր էի կրակին դնում, երբ մայրաքաղաքից եկան հայկական ինքնավարության դեկավարները, հետոները՝ մի էջմիածնական միաբան, որի անցկացրած պատարագին ներկա էի գտնվել 2 շաբաթ առաջ, մի \*-ական կարողիկ եկեղեցում, ցերեկը, երբ տեղացի հավատացյալներ սակավ էին լինում: Մեր 35 հոգանոց համայնքը մի քանի մասի էր բաժանվել, հայկական միակ եկեղեցին, որ Վիենայի միսիքարյանների տնօրինության տակ էր, մնացել էր ուրիշների ձեռքը, և ‘այլընտրանքային քեմն’ իր համար այլ աղոքքի տաճար էր հայրային: Թե ինչպես եղավ՝ ասացի երիտասարդ հոգևորականին, որ ծանր հոգևորակում եմ, թե՝ ‘ինչո՞ւ’, ասացի՝ մերեք եմ գործեկ, միաբանը եղը խոստովանությունը համարեց. ‘Ես զիտեմ, որ ծշմարտությամբ կարող եմ բացել ցանկացած մարդու աշքերը, ախսպեր’ հայտարարեց: Ես ոչինչ իհարկե շխոստովանեցի, բայց զանք չգրծադրեցի էլ նաև, որ իր այդ համոզումը սասանեմ. միզուցե նաև պակաս վտանգավոր էր հասարակության համար, երբ վստահ էր, թե նման մեծ առաքելություն ունի... Աշխատեցի ինձ ներշնչել, որ ուրախանալ է պետք, որ մարդն այնուամենայնիվ ժամանակին կտրվել է քայլ քրեածին միջավայրից:

Մայրաքաղաքիները բաստումա դրած միս էին բերել, դրա համար էլ առանձին կրակ արեցինք, և երկրորդ մեքենան դարպասից թերվեց ներս. քանդակագործ հայ ընկերս էր հրեական ծագումով իր սիրած աղջկա ու նրա ֆլամանդուի ընկերուիու հետ՝ ջնջ հայացրով, միջահասակ, շիկահեր ու լուսածառագ մի կնոջ, որի հետ մեր ծանորության պահը ձգվեց 15 րոպե՝ ավարտին համբույրով, որը ծննդյան օրվա առթիվ էր: Դա հարուցեց ընկերուիու խանդն ու ֆլամանդուի հիասքափությունը. երբ շվեյցարահայուիին մոտեցավինձ - զրկեց, որպես իր իրավունքների ցուցադրություն, ֆլամանդուին էլ հոգողով հայտնեց, որ Վիենայում ապրող ընկեր ունի, որն ինձ նման վերջերս է բաժանվել կնոջից, իսկ շվեյցարահայուիին, մի քիչ հյուրերին պրայտելուց հետո, ամենամոտիկ պատրիվակն օգտագործելով, ինձ լուսավորեց, թե նախքան վիեննացին ֆլամանդուիին ընկերուի է ունեցել, որին շատ է սիրել: Ակնհայտորեն, բայց անտեղի հույս տածելով, որ իմ մեջ բավականաչափ պահպանողականություն կգտնվի, որ հետաքրքրությունս լուսածառագ շիկահերի հանդեպ կորի:

Քիչ ժամանակ անց, քանդակագործ ընկերս իր մեքենայի ուղևոր կանանց հետ գնաց լճափ՝ զրոսնելու, բայց բուն պատճառն ուրիշ էր. հայերը սկսել էին գրեհիկ կատակներ անել, այն էլ՝ անպայման բարձր ու տեղացիների լեզվով, և նա գերադասեց առժամանակ խուսափել նրանցից:

Հայերը դա զգացել էին և, հենց զրոսնողները վերադարձան, այս անգամ իրենց հրաժեշտ տվեցին մեզ, որ վերադառնան: Ես, որ քանդակագործին արդարացնում էի՝ նշելով արվեստի առանձնահատուկ բնույթի հանգամանքը, ծաղրում ինքնավարականների հաստ փորերն (իհարկե ոչ բոլորն էին հայաստանյան հասկացողությամբ հաստափուր) ու ոչ մտավորական հետաքրքրությունները, ստիպված էի հիշելու ուղուցքին մասին և մի կողմ քաշել համայնքի դեկավարին, որ իմանամ, թե արդյոք հնարավորություն ունի ինձ համար որակյալ քժշկական հետազոտություն ապահովել: Հարցրեց, թե ինչ խնդիր ունեմ, ցույց տվեցի ուսուցքը, ուրախ բացականչեց, թե ինքն էլ ունի դրանից արդեն քանի տարի է՝ ճարպագնդիկ է, շատերը խորհուրդ են տվել վիրահատել, ինքը չի լսել իինա կզտմի՝ ցույց կտա, բայց չգտավ: Ինչ վերաբերում է քժշկական հետազոտությանը, այն պետք է ամբողջական լինի, որը կապահնջի հսկայական ժամանակ (ֆինանսական կողմի մասին 2-ս էլ չխսեցինք) և, միզուցե, ստացիոնար հսկողություն: Ես հրաժարվեցի ստուգվելու մտադրությունիցս:

Գնաց նաև Ֆրանչեսկան, որի չմնալի ուր-որ է տեղի սակավության խոսակցություններին էի վերագրելու, բայց ինքը պարզաբանեց, որ մտերիմ ընկերուին է եկել Խոտալիայից, պետք է հասնի խնջույքին, որն այդ առքիվ կազմակերպել են նայուաքաղաքում, որտեղ ինքն առանձին բնակարան ունի, իդեալ, դատարկ. երեւ պետք լինի ինձ ու ընկերուիու, բանալին կտրամադրի:

Հետո բոլորը գուվեցին խորովածը, ես իմ մեջ փրվեցի, ընկերուիու պատրաստած սալաթ-բանն էլ ախորժայի էին որակվել, զարմանալի էր, ուտեկիքը դեռ առաս էր, մինչդեռ Շամբարի ժողովությունը, որ անընդհատ հետաքրքրվում էին, ոչ ոք չկերպեց: Երեկոյան 10.30-ն էլ անց էր, երբ հայտնվեց մեր կազմակերպչություն ներորդ հետ, արդարացավ, որ առազաստանավի վրա են եղել, որը վարձել են ընկերներով, երկար չարշարվել են անքամի եղանակին, մինչև խարիսխ են զցել: Զերմ զրկախառնության շրնդառաջեց, ես էլ, հենց պատեհություն եղավ, Սաշային

բողեցի, որ Տունը ցույց տա իրեն, բայց հետո, իհարկե, հյուրասիրում էի կարեցածիս չափ: Ասաց, որ ևս 2 առաջաստանավիրդ հիմա ափին են, սիրով կմասնակցեին խնջույքին, հրավիրեցի, հետո ինքը տատանվեց, թե հոգնած կլինեն, ձգձգեց, մինչ եղայրը զնաց, որ չսպասեցնի նրանց և չվերադարձավ: Ինչ-որ մեկն ուզեց պարզել, թե որքանով քանի հաճույք է առաջաստանավ (որպեսզի ավելի ազդեցիկ հնչի հայաստանցիներիս համար՝ յախտա) վարձելը, աղջկը պատասխանեց՝ նարդագրովս օրական 15 դրամի չափ, դա մի քանի անգամ էժան է, քան հյուրանոցը կամ տունը: Ճիշտ է, շան տանջանք են քաշում՝ ամբողջ օրը նավի վրա քանելով:

Ինձ Էվանսից հարցրեց՝ չգիտեի, թե ինչու չեր եկել, զանգեց, անզիացին ասաց, որ արդեն մեր քաղաքում է, մերենայու է, բայց մեզ չի գտնում: Ես կարծում էի նրան ծանոք էր տեղը (նախանձով էր խոսել մի անգամ, թե ամառը Թարգմանչի տուն ընկերու քախտը ունաց վիճակում է, իսկ ավելի երիտասարդու անփորձ թարգմանչները պետք է սպասեն), այլապես ուղեցույց նամակ կգրեի՝ թշնամուս չի ցանկանա, որ տրամաբանությանն ապավինելով փորձեր Տունը գտնել. մայրաքաղաքի կողմից մեր փողոցը 58 համարից նվազում էր մինչև 30-ը, որին հաջորդում էր 36-ը, որը մերն էր: Երկար քացարեցինք, թե ոնց զա, ես, կազմակերպչուիին, Սաշան դուրս եկանք փողոց դիմավորելու: Կազմակերպչուիին ասաց, որ ճամբարի վերջին օրերի մքնուրության լարված էր, ինչու՝<sup>3</sup> առանց հենց իրենց՝ \*-ացիների վարքին քացարություն տալու: Ես վայելելով՝ հարցին 1000 ու 1 նույնքան ոչ անկերծ պատասխան տալու հմարավիրությունը, ծամծմեցի դրամցից 1-2-ը, ինքն էլ անմիջապես արդարացավ, թե ճամբարականներս չգիտենք, թե ինչքան ծանք էր իր գործը: Հետո իրենք զնացին ներս, ես մնանակ սպասեցի անզիացուն, որի ձեռքի հեռախոսը նստել էր, կապը կտրվել էր:

23.45 Էր, «Էս 5 ավտոն էլ անցնի, էս 3-ն էլ» հաշվելու վերջին էի, երբ մերենայի միջից ինձ տեսնելով Էվանսը ճանապարհի մեջտեղից աջ քաշեց ու արգելակեց: Իր Կամիլա անունով ընկերություն հետ էր եկել, որը մի փոքր արծվաքիք, ճերմակամորք ու մուգ կապույտ աշքերով նրբակազմ աղջկի էր: Հաց կերամ՝ Էվանսը կազմակերպչություն հոգու հետ էր խսդում, մինչ Սաշան սրան ճանապարհու նավածոց, հետո վրա պրավինձ՝ քացահայտորեն սրամտության ու ուղղախոսության տեստի ներարկելով ընկերություն մոտ: Քիչումիշ դիմագրավեցի փորձությանը, որոշ ժամանակ էլ կազմակերպչություն հետևից խոսեցինք (‘Ի՞նչ էիր մտածում այս ստեղծագործությունը գրեկիս’... ‘Վեալը գրեցի՞ք, հետո՝ զնացիք իրատարակչի մոտ, թե՞...’ Այս ի՞նչ՝ «թե», ծիծաղեցինք, - ին իրատարակիչը նախ գիրքը չեր տպելու, հետո հեղինակը զնար): Վաս չի զգում ինձ, որ հետևից խոսում էինք՝ երևի բոլորովին յուրային չեր կամ իր դերին չեր համապատասխանում, չգիտեմ, ճշգրիտ քացարությունը չզտա:

# ՏՀԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՄՎՍ

Շատ խմիչքը վրաս լավ է ազդում՝ գիշերն աճխոնց էի, մանավանդ որ պահպանակի կարիք չեղավ. երբ ասացի, որ չունեմ ‘վայ’-ի նման մի բացականչորյուն արեց, բայց շարունակորյունից դատելով՝ հենց այնպես, որովհետև հետազայտմ ևս ոչ մի անգամ չպահանջեց:

Առավոտյան ամերիկացի գույզը բոլորիս նախաճաշի հրավիրեց մի բաղրավենիքային պրարան՝ «Ինչիմանամինչփիդ և զգիտեմինչելլեր», որն այս կրողմերում չտեսնված մարդամոտորյուն ու առատաձեռնորյուն է՝ 20 դրարից ոչ պակաս միանվագ ծախս:

Վերադարձին Էվանսին ու Կամիլային գտանք շփորահար, խեղճերին թողել էինք քնած, բայց մեզանից անմիջապես հետո զարքենել էին ու տեսել՝ տանը մեն-մենակ են, դուռը՝ դրսից փակ. ես ալարելուց, խոզաբար երկողող չէի թողել իրենց: Ֆլամանդուիին, որի գրադմունքը, ավելի ճիշտ մասնագիտությունը մերսումն էր, դեռ մինչև նախաճաշը դրսում, պարտեզի ամենամուտ ծառի ստվերում մերսել էր ընկերուիոս ու քանդակագործ ընկերոջն, ես էլ երես անդեցի, խնդրեցի (այնպիսի զգացում ունեի, կարծես անմահական ջրի առյուրը գտած լինեի)՝ և արժանացա նույն բախտին:

...Աննկարագրելի բարձացա, հոգերս ու դժբախտորյուններս կարծես բավկեցին վրայիցս... մանավանդ որ ինձ կրկնակի մերսեց, մի ուրիշ «հերթագրվածի»՝ Անտոնի տեղն էլ, որը վերջին պահին հրաժարվեց (ասացին՝ վախեցավ): Մինչ ես մերսման ողջ միջոցին ինձ ստիպում էի եվրոպացի լինել, իրեն որպես կին չընկալել՝ ուշադրությունս շեղելով բաց պիրկ վորի, շիկամազ ոտքերի մոտիկորյունից, բայց ինքն ընկերուիոս ուղղակի ասել էր, որ քանդակագործին ու ինձ մերսելուց հետո այն օրն է ընկել, որ պետք է զանգի ընկերոջը՝ խնդրի, որ տանն իրեն սպասի՝ արդեն անկողին մտած:

Կեսօրին Էվանսը նորից ընկերուիուն բերեց ինձ մոտ, սենյակս և հմուտ վարժեցնողի նման սաղբում էր ինձ սրախտության ցուցադրական ելույթի, իսկ ես, վայրի գազանի անհարմարության զգացումով, բայց ներգրավվեցի խաղի մեջ, որի ամենաբունդ պահին դրմերի մեջ հայտնվեց Յուլիթը: Ես խնդրեցի, որ անհետանա, չէր անհետանում, ավելի վճռական խնդրեցի, անհետանում էր, երբ հետ պահեցի, փարարվեցինք: Ասաց՝ մոտիկ էր, իշշում էր, որ երեկ ծննդյանս օրն էր, բայց այսօր կարողացավ գալ: Բացի այդ, ուզում էր կարճ ժամանակով Տան ինտերնետից օգտվել, առաջարկեցի իմ ծածկաբառը, քանի որ ինտերնետից միայն այդպես կարելի էր օգտվել, ու վճարն էլ գրվում էր ծածկաբառի տիրոջ հաշվին, շնորհակալություն հայտնելով պատասխանեց, որ ժուժան, որի հետ այստեղ մի անգամ ապրել է, արդեն տվել է իրենք: Յուլիթը՝ նույնական բարգմանից, Բագելից, \*-երենից բարգմանում էր ֆրանսերեն: Ես սիրով, բայց զգույշ էի նրա հետ, որովհետև 3 տարի առաջ, նույնպիսի ժարգմանշական ճամբարում հայերեն Բվաջնջում բարգմանվող անունով վայրում անասելի հուսախարություն էի ապրելիր պատճառով. Վերջին օրերին գրկված էինք շրջում դառնացնելով ինձ հետ ընկերության ձգողը մի իիանալի, թեև ոչ պիրուն չես աղջկա, բայց հետո մայրաքաղաքի իր բնակարանում ինձ ստիպեց առանձին քնել՝ որովհետև ինքն ընկեր ունի, որի հետ միասին իրենք տուն են սարքում... Աստծո զանդանում: Ես չքույլատրեցի ինձ հարցնել, թե այդ դեպքում ի՞նչ էր մտածում մեր գրկախառնությունների պահին, երբ ինձ զսպում էր՝ ‘համբերիր, մի քիչ էլ համբերիր’ հորդրով, որը հիշելով մոխրանում էի նախ ...-Մոսկվա, ապա Մոսկվա-Երևան ինքնարիուում:

Սովորականից շուտ ճաշեցինք Կամիլայի պատճառով. շտապում էր, պետք է տանը լիներ, երբ իր երբեմնի ընկերն ու երեխայի հայրը տեսությունից հետո վերադարձներ զավակին: Ուստի Էվանսին էլ գործի լծեցի՝ Ֆրանկություն ընկերուիոս բերած երշիկները խորովեց՝ վախսվորած, Յուլիթը՝ մի բերան ասելուց հետո,

նույնպես մնաց՝ ‘իմ խաթեր’, համառեցի՝ դիմացս նստիր, որ կարգին տեսնեմ, նստեց, անքարթ ինձ էր նայում, քաջի այն վայրկյաններից, երբ իր վրա ուժ գործադրելով (Եթե միայն 3 տարի առաջվա պես երևակայությանս զոյ չեմ տալիս) խոսում էր ընկերութուս հետ, բարեկրորդուն ցուցաբերում:

Հետո Յուղիրը զնաց միանալու իր ատաղձագործ ընկերոջը, որից արդեն 2 տարեկան տղա ուներ, ես, անտեսելով այն հանգամանքը, որ \*-երենից մի փոքր ժողովրդի լեզվի թարգմանչի համեստ դերում էր այստեղ, դրվատեցի Էվանսի հողվածը, թե՝ արդեն հանգիստ եմ, որ գրողի իմ մասնագիտությունը հետո չի մեռնի: Գովեստս արտառոց էր Թարգմանչի տաճր շրջանառող չափաված-ձևաված գմահատականների ու մաշված կատակների համեմատ, այնպես որ միայն Էվանսն ընկալեց ու ամաչելով իր երախտագիտությունն հայտնեց:

Գնացին:

Երեկոյան նորից կրակ վառեցինք, փոքրիկ գերմանական երշիկներ ու կարսոֆիլ խորովեցինք և բարի ճանապարհ մարեցինք Անտոնին ու Ինեսային, որ հաջորդ օրը լրելու էին մեզ: Կեսզիշերլ հազիվ էր անցել, երբ հրաժեշտի գլկախառնությունների բռնվեցինք նրանց հետ՝ ‘առավոտ շուտ ենք շարժելու, շատ շուտ’: Ամերիկյան \*-ացիները Սաշայից կարծես ավելի ջերմորեն բաժանվեցին, քան ինձնից, քայլ՝ ինձնից, ինչ անեմք:

Պառկեցինք, իմ մեջ մեծ կրծքերը դրանց տարրեր կողմերից մտտենալու նոր հետաքրքրություն բորբոքեցին, շվեյցարուիկն անսպասելի հարցրեց, թե Հայաստանում ընկերուի ունե՞մ, ասացի՝ ոչ, ասաց՝ ափսոս է, ապշեցի, հարցրեցի, թե ինչու, լրեց, ես էլիրեն հարցրի, թե՝ իսկ դու՞՝ փոքր հապաղումից հետո (փոքր քան էլքողարկելի՞քն էր), պատավանեց՝ ոչ:

Առավոտյան 8.30-ին զարթնեցի, ամերիկացիները դեռ չեն զնացել, 9-ն էր, չեն զնացել, 9.30 էր, չեն զնացել, մյուսները վեր կացան, նորից հրաժեշտ տվեցին իրար, ես դիտմամբ պառկած մնացի, հետո նոյնիսկ համակարգչի առաջ նստեցի-աշխատեցի, քայլ սենյակից դուրս չեկա՝ հո հազար անգամ մնաս բարով չեմ ասելու:

Էստոնացին էլ հետները զնաց մայրաքաղաք, քայլ՝ ոչ Սաշան, նախատեսվածի պես, որը մնաց, որպեսզի երեկոյան ժուժայի հետ զնա, ես ասացի, որ մենք էլ կուգենայինք, քայլ եռ կնիկը, չոր-չոր, թե՝ չի կարելի, Տանը պետք է մարդ մնա: Կարծես աշխարհի գողերը սպասում էին, թե որ գիշերը Թարգմանչի տունը դատարկվի, որ անքավ գանձերը կողոպտեին, երբ իր բոլոր բարեհարմարություններով հանդերձ, այստեղ արժեքավոր ոչինչ չկար, քայլի համակարգչներից, որոնք արժեքավոր էին միայն որպես հետություն, այնքան որ դանդաղ էին աշխատում: (Ծիշտ է, իմաս իշխեցի՝ նաև 1563 թվականի նկարազարդ սեղանը կաք՝ նախասենյակում, քայլ այնքան մեծ էր, որ դուրս հանելու համար պետք է Տոնը քանուին): Զայն շիամեցի՝ իր մեքենայով էինք զնալու, գոտով որ չինք նստի, իսկ զնացրով երկար կտևեք՝ 3 ժամ, քայլ դրանից պատկերացում էլ չունեի, թե մայրաքաղաքում որտեղ էինք գիշերելու, հյուրանոցները շատ քանի էին, Ֆրանչեսկայի մոտ հավանական է Սաշան կմնար, քանի քաղաքում ընկերոջ մոտ մի ծալրվի մահճակալ կար, որի վրա ես շատ լավ հարմարվեցի մի շաբար, քայլ թերկու հոգո՞վ, այդ կրծքերի էլ պարագայում...

Սի քիչ աշխատեցի, զնացինք, որ ընկերութուս ցույց տամ քաղաքը, տոնավաճառի նման մի տեղ կար, մտանք իրը ինձ համար հովարով գլխարկ առնելու, քանի որ վերջապես տաք օրերը սկսվել էին, իսկ ես տանել չեմ կարողանում քաց գլխով արևին քայլել, քայլ իր համար կարմիր, շապիկի գույնին հովար առանք՝ առանց գլխարկի, հողաքավեր, իր տղայի համար՝ երիտասարդական նորածն գլխարկ: Գները իմ հայատանյան երևակայությունից այնքան բարձր դուրս եկան, որ այդպես էլ ոչ մի գլխարկ՝ ‘շիամեցի’, ինքը միզուցե զգալով, թե քանն ինչ է, ուզում էր նվեր առնել՝ ինքնասիրությունս դիմադրեց:

Թափառեցինք, լճափի նկարիներից մեկն ինձ ձայն տվեց, թե նստեք նկարեմ՝ պրոֆեսիոնալ դիմագծեր ունեք, արտահայտությունը շիամականարվ հանդերձ, միայն ‘շնորհակալություն’ պատասխանեցի \*-երեն, հետառում էինք, ձայնեց, թե ո՞ր երկրից եր՝ Հունաստանի՞ց, ասի՞ չէ, ավելի հեռու, Իրանի՞ց, չ՛, մի քիչ ավելի մոտիկ, Խորայե՞լ, ո՞չ, Հայաստա՞ն: Բա ինչպե՞ս եք այդքան լավ խոսում մեր լեզվով: Մեզ մոտ բոլորն էլ ազատ խոսում են ձեր լեզվով: Այդտեղ բոլոր մյուս նկարիները ծիծաղեցին ու տեղներից վեր կացան, որ տեսնեն, թե՝ ում հետ է խոսում իրենց գործընկերը, սա էլ վագելով մոտեցավ, թե՝ ծանոթանանք. մայրաքաղաքի քանդակագործ էր,

ամառը եկել էր լճափի փող աշխատելու, ահազին բան գիտեր Հայաստանի մասին, հատկապես՝ ցեղասպանության, քածանվեցինք, իհնա մտածեցի, որ ափսոս ես Էլ չհարցո՞ւ գիտ գալի՞ս է այդ գործից, թե՞՝ ոչ:

Ընկերուիիս ուզրւմ էր նստեհնք-ճաշեհնք, բուրժուական տեղերն ինձ վաճում էին, իրեն հակառակը ձգում առնվազն մի պատճառով, որ տուրիստական էին՝ ցուցանակները գերմաներեն էին գրված: Ի վերջո մի տեղ ընտրեցի, որտեղ, պարզվեց, տեղական հարթեցողներ էին նստած, հասկացրի, որ սխալվել եմ, անդեց, որ մնանք՝ գուգարան էր ուզրւմ, բայց նույնիսկ գուգարանն էր բարդ տեղ, դուրս եկանք, ոչ հեռու մի վայելուշ բացօքյա ուստորանուս հանգովանեցինք: ‘Տիկինը’ 2/3 մասով ջուր խառնած գինի ու տապակած հավի միս ուզեց, ես քրվասերով տապակած ծովային ձուկ ու զարեցուր, կերանք, խոսեցինք կինոներից, իր սցենարների մասին պատմեց, որոնք արդեն նկարվում էին, մտահղացումների, որոնցից մեկը՝ մոլատարի կտրված մատների մասին, ծանոթ սյուժե թվայով հանդերձ, հետաքրքիր էր: Իր սննդամբերը պետք է առնեինք, դա էր տնից մեր դուրս զալու բուն նապատակը, բայց ուստորանք քողեցինք ուղիղ 8-ին՝ սուպերմարկետի փակվելու ժամին: Գնացինք տուն, խեղճ Սաշան դեռ փոքր պայուսակը նախագավիր հանած սպասում էր. Ժուժան, որ մոտիկ ապրող ընկերուին տեսնելուց պետք է հետ զար ու իրեն վերցներ, ավտոյով ընկել էր ճամփեզրի փոսը, բայց բան չէր եղել. վերջը եկավ՝ գնացին:

Մնացինք մեն-մենակ: Ինտերմետի փոստս ստուգեցի՝ հիվանդության նման, Էվանսից մի նամակ կար, թե մայրաքաղաքում լինելուց ծայն հանեք՝ սուրճ խմենք, ինքնարննադատաբար ծնունդիս այդքան ուշ ժամի գալն էլ «կլիրություն» էր համարել:

Կեսզիշերին մոտ նկատեցի, որ աջ ոտքիս բութ մատն ուղել ու ուժեղ ցավում է: Պառկեցի, ոտքս բարձր էի դրել, շվեյցարուիին քանսվեց, հավես չունեի, բայց մտածեցի, որ այդ գործից հետո մարդ ամենալավն է քնում՝ փորձեն: Մի անգամը չօգնեց, հետո երկրորդ անգամ էլ պրծա, բայց ոտքիս ցավը դեռ զգում էի, սենյակի դարակներից մեկում քնարերի կիսաստ տուփ էի գտել՝ ոտսերն մակագրությամբ, ոչ ժամկետանց, 2 հար խմեցի – քնեցի:

Մյուս օրը պատշգամբում նստած էի ոտքս տմկած, տնտեսուիին եկավ մի շիշ շամպայնով՝ ծննդյանս օրվան նվեր, իրեն չի հրավիրել անձամբ մի 2 ցերեկ չտեսնելուս պատճառով, չի էլ զանգել, բանի որ չզիտեի, թե այստեղ որբանով է կարգ նրան քարզմանիշներին հավասար պատիվ ցուցաբերել, տվյալ պահին այլ ելք չտեսա, բան ամուսնու հետ ընթրիքի հրավիրելը, սա էլ երեկոյան եկավ՝ սիրուն թրի մեջ փարաբած մի շիշ խանութի սովորական զինի առած, 25 (քանինինց) տարի առաջ եղել էր Սևանի ափին, միջազգային շինունկատի կազմում, լավ պահպանված հիշողություններ ուներ, որոնք բոլորը պատմեց, ես էլ լսում էի համբերությամբ՝ նայելով կրկիկ բեղերին ու ազնիվ աջքերին, հարցրեցի մասնագիտությունը, ասաց անտառի ճարտարագետ՝ անտառների նախագծման ու վերակազմավորման պետական գրասենյակի աշխատակից, բայց գործի մասին նվազ ոգևորությամբ խսեց, բան՝ հայերիս ինչ-որ բացարիկ հասկրիպտունների, որ նկատել էր ճամբարում: Անզ միացել էր նաև մի գերմանուիի տիկին՝ 56-ամյա, որը \*-երենի հետ կապ չուներ, անզերենից ու ֆրանսերենից գերմաներեն էր բարգմանում, բայց գերադասել էր այստեղ անցկացնել ստեղծագործական արձակուրդը և գրադեցրեց ամերիկացիների սենյակը:

Հաջորդ երեկոյան ընկերուիոս հետ զնացինք լճափի: Հարցրեց, թե՝ դու իսկապես չե՞ս եղել Երևանի այսինչ տեղի իմ քանակարանում (իբր թե՞ ո՞նց է հնարավոր), խոստվանեց, որ ունեցել է ինձ սիրահարվելու մի քանի շրջան (ինչպես երկի, - ավելացրեց, - շատ ուրիշ աղջիկներ համալսարանում, որ մշտական սկանդալներով սովորում էի, հետո էլ հանգամանքների աներևսակայելի շրջադարձով մի քիչ դասախոսեցի, ինչը շուտով քողեցի): Ես աղոտ մտաբերում էի, որ մի 2 անգամ համբուրգել էինք: Ինքը հիշեց, որ մի անգամը՝ լսարանում, երբ ինքն ուսանողուի էր, ես՝ դասախոս, իմ կարծիքով (իհնա մտածեցի), հարմար տեղ՝ ընկերոց բնակարան չի եղել, որ տանեի, իսկ մեր ընդհանուր հաշմանդամ ընկերուիին իր տանը մեզ առանձին չէր բողնի նույնիսկ մի երկար համբույրի շափ... Հանկարծ իր վիրավորանքն արտահայտեց, որ իր նախավերջին երևանյան այցելության ժամանակ սրճարանում տեսնելով չեն բարեւել, ես չետաքրքրվեցի, թե ինչու ինքն էլ չէր զանգելինձ խոսացածի պես իր վերջին գալուց, երբ որ իր նախմանական բացատրությամբ դա իմ Փարիզում եղած օրերին էր համբնել, իսկ այստեղ խոսքի մեջ մատնել էր, որ՝ ոչ, ասացի, որ բարեւել, բայց չեմ մոտեցել իրեն. պատճառն այն էր, որ

մեր խմբի մեջ իմ այդ պահի աշխատանքային դեկավարն էր, որի ու ներկայիս շվեյցարուհու կապը ժամանակին հանրահայտ էր, նաև՝ վարկարելիչ, քանի որ այդ մարդը խստություն չէր դնում ոչ կանաց, ոչ նրանց ձեռք զցելու միջոցների մեջ: Արի ու տես, որ շվեյցարուհին կապը ժխտեց, համարեց այդ կնամով երևակայության արդյունք: Ես ինչ է, ի՞նչ՝ չի երդվեցնելու իրեն, ընդամենը, ինքնապահովագրման համար, ոչ մի պատասխան չտվեցի, երբ հարցրեց՝ իսկ արդյոք նշանակություն ունե՞ն ինձ համար իին պատմությունները:

Հարց տվեցի իր այդ այցելության զիսավոր առիթի շուրջ. ինչպե՞ս է զգում իրեն հայ ահարեկիշը, որին եվրոպական դատարաններից մեկը ցմահ բանտարկությամբ էր պատժել, իսկ շվեյցարուհին, որ նրա անմեղությունը վողիարողներից ու արդարացման համար պայքարողներից էր, Հայաստան էր ուղեկցել 20 տարվա կալանք կրած այդ տղային ասողդության վատրարացման կապակցությամբ ազատ արձակվելուց հետո: Ասաց, որ շարաչար զգում է աջակցության համար, ահարեկիշը շատ չանցած սկսել է իրենից հետ պահանջել այն փողը, որ նրա հարուստ ազգականները, բազմաթիվ դիմումներից հետո, ‘լայադ’ են արել տալ՝ հազիվ 10 տոկոսը հոգալով անհրաժեշտ ծախսերի, որոնց զգալի մասն ընկերուին էր հոգացել իր սուր միջոցներից, անհատույց, ընկերուին քույրն էլ նրանից ու բոլորից բարուն ուղարկել է ահարեկիշն նրա ազգականների /եղայր, մայր/ տված գումարը... Ահարեկիշը նաև լուր է տարածել, թե սիրային կապ է եղել շվեյցարահայուհու և իր միջն, երբ որ ինքը իմարություն է ունեցել սեռական անկարողության խնդրով դիմել մի երևանցի քժշկի, որի բուժքույրը չգիտեմ ում հարևանն է, ու այդպես ողջ քաղաքն իմացել է, թե ինչն-ինչոց է: Ահարեկիշն ինքն էլ փոքր-մոքր մնկն է, ոյուցազուն չէ, ինչպես նկարագրել է ցեղասպանության ու ահարեկչության թեմաների մեջ մասնագիտացած հայաստանցի գրող-հրապարակախոսը...

Ասածներից ամենացնցողն այն էր, որ ահարեկիշն իսկապես անմեղ է եղել, որին մենք չէիք հավատում, համարում էինք դատապահտանական հնարք: Շիշտ է, տղան իսկապես, որպես գաղտնի կազմակերպության անդամ, զենք տեղափոխել է, իր պարօն էլ ցեղասպան բուրքերի դեմ դատարանում անկեղծ է եղել, բայց դա իսկական ահարեկիշներին հայտնաբերելը չբաշարած ուստիկանությունը շահարկել է, որպեսզի կծկի ապացույցների անբավարարությունը:

## ՏՀԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՄՎՄ

\*Երեմից հղանդեռն թարգմանող մի նոր կին եկավ՝ քառասունին մոտ, փորբամարմին, ակնոցավոր, տեղավորվեց վերսի միակ ազատ սենյակում (Ֆրանչեսկայի): Նոր ծանոքության համար նախատեսված բոլոր հոգեկան պաշարներս արդեն սպառվել էին, հնարավորինս քիչ հարց տվեցի իրեն, իր հարցերին միավանկ քառերով էի պատասխանում: Բայց մեկուսի կյանք վարելը հեշտ չէր, քանի որ նույնիսկ մայրաքաղաքից վերադարձած անմարդամուս էստոնացին ցանկանում էր ինձ պատմել իր արտագնա կյանքի արկածները: 2 քառի արանքում տված դադարի միջոցին, որ սովորաբար երկար էր լինում, հաջողացի ճողովով համակարգչին մոտ, որի պատճառով քրված էր հետևյալ մի քանի օրը:

Ժուժան նոր կենվորի պատվին էի իր արևին խապանական ընթրիք կազմակերպեց, որը նոյն՝ հավանաբար մենակ իր համար պատրաստած դիետիկ հատիկեղենն էր՝ ոսպ, կիսաեփի դեղին բրինձ, խոշոր շերտերով խաշած գազար, սալիտակ ճակնդեղի ձողիկներ, որ քածանեց մեզ՝ մինչև կերա, հողիս բերանս եկավ: Ընթացքում էլ սեղանի միսակ ոտեղի բանը՝ խորոված կծու բիբարը, որ նոր ժամանածին շատ դուր եկավ և, չժիժաղեք, ծննդյանս օրվանից էր մնացել, կոչեց՝ ‘վրացական, թէ՞ հայկական’ ինչ որ է: Երբ ամաններիս պարունակությունը կուլ սովեցինք-սրծանք՝ խմի մեջ հակառակի պես շատ սրտանց էր լցրած, իսկ ես սովոր էի ափսեն մաքրելու ծնողներիս պատգամը շխախտել, Ժուժան երևի դեմքիս ինչ-որ ծայրահեղական արտահայտություն նկատեց, որովհետև ուս շոյեց՝ հայտարարելով, որ լուրջ խապանական կերակոր չհամարենք կերածներս, խոստանում է, որ իմ հրամեցած երեկոյան համեղ բան կապատրաստի՝ մերժիկական, հետագա մի քանի օրն էլ սիրաշահում էր ինձ՝ ի լոր բոլորի հայտարարելով, թէ խիստ զգայուն ու խորը մարդ եմ:

‘Ի պատասխան’ այդ ընթրիքի, բողեցի գրունելու գնացի ընկերուիուս հետ, մինչդեռ Ժուժան ցերեկը ‘տնեցիներին’ հրավիրել էր պարտեզում շամպայն խմելու, իսկ ես ասել էի, որ մի շիշ էլ մոտս կա. իման կարող էին կասկածել, թէ ուզում եմ շամպայնս ընդհանուր սպառումից ազատել: Պարտեզի իր միջոցառումը հետաձգեց՝ կարծես ինձ ընդառաջերով, բայց, մենք է, փողոցում սկսեցի նրան հիշել իմացածս ամենակոռապիս բառեր կցելով անվանը, իմշպես օրինակ՝ ‘դանջող’, ‘դաղիք’, որոնց իմաստն ինձ համար ևս մշուշու էր, որովհետև մեր նախորդ սերնդի լեզվում, այս էլ իմ հայրենի Գյումրիում էին գործածական, բայց հնչողությամբ լրիվ բավարարում էին այդ պահի պահանջներս: Միաժամանակ վախս արտահայտեցի, որ այն սովորությունս, որ թեկուզ մտքի մեջ մենք հասցեին վաս բառ ասելուց հետո չէի կարողանում այդ մարդու հետ հարաբերվել առաջվա նման, կիանցեցնի պոռքկումի, եթե Ժուժան փորձի մուննար զալ վրաս որևէ առիթով, ինչն իր սիրած զբաղմունքն էր:

Սիրսու հովացնելու համար ուստերեն 1-2 հայիոյանք էլ տվեցի՝ զարմացնելով ընկերուիուս, որից հետո միայն գրոսանքը գրոսանքի նման դարձավ, մանավանդ որ արդեն ավանդույթի մեջմ հմայքն ուներ: Նորից համեմատելով ճամբարի բուռն և թարգմանչի տան հանդարտ կյանքը՝ ինձ միշտարեցի Շանդոր Մարախի ‘ՀԱՍՏԱՐՍԱՆ’ գրքի մի կտորով, որը նոյն օրն էի թարգմանում.

Ես, օրինակ, - ճիշդ է, արդեն հասուն լրդամարդ ժամանակս, - լրարսիցի լողով ու թեմիսով: Առանձնապես քենախը սիրեցի, երբ արդեն քառասունն էլ ամոց էի: Սա եկալի մարդկային մարզական է, մրցակիցներն իրար դեմ են դուրս գալիս՝ ամբողջ իրենց ուժը գործադրելով, այսուհանդերձ որոշակի հետավորություն միշտ մնում է՝ իրար երբեմ չեն դիսպառ: Ինչպես որ Լյուինը երբեմ չընսավ էրազմուսին, որի դեմ մենամարդում էր ողջ կյանքում:

*Իսկ ի՞նչ հաճելի էր լողալը, մանավանդ՝ ծովում: Երկար լողալը խոլ քանձր ջրում, կարծես եղ ես վերապառնում գոյության նախմական լուրերի գիրկը...*

*Սակայն անդրադարձս, որ այս մարզանքները շեղում են ինչ աշխարհանքից: Մարմնիս համար ախորժելի են, բայց հոգուս օգլակար չեն: Իսկ այն, ինչ աշխարհանքիս ու հոգուս համար լավ չէ, ի վերջո մարմնին էլ է վնաս: Այդ պարմառով դադարեցրի զվարժանքներս, որոնցում սնասդարձությունն էլ էր զգալի երիկասամարտը ու առողջ են մնացել...*

*Միայն թե իմ գործն այն չէ, որ երիկասամարդ ու առողջ մմասմ, ոչ էլ նոյնիսկ՝ որ հիվանդություններից խոսսափեն:*

*Մրավոր աշխարհանքի կոչված մարդու գործը մեկն է՝ մրավոր աշխարհանքը: Եվ միզուցն զրոսանքը մարմնի կուխման միակ լուրակը նաև լուրակն է, որ կարող ենք քոյլ լուր իմքներս մեզ ինչպես բանրարկալներ, որ օրական մեկ ժամ շրջում են բանրի բակում: Արդյո՞ք աշխարհանքն ամենամեծ բանրարկությունը չէ:*

Ահա այս զարմանալի տեսանկյունի շնորհիվ կրկնակի հաճույք ստանալով գրոսանքից, այդ օրվա գրույցից իմացա, որ ընկերություն զարմուիու ամուսինը՝ նույնպես շվեյցարացի, հարբեցող է եղել, բայց այնքան մոլի, որ ինքնահրկիզելի է երկրորդ հարկի իրենց տան առանձին մուտքի աստիճանների վրա: Ավելի վաղ մի քանի անգամ ընկերության էր պատմել իր հարբեցող ամուսնու մասին, որը դեղագործ է, տարիներ է արդեն բաժան են ապրում, ‘այլ հակումներ’ էլ ունի կարծես թե, բայց քանի ինքը չի ուզում, ընկերության օրենքների խստության պատճառով դեռ չեր կարող անկորուստ ամուսնալուծվել:

Սաշան Տուն վերադարձավ իր ասածից մի օր ուշ: Ժուժան, իբր անհանգստացած, բայց ավելի շուտ՝ հաջորդ օրվա համար ուսուի խոստացած բորշի դարդից, արդեն փաթփնքացել էր, թե՝ զոնե մի հատ զանգեր, չնայած ինքը գուշակում է, թե որտեղ, նոյնիսկ՝ ում մոտ է: Ես պաշտպանեցի մարդուն, թե պետք է ուրախանանք ուրեմն, որ մեր ընկերն իրեն այնքան լավ է զգում, որ չի շտապում նորից ստեղծագործական աշխատանքին լծվել:

Սաշան էլ եփեց իր ուսական բորշը, կերանք, համեղ էր, ես նոյնիսկ հացով պրեցի ափսես, ինքը նկատեց, հուզվեց, թե՝ էղ մեկն արդեն չափազանց չէ: Հետո զինի խմեցինք, զինովացանք, հոլանդուիին՝ Մարթան, ու ես երգեր նվիրեցինք իրար, լավ բառեր էլ գեղգեղացինք, շվեյցարուիին ցուցադրաբար վեր կացավ, թե՝ հոգնած է: Չնայած պատմությանս ավելի կազեր, որ զիշերվա առաջին ժամերը Մարթայի անկողնում անցկացնեի, բայց իր ‘բարի ու անուշ զիշեր եմ ցանկանում բոլորին’ բառերին, որ ինձ էր ասում նախասենյակում 2-ով էինք, չպատասխանեցի, թե ես էլքեզ հետ բարձրանամ՝ փոստս ստուգեամ, այլ միայն ձեռքիս երեսի կողմով շոյեցի շաքարի պես սպիտակ թլը, որը սառն էր, հակառակ գրույցի ընթացքում այստերին տված կարմությանը, որ իիմա էլ կար, և խելոք մտա սենյակս: Իսկ շվեյցարուիին զգոն սպասում էր, թեև հետո սկսեց քնածի ձևեր քափել, ես գրգռված էի, բայց՝ ոչ իր հանդեպ, այնպես որ՝ եթե ինքը նախաձեռներ, մի քան կստացվեր, բայց ինքն էլ չնախաձեռնեց՝ վերջին 2 օրը տեսած-հազեցածի նման իրեն պահելով, արդյունքում սերտութ երազներ տեսա մի համառ աղջկա մասնակցությամբ, որի վրա տարու էի դրել, որն ահազին ժամանակ գործում էր:

## ՏՀԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՄՎՍ

Գնացինք մեր հրաժեշտի տոլմայի համար շուկայից բանջարեղեն առնելու, Ժուժայի մեքենայով. ինչ ճիշտ է՝ ճիշտ, պատրաստակամ էր այն ի սպաս դնել ընդհանուր գործին: Որոշել էին գինին իրենք առնել, 5 լիտր էլ ես էի ուզում վերցնել, ուրախացավ, թե՝ ուրեմն, դու ու ընկերուիիդ էլ փող դրեք ու վերջ:

Մքերային գնումներից հետո մեզ իջեցրեց հանրախանուրի խաշմերուկում՝ տնեցիներին նվերներ առնելու ժամանակն էր: Առանք: Ես արդեն համարյա սնանկ էի՝ ավելի շատ ընկերուիիս էր վճարում, որը մի անգամ միայն դժվանուրյուն արտահայտեց, երբ նախսկին կնօշու էի նվեր առնում: Զհավացավ, երևի, թե՝ ինչու, ոչ էլ բացատրեցի: Հոգնած սատկում էինք խանութներից հետո, բայց ինքը խրվեց մեծ եփութափի մեջ, ես իրերս դասավորելու, ու երախակիշ գործերի՝ հյուրերի գրքում մակագրելու, համակարգչի ավելորդ հյուրերը ջնջելու, որ ներկա ստեղծագործությունը, որ չփոխած անուններով էի գրում, մարդ ես, պատահական ձեռքերի մեջ ջննին:

Ընթացին առաստ էր ու համեմ: Մարքան սունկ ու գալուշկա էր սարքել, ընկերուիիս՝ մի գորամասի ուտելու անառային տոլմա: Մենք տոնական էինք հագնված, ընկերուիիս սև ու գույնգգույն շորեր, ես նոր սպիտակ կոստյում, որով բոլորը հիացան, ասացին մողելի եմ նման, երբ որ ես ինձ ալֆոնսի դերում էի զգում, քանի որ փողն ինքս չէի տվել: Երեկոյան 9-ին սեղան նստեցինք, 11-ին վեր կացանք: Ես հայրենիքի մոտիկուրյունից նորից օյլ էի հուա տալիս, մյուսները մեկումեց ընկերակցում էին, ինչպես ավելի ուշ խոստովանեցին՝ իմ առողջության հանդեպ վախից՝ շշերի պարունակությունը հետո կիսելով:

Նախագալքում գինի խմեցինք: Մարքան, որի արյան մեջ շատ հրեական, մի քիչ էլ հայկական արյուն կար՝ իր ասելով, բայց Հոլանդիա էր զարթել \*-իայից, երգեց \*-ական երգեր: Ես՝ հայկական: Ինքը ազգագրական-լացակումած, իրենց ‘Արցախի’ կողմերի երգեր, ես՝ ‘Սի լար, մի լար’, ‘Կիլիկիա’, ‘Բարով եկար, սիրուն կրունկ’։ Շվեյցարահայուիին գնում զայիս էր, աշքովունքով անում, որ շուտ պառկենք, 3-ն էր, իսկ մենք 5 անց կես արդեն կայարանում պետք է լինեինք: Ես մնացի մինչև սեղանի վերջին կարիլ գինին. միևնույն չէ՞ր՝ վերջին օրով 2, թե՝ 1 ժամ կրնես:

Փարարվեցինք բոլորին: Որքան էլ ընկերուիիս նախապես պինդ գրկել էր Մարքային, սա ինձ փարարվեց ու բաց չէր բողնում: Ես իրավիճակը քերևացնելու համար նրան գրկեցի այսերի 2 ավանդական համբույրից:

Պառկեցինք, շվեյցարուիին մի տեսակ թատերականորեն զգվում ու քաշքում էր ինձ, որից գնալով անտարեր էի դատնում: Ի վերջո, չիմացա, ասացի՝ ‘Գառ ջան, դու հո ‘մանյակ’ չե՞ս’: Սիանգամից հոգոցները մի կողմ բողեց՝ նորմալ քրքջաց: Իսկ առավոտ ես զարթեցի ցանկությունից, բայց ուշ էր: Տեղատարափ ամձռն էր, որի տակ պետք է գնայինք ընդամենը մինչև նախօրոք պատվիրած տարսին: Գնացքում, որ ժամանակին եկավ, ժամանակին էլ հասանք մայրաքաղաք, ընդհանուր ինչ-որ ծրագրեր էինք կազմում-վերջացնում: Դա խիստ կարևոր էր, որովհետև իմ ինքնարիուին ընդամենը մեկուկես ժամ էր մնացել:

Արագ հրաժեշտ տվեցինք իրար. ես սլացա դեպի կայարանի մոտ սպասող օդանավակայանի միկրոավտորուսը, կիմը դեռ մի քանի ժամ ուներ սպասելու, մինչև իրեն տանող գնացքը գար:

**Այս գրածքի երկրորդ մասն առայժմ բապազրության ենթակա չէ որոշ տեղեկությունների հրապարակման վրա նրա գործող անշանցից ոմանց դրած արգելքի պատճառով: Այսուհետեղ հեղաքրքրվողները կարող են այն սրանալ որպես հեղինակի անձնական նամակ՝ դիմելով նրան հեկույալ ինքերներային հասցեով:** [vammart@freenet.am](mailto:vammart@freenet.am):



Θ    Ȣ    Ȣ    Ȣ    Ȣ    Ȣ

# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ [Ran out of memory]

Խաչիկ Կարսապետյանին

Ես տուն էի եկել սովորական ժամին, ավելի ճիշտ՝ սովորականից էլ շուտ: Առավոտ իմացել է, որ մահացել է հարազատներից մեկը՝ մի հիանալի կին, որի տղան ուշը չէր դարձնում հասակն առաջ մորը: Ուզում էի բոլորին քացարել, թե ինչ ափսոս էր, ու ինչպես տղան չէր գնահատում նրան: Ինչ-որ աշխատելս էլ չէր գալիս, բայց ոչ մեկին չկարողացա կտրել գործից, որ մի-երկու բաժակ խմենք-խոսենք-քերևանայի: Հետո բողեցի-սուն եկա: Ընթրիք դրեց: Կերա՞ - չկերա՞: Պառկեցի անկողնում, ժամը տասը չկար, մի քիչ հեռուստացույցի ալիքները փոխեցի ու քննեցի:

Որ զարքնեցի, վառեցի կորդիս լույսը, նայեցի տեսա, որ դեռ կեսօնիշեր էլ չէ՝ ժամը տասնմեկն անց կես էր: Ի՞նչ էր պատահել, ի՞նչ վիճակում էի, որ չկարողաց քննել. տուն էի եկել սովորական ժամին, ավելի ճիշտ՝ սովորականից շուտ, առավոտ իմացել էի, որ մահացել է հարազատներից մեկը՝ մի հիանալի կին, որի տղան ուշը չէր դարձնում տարեց մորը, գործի տեղուն ամեն ինչ նույնն էր. մանր-մունք տիհաճ խոսակցություններ եղան-անցան... բայց աշխատելս չէր գալիս, ու սովորականի պես երկար շմանացի՝ շուտ եկա տուն:

Միայն թե լավ բաներն էլ չմոռանամ: Օրինակ, հաստատվեց լուրը, որ նոր համակարգիչ եմ ստանալու՝ հզոր իիշողությամբ: Նոր հերոսներիս ավելի արագ կարող եմ մարմնավորել, հեշտ ու սահուն կշարժվեմ: Երկար կապրեմ:

Հետո, քիչ մնաց՝ շուտով աշխատավարձ եմ ստանալու: Կզնամ երկու հատ ճոճարող կառնեմ՝ տեղն իմացել եմ: Եղայս ամառանոցի համար խոստացած փողող կուղարկի, փորբիկ ամառանոց կառնեմ, վերջապես կիեռանամ էս տնից, սիրածս կինը կտեղափոխվի ինձ մոտ, ճոճարողները կրնենք դրսում, սուրճ կխմենք, ինքը կգործի, կրլլա ականջիս տակ, իսկ ես ուղարկի մայրամուտին կնայեմ հոգնել եմ:

Ուզեցի հիշել դեմքը, բայց աչքերիս առաջ չեկավ: Ուզեցի վերջերս հնարած կերպարներիս մտարելու, բայց իիշողությանս առաջ սովորականի նման գունավոր ու շարժուն շրացվեցին: Ես վերցրի առաջին պատահած քուղը ու գրեցի:

**Հետո ինձ ապեց.**

**Դու այնքան էիր ուզում տղա ումենալ, որ Մենք ուղարկեցինք մի հրեշտակի, որ իրագործի քո երազանքը:**

**Նա ինձ մոտ մնաց 8 տարի: Խսկ հետո՝ հեռացավ:**

**Այնժամ ես հասկացա, որ ինձ տրված էր որոշ ժամանակ՝ գոյություն քարշ տալու համար:**

**Իմ ճյուղը կոտրվեց, ինձ ոչնչացրին ժամանակի մեջ:**

**Ես արդեն չկամ:**

**Երբ նոյն տարի գնացինք գերեզմաններ՝ ճյուն էր գալիս: Դա փառահեղ ճյուն էր՝ մեծ փարիլներով և արագ: Գերեզմանոցում ոչ մի ոտնահետք չկար: Կար միայն մի ոտնահետք, որ գնում էր դեպի իմ տղայի գերեզմանը: Հետո մենք հանդիպեցինք մի 17-18 տարեկան տղայի: Գերեզմանոցում այլևս ոչ ոք չկար: Նա ինքը մոտեցավ մեզ և հարցրեց.**

**Ճի՞շտ է արդյոք, որ պետք է գերեզմաններ գալ Զատիկի հաջորդ օրը:**

**Մենք ասացինք.**

**Այս:**

**Նա հեռացավ:**

**Միայն շատ հետո իմ մտքով անցավ, որ այդ տղան նույնպես ուղարկված էր որպես  
բանբեր՝ հասկացնելու համար, որ իմ տղան տրված էր ինձ ինչ-որ ժամանակով, որը  
լրանալուց հետո՝ հեռացավ:**

**Դա բանբեր էր:**

**Եվ մայր էր մտնում արեգակը բորբ` որպես պղնձե մետաղադրամ:**

16.01.2001

23:45

Գրելուց հետո զգացի, որ մրսում եմ: Բայց այս երկրում բոլորն են մրսում՝ ի՞նչ արտասովոր բան կա: Վրաս  
զցեցի ծածկոցն ու կրացած նստեցի, մինչև զգացի, որ սիրտս կանգնում է: Ես նրան խսորեցի, որ աշխատի: Խոսեցի՝  
ինչպես պետք է սրտի հետ խոսել՝ հանգիստ ու մեղմ: Մանավանդ որ առհասարակ հանգիստ եմ խոսում: Բայց նա  
կանգ առավ: Ասաց, որ հիշողությունը չի բավարարում: Եվ պահանջեց անջատել ամրող ծրագիրը:

**Պարունակածքում զեկուղիած բանսասրելու ծովոքում Խաչիկ Կազսապելրյանը՝ Հայսապանում համակարգչային  
անհինացիայի ստուգին և լավագույն վարպետներից մենք գրել ենք իրազմասպակին հետևած մասինից անմիջապես  
ստուգ:**

2001թ. հունվարի 24

## ՉՈՒԿԸ

### Արարար ՍՄՐԳԱՅԱՆԻՆ

Երեքով նստած էինք դեպի վերև նեղացող, բարձր կլոր աթոռակներին, որոնք իրենց բարակ ոտքերի կեսին շրջանակ են ունենում: Կամքջի վրա էինք, բազրիքի մոտ, նայում էինք ցած ու խոսում էինք այդ ժողովովի մասին: Մեզանից ահազին ներքև գետն էր, որի աջ ափին բուսածածկ բլիր ուղղահայաց լանջ էր, ձախ ափին ծառեր էին, որոնց արանքում երևում էին փայտաշեն, մի քիչ խուճացած մեկուկես հարկանի տներ: Հասկացվում էր, որ դրանց թիկոնքում ինչ-որ տեղ խճուղին էր:

-Հիմնականում ձկնորսությամբ են գրաղվել, - ասաց ձախ կողքին նստածը, որին չեմ հիշում:

-Կարծեմ ձուկը շատ առատ է եղել, ու ամենով ապրել են, - իմացածն հայտնեցի ես:

-Բայց արդեն հարյուր տարի է՝ ձուկ չեմ որսում:

-Ինչի՞, - անհանգստացա ես, որ ձուկ ուտել սիրում էի, չնայած քուն ձկնորսության հանդեպ հակում չունեի:

-Որ գետը նորից ձուկ լցվի, - ասաց աջ կողքին նստածը, որը միջնադարյան քուրք ճանապարհորդ էր:

Ես ավելի ուշադիր նայեցի ներքև ու նկատեցի, որ գետը համարյա ճահճակալած է՝ մինչև մեջտեղը եղեգներ ու բարձր մոլախոտեր էին քունել: Իհարկե, գետը ոչ մեկի պետքը չէր, ոչ ոք վաղուց նրան մոտ չէր եկել: Բայց դրանից ել պետք էր ենթադրել, որ ձուկն իհմա լիքն է, վիստում է խոտերի արանքում, ես նույնիսկ աշքերս լարեցի, որ ջրի մեջ տեսմեն նրանց խվվոցը: Այդ ժամանակ ձախ կողքին նստածը ձեռքը մեկնեց գետի ձախ ափի բարձր ուտենու կողմը, որի վերևում մի ձուկ էր քրքում:

-Նայեք, բռչող ձուկ, - ասաց նա:

Չուկը սկսեց ավելի բարձրանալ՝ թրթուլով, և մեկ-մեկուկես րոպեում հասավ համարյա մեզ: Ես ձեռքս կտրուկ առաջ զցեցի ու քունեցի: Սովորական ձուկ էր՝ 35-40 սանտիմետրանոց, միայն թե դնչից մինչև պոչն ընկած հատվածը ներքի մասում ուղղագիծ էր, այլ ոչ թե՝ կոր: Շատ չէր քարտում, դրա համար ես էլ արդեն քունցը իսկ սեղմումը քոլացրի ու ձուկը ցույց տվեցի կողքին նստածներին:

-Հրաշք է, - ասաց քուրք ճանապարհորդը, - ես արդեն լսել էի այս ձկան մասին:

Մի հատիկ ձուկը ո՞չ ուտելու էր մի քանի հոգով, ո՞չ էլ, քանի որ արտասովոր էր, ուզում էի հենց այնպես կողքիններիս նվիրել: Նրանից հոգնելով, որոշեցի հետ զցել: Բայց պարզվեց՝ ուժեղ կպած է ձեռքիս, կարծես՝ սոսնձած: Ես ձախ ձեռքով աշխա մատմերս զրոռվ պոկեցի իր մարմնից, բայց ձուկը մնաց ափիս կպած և ինձ քաշուն էր դեպի գետը: Մեղմեցի ոսքիս ու, կայծակնային արագությամբ տրորելով, արկեցի ձեռքից: Բայց իհմա էլ ջինափակ կապավու ծնկիս վերևի մասից շատ ուժեղ իհմա ձգում էր ջրի կողմը: Զանի որ նստած էի բարձր աթոռակի, իսկ կամքջի փայտել բազրիքը ցածր էր, նույնիսկ թեթևակի առաջ հակվել կյանքի համար վտանգավոր էր:

-Օգնեցեք, - ցածր ասացի կողքին նստածներին:

-Ի՞նչ նման է սովորական ձկան: Իսկ մուգ կապույտ ջինափակ վրա ոնց որ մանրուս թեփուկներով հասարակ ձուկ ինին, - ասաց ձախ կողքինս, որին չեմ հիշում:

Համեմատ երկու ձեռքի կեռացրած մատմերով քուրք ճանապարհորդը քաշեց-պրկեց ձուկը ուտքից: Չուկը սկսեց նրա դիմաց օդում քրքուալ: Իսկ քուրքն ուներ մանր-գանգուր մազեր, որոնք դեմքի երկու կողմից առատանում էին դեպի ներքեւ: Եթե ձուկը կաշեր ճանապարհորդի մազերին, պրծում չէր ունենա:

2000 թ., նոյեմբերի 28

# ԽՈՒՃԱՊ

Անաս & Սիրայելին

Ու՞ր թաքնվեմ, ու՞ր գնամ. զլուխս պայթեց մտածելուց: Երանի ինձ շատեհն. ինչ որ լինում էր, լիներ: Թե չէ ինչ վիճակ է վիճակ:

Ու՞ր, ու՞ր թաքնվեմ, զլուխս ու՞ր պահեմ: Դուրս գամ տնից՝ փողոցներում թափառեմ: Ի՞նչ կիմանան, թե ո՞ր փողոցում եմ թափառում: Հետո մուրը կընկնի, կզամ տուն: Բայց տուն եկա թէ չէ, անմիջապես կրոնեն: Հիմար միտք եր, հիմարություն: Անիմաստ տեղը ժամանակ եմ կորցնում: Բայց չի ել հաջողվում կետրոնանալ, որ խելքը զլսին բան մտածեմ:

Գնամ ծնողներիս մոտ: Չեմ ասի, որ թաքնվում եմ: Որ ասացի, մայրս կուշաքափվի, «Ծուապ օգնությունը» կզա՝ ուշաքփության պատճառը կհարցնեն: Մայրս սուտ խոսել զիտի, զլսի կընկնեն, որ ինչ-որ զադտնիք կա. մեկ էլ տեսար զանգեցին ոստիկանություն:

Չասեմ, որ թաքնվում եմ: Ուրախ-ուրախ ընդունեն ինձ, օրը երեք-չորս անգամ պինդ կերցնեն, ցերեկները վարագույիր հետևից դուրս կնայեմ կամ կրնեմ, զիշերները կենեմ մարդու օդի: Մի ամիսը որ լրացավ, ավտոմատ հեռախոսից կզանգեմ տուն՝ կխոսեմ: Որ մինչև երեսուն վայրկյան խոսեմ, չեն հասցնի զալ - ինձ ավտոմատի մոտ բռնացնել:

Բայց մայրս մի ամիս ինձ չի պահի: Շարաբը շրացած կասի՝ վերադարձի՝ ընտանիքը: Ես կասեմ կինս զիտի, որ էստեղ եմ, ինքը կասի՝ դե որ եղանակ է, զանգի կնոջդ հետ խոսի: «Չեմ կարող», - կասեմ ես, ու նա կսկսի ինձ բացատրել. «Բոլոր ընտանիքներում էլ վեճ լինում է: Բայց խոռվելը տղամարդուն չի սագում: Կինդ կկարծի՝ սիրուի ունես, հետո ինչքան համոզենք, որ մեր տանն ես եղել, չի հավատա ու երեք թեզ չի մերի»:

Չէ, մայրս չի բողնի, որ մի շաբարից ավելի իրենց տանը մնամ: Հետո ծնողներիս տունն առաջին հերթին կստուգեն: Երես մտքովս անցավ, որ նույնիսկ հեռախոսը կըսեն, ուրեմն, պարզ է, տունն անպայման կխուզարկեն:

Երևակայություն չունեմ:

Բայց՝ մի բոպե: Տանը: Իմ տանը թաքնվեմ: Կմտածեմ՝ հո զի՞՞ծ չի, որ իր տանը թաքնի՝ տեղնուտեղը բռնենք: Բայց ինչ էլքարձը կարծիք ունեմ, չէ՞՞, մեր ոստիկանների մասին: Հա-հա: Հա-հա-հա-հա-հա: Հա-հա-հա: Ոչ մի բան էլ չեն մտածի: Կզան - Աստծու օրը կստուգեն, ժամերով կնստեն-կմնան: Մանավանդ վերևից էլ որ ասեմ՝ ձեր քրեականներից ում բռնում-չեք բռնում՝ դուք զիտեք, բայց սրան պետք է գտնեք:

Ի՞նչ հիշաշարություն: Ի՞նչ եմ արել որ:

Գիշերը դուրս գամ, մոտենամ պոռնիկներին, իմանամ՝ ով է մենակ ապրում, գնանք իր մոտ, ներկայանամ որպես պոռնիկների վարքն ուստմնափրոդ հոգեքան, ու խնդրեմ, որ ինձ իր տանը պահի: Կարեի է հետք մարդուկնոց պես էլ ապրել, եթե շատ մաշված չլինի: Շատերը կան, որ ինքնակամ չեն դառել պոռնիկ, այլ, ո՞նց են ասում, հանգամանքների բերումով: Մեջմերը տանեկի դեմքերով, աշխայժ բնավրությամբ աղջիկներ կան: Կարծեմ նույնիսկ հարուստ ընտանիքների աղջիկներ կան, որ թերևամտությունից են սկսել էդ գործով զրադվել, բայց հետո, ո՞նց են ասում, հայտնվել են կյանքի հատակում ու կամքի ուժ չեն ունեցել վատ միջավայրից պոկվելու:

Ամեն օր իրար հետ չենք պատկի, պարզ է: Առավտոնները հոգնած կգա, նայած թե ինչ հաճախորդներ է ունեցել՝ անտրամադիր կամ զրի: Ես սուրճ կսարքեմ երկուսիս, նա, իմ մեծահոգությունից զարմացած, սիրտը կրացի ու ինձ կպատմի իր ապրումների մասին: Ես կրացատրեմ, թե ինչ պատճառով են դրանք առաջանում, նա կկարաքվի ինձ ու անկողին քարշ կտա և, քանի որ փողի համար չի անի, վերջապես բավականություն կստանա:

Մի օր Էլ կարող է ուզենա թողնել պոռնկությունը: Ես իմ կողմից, իհարկե, կողջունեմ, քայլ ձեռքիս վորդն արդեն այլծած կիմի, հերթ է մասնագիտություն չունի. ստոր մարդիկ գործ տալիս պայման կդնեն, որ իրենց հաճույքներին Էլ ծառայի, մենք, պարզ է, չենք համաձայնի՝ կմնանք մի կտոր հացի կարոտ:

Չե, չեղավ:

Հետո՝ եթե Էլ աղջիկն առանձին բնակարան ունենա, պետք է հաճախորդ բերելու համար օգտագործի: Ես Էլ դրա շնորհիվ էի հայտնվելու իր տանը, չ<sup>o</sup>: Ուրեմն, ո՞նց կարող եմ ամրող օրն էդտեղ թաքնվել: Չհաշված որ մի գորական կամ Էլ ոստիկան սիրելին կրւնենա, որ իր ամեն մի քայլին կիետնեն:

Անլուրց զաղափար էր. Էլ աշխարհի մարդկանցից ես գլուխ չեմ հանի:

Ընկերներին մասին պետք է մտածել:

Քայլ մոտ ընկերներին տներում Էլ չեմ կարող թաքնվել, հսկողության տակ կպահեն: Չնայած հետաքրքիր է, թե ո՞նց տանը կարող էի մնալ: Սեկ, երկու, երեք... Երեք... Երեք... Երեք... Չորս: Երկի: Երկի՝ չորս: Չորս ընկերը վատ չէ: Ափսոս վերցերս քիչ ենք շվպում: Դե, զբաղված էինք բոլորս. աշխատա՝ նք, ընտանի՝ թ:

Քայլ կարևոր է, որ մի չորս ընկեր ունես, որ թեզ կընդունեն, ինչպես ասում են՝ տուն կրողնեն: Բոլորն Էլ զիտեն, որ ես ոչ մի քանի ձեռք չեմ տա: Ոչինչ: Դե, տանը մարդ չեղած ժամանակ կարող է կրնֆեսի ամանից մի-երկու հաս կրնֆես վերցնեն, հետո մնացածներն էնպես դասավորեն, որ պակասը զգացվի: Սեկ Էլ հնարավոր Է՝ նայեն, թե խորդանոցում ինչ կա-չկա, որովհետև մարդիկ էնպիսի քաներ են գցում էնտեղ, որ մի ուրիշին շատ պետք է լինում, տարիներով չի զտնում:

Քայլ ուրիշ քանի ձեռք չեմ տա. ո՛չ պահարան կրացեմ, ո՛չ դարակ դուրս կրաշեմ: Էլ կրնֆեսն Էլ հեռուստացույց նայենիս զբաղվելու համար եմ վերցնելու: Էնպես որ՝ ճիշտ կանեին, որ տուն բողնեին: Ո՞նց Էլ մտքովս անցավ, որ կարող է ինձ տուն չքողնեին:

Քայլ ի՞նչ օգուտ տուն բողնելուց, եթե չեմ կարողանա թաքցնել: Նախ՝ բոլորի բնակարաններն Էլ փոքր են: Հետո, ոնց Էլ լինի, մի օր ազգ-քարեկամը հյուր կզան, երեխաները կմտնեն ծակուծուկերը, թեկուզ խորդանոց մտած լինեն, կզտնեն: Ի՞նչ քացատրություն տան. իմիջիայլոց՝ սա Էլ մեր ընկե՞րն է. թաքցնու՞ն ենք:

Իսկ եթե ֆուտրոյիստ դառնա՞՞մ մեծ ֆուտրոյիստ: Ընկերներից մեկը քաղաքի ծայրամասում է ապրում: Որ կարողանամ մի քանի շաբաթ իր տանը դիմանալ, իրիկուններն ուշ դուրս կզամ, աշքից հեռու տեղում մի հատիկ խարս կմշակեն, մի հատիկ, քայլ, որ ոչ մի պաշտպան ի վիճակի շինի դեմն առնել, կզնամ մի թույլ թիմի մարզիչի ցոյց կտամ ու կերաշխավորեն, որ ամեն խաղում, մինչև հակառակորդն ինձ, ինչպես ֆուտրուլային մեկնարաններն են ասում, չեղորացնի, առնվազն մի գոյ կիսվեն Էլ ֆինսով: «Դե, մնացածը՝ դու զիտես»:

Մի տարում Էլ թիմը կընկնի առաջին տեղ (խաղը՝ մի գոյ, իլր գումարի՝), ինձ կիրավիրն հավաքական, հավաքականում Էլ շատ գոյ կիսվեն, բոլորն ինձ կպաշտեն, ու կմոռացվի-կզնա անզգույց ասածն մի քանի քառ:

Քայլ տարիքս Էն չի: Երեսունինը ֆուտրոյի համար մի քիչ շատ է: Այ թե որտեղ է պետք իսկական մարզիչը: Որ ուշայլություն չդարձնի, թե իր համար գոյ խստող քանի տարեկան է: Չնայած, ինչի՞ մասին եմ խոսում մարզիչները որ Էլքան հոտառություն ունենային, հավաքականն էս օրը կընկնե՞ր:

Հետո՝ ես ֆուտրոլլավ չեմ խաղում, միշտ Էլ վատ եմ խաղացել. դժվար թե կարողանայի նոր խարս մշակել:

Չատ հետաքրքիր կիմի, որ աշխատանքի գնամ, ու, քանի որ իհմա արձակուրդ են, Էլ ժամերին ինձ ոչ որ չմեկատի: Չնայած՝ չորսրորդն էնքան են գլուխ զովում, թե քանի տարի չեն հանգստացել, որ լավ Էլ կնկատեն ու կմտածեն, թե ուզում են աշքի ընկնել:

Քայլ ի՞նչ աշխատանքի գնալու մասին եմ մտածում, երբ բոլորն զգուշացնում են, որ ինձ նախ գործից կազատեն, հետո կնստեցնեն: Ճիշտ է՝ ոմանք Էլ կարծում են, թե նախ կրոնեն, իսկ տնօրենը, որպեսզի հետմերը գլուխ չինի, անմիջապես աշխատանքից հեռացնելու հրաման կտա:

Իսկ եթե ուսանողական ընկերություն գտնեն: Նա բոլորին հետ ընկերական էր, չնայած մի քանիսս սիրահարված էինք իրեն: Հետո սկսեց ինձ ավելի լավ վերաբերվել, քայլ ամեն ինչ մնում էր ընկերական, ու ես ուրիշ աղջիկ

կապեցի: Գիտեմ, որ ամուսնացել է, երեխա ունի, բայց ինձ մոռացած չի լինի: Ենայսի դանդալոշի հետ չի ամուսնացել, որ մոռանա: Ես, օրինակ, ինձ վատ զգացի, որ հետը շամուսնացա, զնաց էր տեսակ դանդալոշի բաժին դառավ:

Կասեմ էն ժամանակ սխալվել եմ արի հիմա ամուսնանաք: Բայց շատ օրինավոր է՝ դանդալոշից չի բաժանվի: Որ ճիշտն ասեմ ես Էլ կնոջց բաժանվելու պատճառ շունեմ: Հետո ի՞նչ իմանամ, որ ինձ բարցնելու հարմարություն ունի:

Բայց իմ մեղքը ո՞րն է, որ բարնվեմ չեմ հասկանում: Փողոցում զնում էի ինձ համար, մեկ էլ տեսախցիկը դեմ արին, քե հարցում եմք անցկացնում: «Ի՞նչ կարծիքի եք երկրի ներկայիս վիճակի մասին»: Պարզ է, ասի. «Ի՞նչ վիճակ, ի՞նչ երկիր: Երկի՞ր են բողել»: Դրանք ել, եդ նկարողները, բռնեցին-նույնությամբ ցույց տվին: Հիմա բոլորն ասում են թէ՝ թեզ կամ մուտքում կլսփեն, կամ ել գործ կաարքեն՝ մի քանի տարով որ հաստատ կնստեցնեն: «Բայց դուք ել եք ամեն օր նույն բանն ասում»: «Մենք ասում ենք, ճիշտ է, բայց շատ-շատ՝ մեր շրջապատում, ի՞նչ գործ ունենք հեռուստացույցով ասենք, ու մեր գործին խփեն»:

Ի՞նչ անեմ: Գլուխս պայթեց մտածելուց: Հենց առավիտ կարող է հետևից գամ: Խսկ լրիյան ուր-որ է կրացվի: Թէ՞ լրիյան արդեն բացվում է...

Օգոստոս, 2000 թվական

# ԿԻՍՎԳՈՒՇԴԸ

*Աղջկաս՝ Եղա Մարտիրոսյանին*

Դեռ հեռվից երևում էր: Եվ ուշադրություն էր գրավում: Այդ պատճառով թվում էր, որ ինչ էլ անում էի, մեկ է, մոտենաւմ էի հսկա կիսագնդին: Ինչպես առաջներում էին ասում՝ քայլերա ինձ բերեցին այստեղ: Իմ երրեւ տեսած ամենամեծ շենքն էր՝ անքերի սպիտակ: Չանի դեռ կանաչ ու խիտ էին տերևները, որ պարուրել էին այն տաղավարը, որտեղ վերջին ամիսներին լինում էի, կարող էի միայն պատկերացնել, թե այս կողմում ինչ կլինի: Երբ դեղնեցին ու կարմրեցին, արանքներից արդեն շողղողում էր տեղ-տեղ:

Ես հետ նայեցի ու տեսա, որ մենակ էի՝ ինչպես միշտ: Տաղավարի իմ մասը նույնիսկ ձայներ չէին հասնում, ավելի ճիշտ հասնում էին, բայց կարծես՝ մեկի կողմից ճզմած ու հողին հավասարեցրած: Տարօրինակ էր, թե տարօրինակ չէր, բայց կիսագունդը մի դուռ ուներ: Իր շափերի համեմատ փոքր, համարյա՝ աննկատելի: Ես նորից հետ նայեցի, բայց ծառուղին դատարկ էր. իմ կողմ էր զափս միայն փողոցի սովորական մի կատու:

Ինձ համար հետաքրքիր էր, թե ինչ եմ հայտնաբերելու, ուստի հասկանալի չէր, թե ինչո՞ւ էի ձգձգում ներս մտնելը: Բայց մտնելու համար պետք էր որոշել, թե՝ ինչպես: Կիսագնդի դրան բռնակն արտաքին չէր, այլ ավտոմեքենաների դրների պես՝ ներկալված: Այդ պատճառով չհամարձակվեցի միանգամից քաշել արինատական ինչ-որ նյութից սարքած բռնակի հորիզոնական շերտաձողը և սկսեցի զանգը փնտրել: Բայց դրան վրա զանգ հիշեցնող ոչ մի բան չկար: Կիսագունդը պատուհան չուներ, որ թնկրխսկացնեի, մեկը ներսից պատախաներ, ոչ էլ զանգն է դրնից շատ հեռու լինում, որ գնայի՝ պատի որևէ ուրիշ հատվածում որոնեի:

Ես ձեռքս վեր մեկնեցի ու շոշափեցի դրան աջ անկյունը, որտեղ սովորաբար լինում է զանգը: Ինչ-որ պահի այն համարծ հինչեց: Ընդ որում՝ անընդհատ ու զնզոցով, ինչպես որ հարկն է, և ոչ թե՝ երաժշտական կամ կենդանական տարրեր ձայներով, որոնք միայն վերապահումով կարելի է զանգ կոչել: Զեռքս ես քաշեցի, բայց զնզոցը դեռ երկար ներսից լսվում էր: Եթե բացեին, պետք է բացատրեի, որ իրենցից է, զանգը երևի լովել-մնացել է անցրում: Կավելացնեի նաև, որ ինձ կարելի է համար համարել, բայց անքաղաքավարի՝ ոչ մի դեպքում:

Միայն թե ցավախին այն էր, որ ոչ ոք չեկավ: Ես նորից շոշափեցի զանգի աներևույթ տեղը, որ նորից պատահաբար սեղմեի՝ անջատվեր:

Բայց զանգն ինքնիրեն լրեց: Մի քիչ էլ սպասեցի, դուռը բացվեց: Ուղղակի հետ գնաց ու քաշվեց ձախ կողը: Ես մտա, իմ հետևից դրան անաղմուկ փակվեց: Մեծ զմբերավոր սրահում ամեն ինչ սպիտակ էր: Կարծես շատ մարդիկ կային, բայց չէին երևում, որովհետև դահլիճը կտրտված էր հաստ ու բարձր սպիտակ միջնորմներով: Երբ ուշադիր նայեցի, տեսա, որ սառույցից են:

Մտել էի ձմռան մեջ: Ոչ հեռու եղյամապատ ծառեր կային, տեղ-տեղ էլ գետնին ցեխ էր նշմարվում: Զգիտես, թե՝ որտեղի՞ց, քանի որ ես այստեղ մտել էի բոլորովին շորային աշումից:

Առանց շտապելու առաջ քայլեցի: Երբ ինձ համար էլ անսպասելի շուր եկա-հետ նայեցի, տեսա, որ հետևից գալիս է նոյն սովորական կատուն:

Մտածեցի, թե՝ երանի ահուելի կիսագնդի վրա աստիճաններ լինեին, թեկուզ շենքերին կպած մետաղե հրշեց սանրութերի պես: Կարելի էր զգույշ կողքերից բռնած բարձրանալ կիսագնդի զագարն ու տեսնել, թե դեռ քանի եղանակ ունես առջևունք: Գարնան կիսագունդը զուցե մուգ կապույտ լիներ, աշնանը՝ կարմիր, իսկ ամառվանը ազարի զույն կունենար: Բայց ամռան կիսագունդը կարող էր նաև լրիվ բափանցիկ լինել,

**այդ ժամանակ հնարավոր է, որ կիսագնդերի հաշիվը խառնեիր:**

2000 թվականի նոյեմբերի 30

# ԸՆԿԵՐԸ

Նորայր Այլազյանին

Զմեռվա ժամը 7-ը ննան բաների համար շատ ուշ է: Ավելի շուտն էլ, ասեմք՝ ցերեկվա շրաբ կամ թեկող իննօք, ծիծառելի է: Զգնալ չեմ կարող, քան օր է՝ սպասում էի, քայլ գնալուց էլ՝ ինչքան մոտենում, էնքան փոշմանում եմ: Ամենադժվարը վերջին մի քանի հարյուր մետրն է, որովհետև էղ մասում շատ խիտ են կանգնած: Երեք հոգի մի տեղ՝ պատին հենված, հինգ հոգի՝ ծառի տակ, տասը մոտիկ շինարարության բետոնե սալերին են նատած, մի քանիսն էլ զնում-զայիս են սրանց արանքում: Չույզ-զույզ կանայք են կանգնած՝ ժամադրվածներ են: Զգիտես ում երեխաները ծառերի բների մոտ խաղում են մքան մեջ:

Քայլում եմ՝ գլուխս կախ, քայլ շատ կախ՝ չի կարել, բարձրացնում եմ՝ շատ բարձր է, կմտածեն՝ քիթը ցցել է: Լավ է, որ մենակ եմ, չնայած՝ էքրան տեղն է լավ մենակ, ներսում պետք է, որ գոնե մեկը հետդ ինի:

Հրհոց եկավ, քայլ ինձ չի վերաբերում: Ես զիտեմ, որ ինձ չի վերաբերում ի՞նչ հոհոալու քան եմ արել: Բայց սրանք եթե մի ամիս առաջ հոհոալու են, կապասեն, մինչև մոտեներով անցնելու լինես, նոր հոհոան: Անասուն... ներ... Ինչ-որ քան է են ասում բարձր, քայլ ինձ հետ ի՞նչ կապ ունի՝ չեմ հասկանում: Այսինքն՝ ոչ մի կապ էլ չունի: Հետո որ օրերով հիշեմ, երկի կապը գտնեմ, քայլ ավելի լավ է՝ ոչ էլ գտնեմ:

Խսկ իիմա հավասարվել եմ իրենց, անցնու՞մ եմ, արդեն անցա: Այ իիմա՝ անցա: Մուտքը շատ լուսավոր է, լիքը մարդիկ կան հավաքված: Էլի ինձ են նայում. եթե բոլորը չեն մեծ մասը: Դե արի ու մի հասր ծախի: Էս պայմաններում: Ո՞նց ծախեմ: Բայց փող է տված, չէ՞՝ ափսոս չի՞: Սի շրջան անեմ, գամ ծախեմ: Բայց, չէ, շրջան անել չեմ կարող, նոյն ճանապարհը երկրորդ անգամ անցնելու ի վիճակի չեմ: Չեմ կարող, համ էլ՝ կուշանամ: Չնայած, ժամանակին ես մտնում ուշ են սկսում ահավոր ուշ: Խսկ որ դու ուշ գաս՝ մուտքը փակ կլինի:

Ծախսե՞մ-չծախսե՞մ, ծախսե՞մ-չծախսե՞մ: Բայց երկի մի հասր ոչ մեկը չուզի: Կիամոգեն, որ երկուար ծախեմ, քայլ ես համաձայն չեմ: Երկուսին համաձայն չեմ՝ իմը չեմ ուզում ծախել:

Բայց եթե չեր գալու՝ բող սկզբից ասեր: Իհարկե, պատճառաբանություն ունի. առնելուց ինձ չես հարցրել: Էլ չսասած, որ խուսափում ես ճանապարհը միասին անցնելուց: «Ամրող ճանապարհը չէ՝ մի քանի տեղ, դա էքրան կարևո՞ր է»: «Քեզ համար որ կարևոր է, ինձ համար էլ է կարևոր: Հետո՝ դու ինքը երբեք ինձ հետ չես զայիս»:

Դա ճիշտ է. ես ինքս երբեք հետը չեմ զնում: Վախ, ես ինչ տանջանք է:

Չեմ ծախի: Թող փողը կորչի՝ մենակ իմ փողը չի, կորչում է՝ կորչի: Մոտենում եմ մուտքի բազմությանը, քայլ չեմ ուզում արանքներից խցկվել՝ չեմ կարող: Ներողություն, ասում եմ, ներողություն՝ ոչ ոք չի լսում, երկի ցածր եմ խոսում: Սի քիչ կանգնելուց հետո մեկը դուրս է զայիս ինչ-որ քան հայտարարելու, բոլորը շրջապատում են, ես մոտենում եմ հսկիչին:

- Էղ տեսքով ներս չեմք թողնի:

- Ի՞նչ տեսք է որ, նորմալ մարդու տեսք է:

- Նորմալ չի: Չեմ թողնի:

- Ի՞նչը նորմալ չի, նորմալ է:

- Նորմալ չի: Դուք հայելու մեջ չե՞ս տեսել:

- Լա՞վ, թող էլի՞:

Զգում եմ ինքս ինձնից, որ խնդրում եմ, զիտեի, որ էսպես էլ կլինի. իրիկունք կգամ, կխնդրեմ ու կզգվեմ ինքս

ինձնից: Բայց եթե չսնորեմ, շուտով մուտքը կփակեն, դուրս եկածին շրջապատածներն էլ հետ կդառնան, ու ինձ ամենավերջը կմղեն:

- Թողեք՝ մտնի, ինչի՞ համար չեք քողնում, - ասում է մի մարդ:
- Ես տեսքով ո՞նց քողնեմ:
- Ի՞նչ կա որ, առանձնապես ի՞նչ մի տեսք է:
- Իմ գործը ես զիտեմ. սա քողնելու բան չի, իզուր լավամարդ մի եղի:
- Իսկ որտե՞ղ է զրված՝ քողնելու չի: Չքողնես՝ կրողքեմ:

Ինչ լավ մարդ է իսկականից՝ ոչ մեկը չոր խնորել, որ միջնորդեր: Շնորհակալ եմ ասում եմ քրիս տակ ու մտնում: Ոչ մի տարօրինակ բան չունեմ:

Նախասրահում բոլորն ինձ են նայում: Մտնում եմ դահիճ. Ժխոր է, բայց շատերը, որ արդեն տեղերն են նստել, ուշադիր, աչքերը չոած, իրար հետ խոսելը դադարեցնելով՝ ինձ են նայում: Դրանց հայացքների տակ մի կերպ գտնում եմ իմ տեղի ու նասում: Ուզում եմ տեսնել՝ ծանոթ մարդ կա՞՝, բայց զիտեմ, որ բոլորն սպասում են շոտ զալուս, ու մնում եմ անշարժ: Շուրջ մի կողմից երեք, մյուս կողմից չորս տեղ է ազատ: Այ եթե հիմա սկսվեր, ինչ լավ կլիմեր: Մի բանի լուսէ էլ ամցավ. իսկական ժամանակն է սկսելու: Մի հինգ լուսէ էլ ամցավ: Պետք է սկսել, չէ՞: Մի բանիսը սուլում են: Մի երկու րոպեից կսկսվի: Համարյա բոլորով ծափ են տալիս: Չնայած՝ դա ել մի բան չի:

Ու զախս են: Երկու հոգի՝ մի կողմից, չորս հոգի՝ մյուս: Անմիջապես առաջարկում են, որ, եթե մենակ եմ, տեղս փոխսեմ իրենց երկու ընկերոց հետ: Դրանք վերջին շարքում պետք է նստեին. հիմա մեր շարքի առաջ կանգնած սպասում են, որ մյուսներն ինձ համոզեն: Ինչի՞ համար պետք է փոխսեմ. ինչ է քե մենա՞կ եմ: Ճիշտ է, վերջին շարքում լավ եմ զգում, որ հետևյալ մարդ չկա նստած, բայց հեռու է, ու իրենց ասելով չէ, որ պետք է զնամ: Գնա՝ բոլորով միասին նստենք: Երկուս, երկուս՝ շորս, չորս էլ կանի՝ որք: Ուրեմն, ուզում են ուրով նստեն միասին: Չեմ հասկանում՝ ի՞նչ իմաստ կա ուրով նստելու մեջ: Ես չեմ զնա. չեմ-զր-նա: Տուր հետևի կնիքը նայենք: Դու մեզնից երեք օր ուշ ես առել, բա ինչի՞ համար մեզ ասին իրար կողը ուր տեղ չկա: Ես զիտեմ, իրենց հարցրեք, ինձ երկու տեղ էր պետք՝ երկուսն եմ առել:

Որ էր ձևով ես խոսում մենք էլ չենք ուզում, որ քո տեսքով մեր կողքը նստես: Ի՞նչ տեսք է որ: Հեմոց քո էր տեսքով: Նորմալ տեսք է, շատ սովորական, շատ սովորական տեսք է. ի՞նչ տեսք է որ: Դա՞ է սովորական. բա արտասովորը ո՞րն է: Դե որ արտասովոր է, ասեք՝ ի՞նչն է արտասովոր: Շատ ստիպես՝ կասենք: Ասեք: Ու կասենք:

- Ի՞նչ է պատահել, բողեք՝ մարդը հանգիստ նստի իր տեղը, - ասում է մեզ քիկունքի կողմից մոտենցած ընկերս:
- Սենք ուզում ենք, որ մեր ընկերների հետ փոխսի տեղը:
- Իսկ ինքը չի ուզում փոխսի՝ ուրեմն, ինչի՞ փոխսի:
- Դե, լավ, բան չենք ասում՝ քող նստի: Չնայած էր տեսքով՝ ճիշտ չի էստեղ նստելը:
- Դուք մի՛ սովորեցրեք, քե ինչ տեսքով նստի:

Նայում եմ է՛ կողմը, որտեղ ընկերս միշտ նստում է, տեսնեմ՝ կինը ձեռքով է անում: Ես էլ եմ ձեռքով անում իրեն ու, կողքին դատարկ արողք ցոյց տալով, հասկանում, որ մենակ եմ եկել, բայց իրեն բարևում էր: Նա զլյսով է անում:

- Հը՞ կարո՞ղ է մտածեցիր, որ ընկեր չունես, վախեցար, որ ընկեր չունե՞ս, - ասում է ընկերս:

Երևի վախեցել էի՝ չզիտեմ:

Նա զնում-նստում է իր տեղը՝ կնոշ կողքին: Ես նստած սպասում եմ, որ սկսվի. ուր-որ է կսկսվի: Պետք է որ արդեն սկսվի, չզիտեմ:

Նոյեմբերի 12, 2000 թվական

# ԱՎԵԼՈՎԸ

Հորս՝ Պարույր Մարտիրոսյանին

Թիշտ չէ, որ փողոցի մեջտեղով տրամվայ անցնի, երբ երկու մայթերին քնակելի շենքեր կան: Գետինը դրդում է, դրդոցը փոխանցվում է շենքերի հիմքերին, ինո՞ւ՝ քարձրանում վերև: Մանավանդ առավոտ, երբ ո՞չ դրսում մարդ-մարդաշոնչ կա, ո՞չ էլ տաճը՝ շարժում: Չես հասկանում ում համար է աշխատելու տրամվայը: Եթե ձմռանը, երբ ուշ է լուսանում, պատահարար վաղ վեր կենաս՝ կնկատես, որ լույսերը տներում վառվում են ժամը ուրեմն անց 10-15-ից ոչ շուտ: Իսկ առաջին տրամվայի գրնօնուն, կայտառ սլաքը մարդուն քնից հանում է ժամը 7-ին:

Հետո արի՝ ու պառկած հաշվի անցող-դարձող տրամվայները, մինչև առիթ լինի անկողնուց ելնելու: Հետո արի՝ ու օրվա հոգով հիշի առավոտվա ժամը յոթից սկսած, երբ որ, մեկ է, ամեն ինչ իր հունով է գնալու:

Իմիջիայլոց, ես ոչ թե առհասարակ տրամվային եմ դեմ: Տրամվայն էլ փոխադրամիջոց: Սյուսների համեմատ՝ էժան, բոշակառուների համար՝ ձրի. երկի, շատ զոհ են: Երեխաների կողմից՝ հատկապես սիրված. ես իմ փոքրությունից էլ եմ իիշում: Մի խոսքով, լավ էլ փոխադրամիջոց է, բայց երբ գոնե փողոցի մի կողմում են շենքեր, մյուս կողմում զրոսայզի է կամ գետը, ու տրամվայն էլ կողմով է անցնում: Սարսափելի չէ նաև, երբ շուրջը հիմնարկներ են, ցերեկ է: Բայց երեւ շուրջը քնակելի շենքեր են... Ընտանիքներն օրվա բոլոր ժամերին են դատապարտված ցնցումներին ու զնզգնօցներին: Պետք չէ անտեսել, որ մանավանդ նորակառույց անհուսայի շենքերը տարիների ու տասնամյակների ընթացքում կարող են խարխլվել: Իսկ երկրաշարժի դեպքում ինչքան վտանգավոր են նորակառույց բազմահարկերը, դառն վորձով գիտենք: Ավելի բարվոք չէ, ինչնգիարկանիների վիճակը, որոնք 30-40 տարի առաջ սարքում էին ժամանակավոր, յուշ գնալու համար, մինչև լավ օրերը գան, բայց երևի զարգացումն ու բարելավումը մոլորակի բոլոր վայրերի համար չէ. տասնյակ հազարավոր մարդիկ առհավետ մնացին նման կացարանների գերին:

Կան մարդիկ, որոնք վարժվում են տրամվայի զնզգնօցին: Բայց նրանք առանձնահատուկ տեսակ են: Զվարժվողներին չի օգնի ո՞չ ուրիշի փորձը, ո՞չ՝ փորձի փոխանակումը: Ինչպես որ չնմ օգնում քնարերները, քանի դեռ հատուկ տրամվայի դեմ քնարեր չեն հնարել: Այսիմքն քնարեր, որը նպաստում է ոչ թե շուտ քնելուն, որովհետև ես, օրինակ, արագ եմ քնում, այլ՝ շուտ զգարթներուն առաջին պատահած տրամվայի ձայնից:

Կարելի է վերջապես անիվների երկարն ավելի փափուկ նյութով պատել, որը բնության մեջ անպայման գոյություն կունենա: Չնայած իմ գործը չէ, բայց չեմ զլանա զիտնականներին հուշել, որ հնարավոր է նաև զինագործների ճանապարհով զնալ: Ինչո՞ւ կարելի է ատրճանակին խլացուցիչ հազցնելու կրակոցի ահավոր ճայրյունը խեղբել, իսկ տրամվայի անիվներին ոչ մի քան չեն հարմարեցնում:

Մարդկանց կյանքի, առողջության մասին չեն հոգում, թե չէ մի քանի բովենում իրենց գլուխներում էլ տարրերակներ կծագեին, ինչպես որ իմ զլխում ծագեցին:

Նոր անցած տրամվայը հազիվ երկրորդ կանգառից է շարժել հիմա: Առավոտվա տասն անց կեսի մոտերքն է: Ուրեմն ձախ շարքի առջևից երկրորդ միհողանոց նատելատերին մի ուրսունիժնաց տարեկան տասիկ է նատած, աջից առաջին երկտեղանց նատարանին՝ մի հիսունինգիին մոտ սպիտակ թեղերով տղամարդ: Մի քանի դատարկ նատարան հետ նատած է միջին տարիքի կին՝ իր տասնինգ-տասնվեց տարեկան աղջկա հետ: Իսկ հաջորդ նատարանին մենակ նատած է յորանասունինգիին մոտ, բայց դեռ պինդ մի ծերունի՝ ծերին մոխրագույն կտորից պայուսակ ու նոր ավել: Նա կիշնի մերից հաշված երրորդ՝ տոնավաճառի կանգառում:

2001 թ. հունվարի 23

# ԽԱՂԻՍՈՒՄԸ

*Սարգիս Համալրաշյանին*

Եսքնածէի խոր: Ոչթե «խորըքնածէի», այլ հենց՝ «քնածէի խոր»: Համենայն դեպս, այդպես պատասխանեցի ընկերներից մեկին, որն առանց զանգելու եկել էր մեր տուն իմանալու, թե չե՞ն միանա իրենց մոտակա սրճարանում: Արտահայտությունը կրկնվում էր իմ ամենասիրած բանաստեղծություններից մեկում, որն ուսանող ժամանակս անգիր էի սովորել ու արտասանում էի աղջիկների մոտ: Վարուց առիթ չէր եղել, որ վերիշեի «Քրիստոսը Զիրենյաց լեռան վրա» վերնազրով այդ սոնետը, բայց մի-երկու բառի տարբերությամբ, կարծես, սա էր.

**Ու երբ որդին Աստղծո, լեռան վրա Զիրենյաց,  
Քանաստեղծի իր վտիս բազուկները պարզած վեր՝  
Խորասուզվեց գիտվին վշտերի մեջ ու զգաց,  
Թե իր դեմ դավ են նյութել երախտամոռ ընկերներ,**

**Իջավ ներքեւ նրանց մոտ, ով սպասում էր իրեն՝  
Երազելով դառնալ մոզ և մարզարե ու արքա,  
Սակայն նրանք, կարկամած, քնում էին տարորեն.  
Եվ սկսեց նա զոչել. «Աստված չկա՝, ո՛չ, չկա՝»:**

**Նրանք քնում էին խոր: «Քարեկամներ, ձեզ նոր լուր...  
Ես արնոտ եմ, ցալազար և լիովին ջարդուփշուր,  
Քանի անհուն երկնքին դիպավ ճակատը այսօր:**

**Ձեզ խարե՛ լ եմ, եղբայրնե՛ր: Վիհ է, վիհ է, խորխորատ:  
Ա՛հ, թափուր է Աստծուց սեղանն, ուր զոհ եմ անպարտ...  
Աստված չկա, չիր Աստված...»: Նրանք քնու՝ մ էին խոր:**

Ում որ կիետաքրքրի՝ բանաստեղծությունը, որի հեղինակը Ֆելիքս Արվերն է, հայերեն լույս է տեսել 1976-ին՝ «Ֆրանսիական քնարերգության ծաղկաբաղ» ժողովածուի մեջ:

Ուրեմն, մարդը եկել էր ասելու, թե արդին մարտն է, զարուն, տաք՝ ես էլ որուս գամ-միանամ իրենց: Ասացի՝ «քնածէի խոր», չնայած հնարավոր է, որ շատ խորն էլ քնած չէի. ցերեկը հազվադեպ եմ խորը քնում՝ փողոցի ու ներսի ձայների պատճառով: Հետո ասացի՝ հա՛, ու նա բողեց զնաց:

Դե, ճիշտ է, իիարկեն, որ աղմուկը խանգարել էր, որ «քնեի խոր», բայց լավ քնարաբախ էի, շարժվում էի դամդաղ ու որոշ բաներ անում էի երկու անգամ: Օրինակ. երկու անգամ մտա լողասենյակ ու առանց լվացվելու դուրս եկա: Կամ զնացի միջանցք, որ կոշիկ հազմենմ, բայց մոռացա, վերադարձա սենյակ: Իսկ թե զրասեղանի վրա ի՞նչ էի փնտրում, այդպես էլ, պարզ է, չիիշեցի:

Մի խոսքով, դուրս գալու պատրաստվեցի քոնը զլուխը մարդու պես, բայց, որովհետև տեղի դանդաղաշարժ եմ, երկի՝ ավելի դանդաղ: Դռան մոտ էի՝ զանգ եկավ, խոսեցի, հետո ես էլ մի-երկու տեղ զանգեցի, ու երբ որ ուրս տնից դուրս էի դնում, անցել էր մի ժամ քսան րոպե:

Ծա՞ւ է, թէ՞ չէ: Հաշվի պետք է առնենք, որ սրճարանում էին, փողոցում չէին ու մի քանի հոգով էին: Բայց վաս կողմն էլ կար՝ որ սրճարանը բացօքյա էր, իսկ մարտի առաջին օրերին, ինչ էլ որ ասեն, բացօքյա սրճարանը նստելու տեղ չի:

Բայց դա պատճառ չէր, որ անեին այն, ինչ որ արել էին. դա պատճառ չէր, որ ցեղեկվա ժամը երեքին սրճարանը հավաքեին: Այզում, որտեղ սրճարանն էր, սեղան-աքուների հետքն էլ չկար, և ոչ էլ մարդ կար, որ հարցուփորձ անեի:

Պարզ է, որ իրենց արածը բանի նման չէր, բայց ես էլ ուշացել էի համարյա ժամուկեա:

«Գիտե՞ք, չէ՞ ոնց եղավ, որ չեկա սրճարան ձեզ հանդիպելու: Դե, քնարաթախ էի, տեսար, դանդաղ էի շարժվում: Բայց որ զգացի՝ ուշանում եմ, սկսեցի շտապել: Բայց որ շտապում ես, ճիշտ տեղում պետք է շտապես: Ես բռնեցի ու սսորգետնյա անցում շմտա «Զկան խանութի» մոտ, այլ վերևու անցա: Այդ մասում էլ, իիշում եք, հետիոտնի անցում ընդհանրապես չկա, և մեքենաներն, ընթացքը չդանդաղեցնելով՝ շրջադարձը մայրին շատ մոտ են անում:

Դե, հենց ես խախտումն արեցի՝ ոտք դրեցի փողոց, մեքենան խփեց: Լավ էր, որ տակը չընկա, ընկա մյուս կողըքը: Բայց թե զլուխս ուժեղ խփեցի ասֆալտին, ու ինձ ուղեղի ցնցումով տարան իիվանդանոց»:

Միայն թե ի՞նչ զզվելի բան պետք է լինի զլուխ ասֆալտին խփվելը, չէ՞ Զարժեր, թյու՛, չարժեր, որ ուշանալս արդարացնելու համար հենց այդ պատճառը հորինեի:

2001 թ. մարտի 2

## Վահրամ Մարգիրոսյանին

Ժամը տասներկուսի մոտ էր: Չառ ուշ չէր, զիշերվա երեքին էլ էի եկել, բայց ուշ էր ցերեկվա հինգի համեմատ, երբ խոստացել էի զալ: Արժեր, ուրեմն, մի քիչ էլ ձգել, որ տանը բոլորը քնած լինեին, որովհետև մյուս առավոտ բացատրվելն ավելի հեշտ է: Բայց խմիչքը վերջացել էր, մյուսներն էլ ցրվում էին. հո՞ դրսում չէի բափառելու, մինչև տնօցիները քնեին:

Էսպիսի դեպքում, ինձ հուսալրելու համար, տան պատուհաններին չէի նայում, նայում էի ուրիշ կողմ: Ու աչք որ ընկնում էր, միշտ փախցնում էի, բայց հասցնելով նկատել՝ լուսերը վառվում են, թէ՞ չէ: Որովհետև դեպքեր պատահել են, որ քնած են երել: Հենց էս նոյն ժամին. խսկ ինչի՞ չէ որ:

Հիմա էլ աչքերս փախցրի, բայց, պարզվեց ճաշանենյակի լուսը վառն է: Հետո նորմալ նայեցի ու տեսա, որ իմ սենյակում էլ է լուս վառվում: Ի՞նչ գործ ուներ իմ սենյակում լուսը: Սենակ թե փոշեծծիչ միացրած շինեին. ուրիշ բան չեմ ուզրում: Սենակ էս ժամին փոշեծծիչ միացրած շինեին, որն առած թեզ սենյակից սենյակ են քշում մաքրելու պատրվակով:

Աստիճաններով բարձրանալիս ականջս ձեմի էր: Բայց ձեն չկար. սովորական ձեմեր էին: Մեր հարկում կանգ առա ու ինձ թափ տվեցի: Ինչ-որ բան ինձ նեղում էր. գոտի՞ն էր պինդ ձգած, թէ՞ ինչ: Կամ էլ խմիչքն էր հասել կոկորդիս: Համենայն դեպս, գոտիս բոլացրի, կանգնեցի մի քիչ, նոր փորձեցի դուռը բացել: Եթե կարողանամ բանալիվս բացել, ուրեմն, ներսից բանալին համել են՝ ինձնից հույսները կտրած: Էղ ժամանակ կորախանան, որ գոնե կեսզիշերից շուտ եմ եկել:

Բանալիներիս կապոցը գոտուս է ամրացված, խուսափում եմ ամեն անգամ համել, քանի որ մետաղե լեզվակը պինդ է, ու կարող է գործից ջարդվել: Բայց առանց բանալիները գոտուց անջատելու դուռը բացելն է դժվար: Որովհետև բանալին մի պտույտ հանգիստ անում է բայց երկրորդին կարող է լրվել կապոցի մյուս բանալիների մեջ: Էղ ժամանակ արդեն ինքդ պետք է պտտվես, որ բանալին շարժվի ու դուռը բացի:

Շիշտ է, միշտ հաջողվում է բացել: Վերջին րոպեին մեկ էլքանալին մի քիչ կշարժվի, որու էլ ժամացույցի պաքի հակառակ կրեքվես, ու արդեն հանգիստ կարող ես անցնել ներս:

Բանալին մտցրի անցրը. իմ բախտից ներսից բանալի չկար: Սահուն պտտեցի երեկու անգամ կողքով դրանը կպած:

Տանը փոշեծծիչի աղմուկ չորսացի: Սիջանցրում վերաբերուս համեցի, ճաշանենյակ գնալուց տեսա, որ սենյակիս դուռը կիսաբաց է: Գլուխս մտցրի (լուսը դեռ փառն էր), տեսնեմ նստած եմ ներսը: Իմ տեղում չէի համակարգիչի առաջ, այլ սուրճի փոքր սեղանի մոտ: Նստած էի սեղանին հակառակ, բայց ոչ թե աքոռին հեծած, այլ՝ կողքանց: Հազիս կանաչ պոլիսթիկից ձմեռային խշշան բաճկոն էր, զիշխս՝ դահուկորդի սև զիշարկ, օճիքիս վրայից կապած էր կարմիր վզնոց, շալվարս դարշնագույն էր, աչքերիս՝ դարշնագույն մեծ ապակիներով արևային ակնոց: Դրանցից ոչ մեկից ես շունեի: Ոչ էլ սիրում էի: զգվում էի: Զհաշված՝ որ զիշարկիս տակից ցցված հարդագույն ուղիղ մագերը ոչ մի կապ չունեին իմ սև մազերի հետ:

Տեսա, որ նստած էի ուտքիս զցած, որի պատճառով շալվարիս փողքը վեր էր բաշվել, և նրա ու սապոզիս միջև բացվել էր սրունքը. այն, երկի ամրող մարմնիս նման, վարդագույն գուտապերչից էր:

Ակզրում ուզեցի ներս զնալ, բայց հետո միտքս փոխեցի ու մտա հյուրասնյակ:

2001թ. հունվարի 5

Երկար ժամանակ, թերևս դարեր շարունակ հայ գրողը ազգային հոգսերի օղագոտու մեջ էր գտնվում:

Այսօր, երբ կիորիչուստն նախանձվել են Հայաստան-Երկրի ցազաքերը, օղագոտուց դուրս գալու միտումը իր ընթացքն է առնում: Վահրամ Մարտիրոսյանի «Սողանք» վեղը, ունենալով ազգային կենսաբանական արխիտեկտոնիկա, այդ ուղու վրա է: Թուլացնելով օղագոտին, միտում է մտնել ավելի տարածուն և այլակազմ բերի տակ՝ ընդհանրացած մարդու բերի տակ: Թեղետ այս դարագան ևս ունի իր օղագոտին, սակայն նրա դարագիծը ավելի ընդգրկուն է: Նրա արգելափակոցը դահղանուն է մարդ-արարածի բարոյականությունը, նրա լինելության նորմերը:

«Սողանք» վեղն իր առանձնահատուկ տեղն ունի մեր այսօրվա գրականության մեջ:

*Աղասի Այվազյան*

Զգիտեմ Վահրամ Մարտիրոսյանի «Սողանք» վեղը բացե՞լ է «նոր էջ 20-րդ (կամ գուցե 21-րդ) դարի հայ գրականության մեջ», թե՞ չի բացել: Մի բան գիտեմ. գիրքը կարդացի շատ արագ և դժգոհում էի, երբ առօյ գործերն ինձ տեղում էին կարդալուց: Շեղվելուց զգում էի, որ սկսում եմ խոսել հերոսների բառապաշտով եւ ինտոնացիաներով:

*Մրամ Արքահամյան*

Հայերեն գրի սղառնան դատկերացումները փոխեց Վահրամ Մարտիրոսյանի «Սողանք» վեղը: Տեղական մասշտաբների համեմատ այն կարելի է համարել վերջին 10 տարիների առաջին բնասելերը:

*Վահան Իշխանյան*

...չի դատկերացնում, թե հեղինակն ինչո՞ւ կարող էր «Սողանքից» հաջողությամբ «տեղափոխվել» միջնադար... Սկսեցի կարդալ «Հանուն խաչի ծովածները» և տարվեցի, սուզվեցի Բեհեսնի ամրոցի կյանքի մեջ, սկսեցի աղբել գրի հերոսների կյանքով: Վեղի ոճն աղտևուցիչ է հավատում ես, որ կարդում ես հենց իր՝ բահանայի զգացածի ու տեսածի շարադրանքը: Գիրքը կարդալուց ու փակելուց հետո, մեջդ գերիշխում է երկու զգացում ափսոսանք, որ վեղն ավարտվեց եւ ընորհակալության առ Վահրամ Մարտիրոսյան:

*Մեր Գրիգորյան,  
տեխնիկական գիտությունների դոկտոր, դրոֆեսոր*

«Հանուն խաչի ծովածները» վեղը՝ հղացված որդես դարականոն ժամանակագրություն, նորարարական է տարբեր իմաստներով, ընթերցողին գրավում է դատմությամբ գցված հայացքի թարմությամբ, և, իմ կարծիքով, մեկն է ետխորհրդային ցրջամի սակավաթիվ ստեղծագրծություններից, որոնք մօակութային արտահայտության նոր հնարավորություններ են բացահայտում:

*Հրաչ Բայադյան*

«Հանուն խաչի ծովածները» ըստ ձևի դարձ կառուցվածք ունի, բայց գրեթե անդարագիծ է բովանդակային շերտերով: Դա վեղ-համարակեր է, ուր գիտակցության հոսքի իմտելեկտուալ հագեցումները զգացական հաճույքի են փոխարկվում՝ գեղարվեստուն նրբահյուս ոճի, մարդու ու թօված խոսքի շարադրանքում:

*Անգելյան Սարինյան,  
ակադեմիկոս*

# ԲՈՎԱՆԴՎԿՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

3

ՓԾՐՎՆՔ

45

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐ

[Ran out of memory]

46

ԶՈՒԿԸ

48

ԽՈՒԺՎՈ

49

ԿԻՍՎԳՈՒՆԴԸ

52

ԸՆԿԵՐԸ

53

ԱՎԵԼՈՎԸ

55

ԽՎԽՏՈՒՄԸ

56

ԵՄ

58